Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ « ԲԻՒԶԱՆԴԻԱՆ » ԳՐԱՏԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Հ[illegible] ՈՒԽՏԻ

448

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ ՀԱՄԱՐ

« Եկայք որդեակք իմ եւ լուարուք ինձ. եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ »:

ՍԱՂՄՈՍ

ՀԱՏՈՐ Ա.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՑ
Միաբան Մողնւոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ ի Տփխիս

معارف نظارت جليله‌سنك رخصتيله طبع اولنمشدر

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ. Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
1892

2(075)
Ս-15

ՅՈՎՀԱՆ Կ. Ա[illegible]ԵԱՆ
ԳՐԱՎԱՃԱՌ
Զագմաճըլար Թիւ 39

2002

9018

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ « ԲԻՒԶԱՆԴԵԱՆ » ԳՐԱՏԱՆ

(075)
Ս-15

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ՀԻՆ ՈՒԽՏԻ

ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ ՀԱՄԱՐ

« Եկայք որդեակք իմ եւ լուարուք ինձ.
եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ »:
ՍԱՂՄՈՍ

ՀԱՏՈՐ Ա.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ
ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՑ
Միաբան Մողնւոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ ի Տփխիս

Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
1892

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԵՒ

ՄԱՍՆԱՒՈՐ ՀՐԱՄԱՆԱՒ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղեմայ

ՏԵԱՌՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ

ՏԵԱՌՆ ԽՈՐԷՆԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՇԸԳԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սուրբ Գրոց Պատմութեան ազգային վարժարանաց մէջ ուսումը՝ նպատակայարմար դասագրքի մը պէտքն ի վաղուց զգալի ըրած էր մեր մէջ։ Արժ. Սահակ Քահանայ Սահակեանցի սոյն հրատարակութիւնը, վերածեալ այս անգամ հաճութեամբ Հեղինակին ի մերս բարբառ Թուրքիոյ, ստացած է Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Սրբազնագոյն Կաթողիկոսի ամենայն Հայոց *մասնաւոր թոյլտուութիւնը* եւ *նորա քաղցր հաճութիւնը*, հետեւաբար պէտք չ'ունի բնաւ ուրիշ յանձնարարականի։

Բովանդակ Ռուսահայ վարժարանաց մէջ գործածուած սոյն միակ դասագիրքը, չ'էր կրնար անտես լինել Թուրքիոյ Հայոցս կողմանէ, զոր ջերմապէս յանձնարարեցին առ մեզ Գեր, Տ, Մելքիսեդեկ Սրբազան Արքեպիսկոպոս Մուրատեանց եւ Գեր. Տ. Մաղաքիա Սրբազան եպիսկոպոս Օրմանեան, առաջինն բանիւ բերանոյ եւ երկրորդն՝ գրաւոր։

Քաղցր է մեզ յուսալ որ ներկայ հրատարակութիւնս պիտի ծառայէ իւր նպատակին, այսինքն է՝ մեր ցանկացած կրօնական բարոյական իմաստները արմատացած տեսնելու հայկազն սանուց մտաց մէջ, եւ այս պատճառաւ է որ Արժ. Հեղինակն ջանացած ամեն կերպով պահպանել բնագրին ոճը, գեղեցիկ իմն համառօտելով Սուրբ գրոց ընդարձակ պարունակութիւնը։

Տա՛յ Աստուած, որ հասակով եւ սրտով մանուկները նոյնչափ սիրեն այս գրքոյկը՝ որչափ եւ սորա բնագիրը։

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, 31 Մայիս 1892

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔ

Ներկայ « Սրբազան պատմութեանս » նիւթի մշակութիւնը՝ տպագրուած է առանձին « Դասագիրք Կրօնի » անուամբ, ի պէտս ազգային դաստիարակաց եւ վաճառի « Բիւզանդեան » գրատան մէջ ի Ղալաթիա, Սեղբոս խան, թիւ 5· ի գին 25 դահեկանաց:

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

Ա·

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐ

Գլուխ ... Էջ

1 *Աշխարհի արարչագործութիւնը և մարդու ստեղծագործութիւնը* 9
2 *Դրախտ* 13
3 *Պատուիրանազանցութիւն* 14
4 *Կայէն և Աբէլ* 17
5 *Ջրհեղեղ* 18
6 *Բաբելոնի աշտարակաշինութիւնը* 22

Բ·

ՆԱՀԱՊԵՏԱՑ ԴԱՐ

Ա· ԱԲՐԱՀԱՄ

7 *Աստուած կը կոչէ զԱբրահամ* 24
8 *Աբրահամ և Ղովտ կը բաժնուին իրարմէ* 25
9 *Աբրահամ կ'ազատէ զՂովտ* 26
10 *Աստուծոյ խոստումն առ Աբրահամ* 27
11 *Աբրահամ կը բարեխօսէ Աստուծոյ՝ Սոդոմ և Գոմոր քաղաքաց համար* 30
12 *Սոդոմ եւ Գոմոր քաղաքաց կործանումը* 31
13 *Իսահակայ ծնունդն եւ զոհուիլն* 34
14 *Սառայի մահը* 36
15 *Իսահակայ ամուսնութիւնը* 37
16 *Աբրահամու մահը* 41

Բ· ԻՍԱՀԱԿ

17 *Եսաւ և Յակոբ* 42
18 *Յակոբայ խաբէութիւնը* 43

Գ. ՅԱԿՈՎԲ

19 Յակոբայ փախուստը 46
20 Յակոբայ տեսիլքը 48
21 Յակոբ՝ Լաբանի քով 49
22 Յակոբ կը փախչի Լաբանի քովէն 51
23 Եսաւի և Յակոբայ հաշտութիւնը 54

Դ. ՅՈՎՍԷՓ

24 Յովսէփ և իր եղբայրները 58
25 Յովսէփ՝ Պետափրէսի տունը 61
26 Յովսէփայ բարձրանալը 62
27 Յովսէփայ եղբայրներն Եգիպտոս կուգան 68
28 Յովսէփ կը յայտնուի եղբայրներուն 74
29 Յակոբ Եգիպտոսի մէջ 80
30 Յովսէփայ մահը 84

Գ.

ԴԱՏԱՒՈՐԱՑ ԴԱՐ

Ա. ՄՈՎՍԷՍ

31 Իսրայէլի նեղութիւններն Եգիպտոսի մէջ 86
32 Մովսէսի ծնունդը եւ ազատութիւնը 87
33 Մովսէսի փախուստը 89
34 Աստուած կը կանչէ զՄովսէս 91
35 Եգիպտոսէ ելնելը 93
36 Կարմիր ծովէն անցնիլը 97
37 Իսրայէլացիները կ'անցնին անապատէն 99
38 Յոթորի բարի խորհուրդը 103
39 Սինայի օրինատուութիւնը 104
40 Ոսկեղէն հորթը 109
41 Լրտեսք 111
42 Մովսէսի մահը 115

Բ. ՅԵՍՈՒ

43 Յեսու կը նուաճէ Քանանու երկիրը 118
44 Յեսուայ մահը 123

Գ. ՄԻՒՍ ԴԱՏԱՒՈՐՔ

45 Գեդէոն իբր Իսրայէլի դատաւոր 125
46 Սամփսոն 129
47 Հռութ 132
48 Հեղի եւ Սամուէլ 135

Դ.

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԴԱՐ

Ա. ՍԱՒՈՒՂ

49 Սաւուղայ թագաւորելը 142
50 Յովնաթանու քաջագործութիւնը 146
51 Սամուէլ կը հրաժարի պաշտօնէն 149
52 Սաւուղայ անհնազանդութիւնը 150

Բ. ՍԱՒՈՒՂ ԵՒ ԴԱՒԻԹ

53 Դաւթի թագաւոր ընտրուիլը 152
54 Դաւթի՝ Սաւուղայ արքունիքը գալը 153
55 Դաւիթ եւ Գողիաթ 154
56 Սաւուղ կ'ատէ, իսկ Յովնաթան կը սիրէ զԴաւիթ 158
57 Դաւթի մեծահոգութիւնը դէպ ի Սաւուղ 163
58 Սաւուղայ մահը 167

Գ. ԴԱՒԻԹ

59 Դաւթի թագաւորելը 170
60 Դաւթի մեղանչելը 173
61 Աբիսողոմ 176
62 Դաւթի մահը 180

Դ. ՍՈՂՈՄՈՆ

63 Սողոմոնի թագաւորելը 182
64 Սողոմոնի տաճարին շինութիւնը 185
65 Սողոմոնի փառքն, անկումը եւ մահը 188

Ե. ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՒ ՎԵՐՋԸ

66 Յերոբովամ և Ռոբովամ 191
67 Եղիա 194
68 Աքաաբ կը մեղանչէ Նաբովթի դէմ եւ Եղիա կը մեռնի 199
69 Իսրայէլի եւ Յուդայի թագաւորութեան կործանումը 202
70 Բաբելոնի գերութիւնը և վախճանը 207

Ա.

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ԴԱՐ

1.

Աշխարհի արարչագործութիւնը եւ մարդու ստեղծագործութիւնը

Ա.

Ա.

Աստուած ի սկզբանէ ստեղծեց երկինքն ու երկիր։ Երկիրն անպատրաստ էր եւ խաւարով ծածկուած։ Աստուած ըսաւ. «Թո՛ղ լոյս ըլլայ» եւ իսկոյն լոյս եղաւ։ Աստուած բաժանեց լոյսը խաւարէ. լուսոյ անունը դրաւ ցերեկ, իսկ խաւարինը՝ գիշեր։ Այսպէս ցերեկ եւ գիշեր կազմեցին առաջին օրը։

Բ.

Աստուած ըսաւ. «Թո՛ղ հաստատութիւն լինի ջրոց մէջ, որպէս զի բաժնուին իրարմէ։» Աստուած ստեղծեց հաստատութիւնը եւ բաժանեց անոր վրայի եւ ներքեւի ջուրերը իրարմէ։ Հաստատութեան անունը դրաւ երկինք։ Այսպէս

անցաւ ուրիշ ցերեկ մը և գիշեր մը ու բոլորեցաւ մի օր՝ երկրորդ օր։

Գ.

Աստուած ըսաւ. «Թո՛ղ երկնից ներքեւ գըտնըւած ջուրերը մի տեղ հաւաքուին. Թո՛ղ ցամաքը բաժնուի ջուրերէն։» Այսպէս ալ եղաւ։ Աստուած ցամաքին անունը դրաւ երկիր, իսկ ջուրերունը՝ ծով։

Աստուած ըսաւ. «Թո՛ղ երկրիս վրայ կանաչանան խոտեր, ծաղիկներ, պտղատու ծառեր եւ ամենքն ալ իրենց յատուկ պտուղները տան։» Այսպէս ալ եղաւ։ Անցաւ ուրիշ գիշեր մը և ցերեկ մը ու բոլորեցաւ մի օր՝ երրորդ օր։

Դ.

Աստուած ըսաւ. «Թո՛ղ երկնից երեսը լուսաւորներ երեւան ու երկիրս լուսաւորեն»։ Այն ժամանակ Աստուած պատրաստեց մեծ լուսաւոր մը՝ ցերեկը կառավարելու և փոքր լուսաւոր մը՝ գիշերը կառավարելու համար. բացի դոցանէ ստեղծեց նաեւ շատ աստղեր։ Այսպէս անցաւ ուրիշ ցերեկ մը եւ գիշեր մը ու բոլորեցաւ մի օր՝ չորրորդ օր։

Ե.

Աստուած ըսաւ. «Թո՛ղ ջուրերը լցուին ձկներով, իսկ օդը՝ թռչուններով»։ Այն ժամանակ ջուրերը լեցուեցան բազմաթիւ կենդանիներով, իսկ օդին մէջ կը թռչէին ամեն տեսակ թռչուններ։ Այսպէս անցաւ ուրիշ ցերեկ մը եւ գիշեր մը ու բոլորեցաւ մի օր՝ հինգերորդ օր։

Զ.

Աստուած ըսաւ. «Թո՛ղ երկրիս վրայ՝ լինին չորքոտանի կենդանիք, գազանք եւ զեռունք»։ Այսպէս ալ եղաւ։

Աստուած ըսաւ. «Եկէ՛ք մարդ ալ ստեղծենք» եւ ստեղծեց մարդը։

Աստուած նայեցաւ իւր բոլոր ստեղծուածոց վրայ ու տեսաւ որ ամենքն ալ բարի են։ Անցաւ ուրիշ ցերեկ մը եւ գիշեր մը ու բոլորեցաւ մի օր՝ վեցերորդ օր։

—

«Զի նա ասաց եւ եղեն, ինքն հրամայեաց և հաստատեցան»։ Սաղ. լբ. 9.

Ինչպէս որ Աստուած ըսաւ, այնպէս ալ եղաւ, հրամայեց ու կատարուեցան։

«Որպէ՜ս զի մեծ են գործք քո, Տէր, զամենայն ինչ իմաստութեամբ արարեր եւ լցաւ երկիր ստեղծուածովք քովք»։ Սաղ. ճդ. 24.

Ինչպէս մեծ են քու գործերդ, Աստուա՛ծ իմ, դու ամենայն բան իմաստութեամբ ստեղծեցիր ու երկիրը լեցուեցաւ քու ստեղծուածներով։

Բ.

Ա.

Աստուած ըսաւ. «Եկէ՛ք մարդ ալ ստեղծենք, որպէս զի նա իշխէ ծովու ձկանց, երկնքի թռչնոց, անասնոց եւ զեռնոց որք կը սողան ամբողջ երկրիս վրայ։»

Բ.

Աստուած ստեղծեց զմարդ՝ իւր պատկերի նման, առաւ երկրէս հող ու կենդանի շունչ փըչելով անոր՝ տուաւ անմահ հոգի եւ անունը դըրաւ Ադամ։

Գ.

Աստուած ըսաւ. «Լաւ չէ մարդու համար, որ միայնակ ըլլայ, ստեղծենք Ադամի նման մէկը, որ անոր օգնական ըլլայ»։ Այն ժամանակ Աստուած զԱդամ քնացուց, հանեց նորա կողերէն մին ու անոր համար մի օգնական՝ կին ստեղծեց, անունը դրաւ Եւա ու բերաւ Ադամի մօտ։ Աստուած օրհնեց զանոնք եւ ըսաւ. «Աճեցէ՛ք, բազմացէ՛ք եւ լեցուցէ՛ք երկիրը ու տէր եղէ՛ք բոլոր անասնոց, թռչնոց եւ զեռնոց»։

Դ.

Այսպէս Աստուած երկինքն ու երկիր իւր բոլոր պարագայներովը՝ վեց օրուան մէջ ստեղծեց, իսկ եօթներորդ օրը հանգիստ ըրաւ։

—

«Խոստովան եղէց քեզ, Տէր, զի ահեղ եւ սքանչելի ես. սքանչելի են գործք քո, եւ անձն իմ սիրեաց յոյժ»։ Սաղ. ճլը. 14.

Խոստովանիմ քեզ, Աստուա՛ծ, որ դու մեծ ես եւ հրաշալի, զարմանալի են քու գործերդ եւ ես սիրեցի զքեզ շատ եւ շատ։

«Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նախ նա սիրեաց զմեզ»։ 1. Թ. Յովհ. դ. 19.

Մենք պէտք է սիրենք զԱստուած, որովհետեւ նա ինքն առաջ սիրեց զմեզ։

2.

Դրախտ

Աստուած տնկեց Եդեմի մէջ գեղեցիկ պարտէզ մը, անունը դրախտ դրաւ եւ զարդարեց զայն ամեն տեսակ ծառերով։ Ծառերը շատ գեղեցիկ էին եւ հիանալի պտուղներ ունէին։ Աստուած բնակեցուց զԱդամ եւ Եւա այդ պարտէզին մէջ, որպէս զի մշակեն զայն, պահեն եւ պահպանեն։

Երբ Աստուած ստեղծեց ամեն տեսակ կենդանիներ եւ թռչուններ, պատուիրեց Ադամայ և եւ Եւայի, որ խնամք տանին անոնց վրայ։ Ադամ տեսնելով բոլոր կենդանիները, նոցա իւրաքանչիւրին յարմար անուններ տուաւ։

Պարտէզին մէջտեղը երկու ծառեր կային — «Ծառ կենաց» եւ «Ծառ գիտութեան՝ բարւոյ և չարի» անուամբ։

Աստուած պատուիրեց Ադամայ ու Եւայի եւ ըսաւ. «Պարտէզին մէջի բոլոր ծառոց պտուղներէն կարող էք ուտել, բայց ի այն մէկ ծառի պտուղէն, որոյ անունը ծառ գիտութեան բարւոյ եւ չարի է, երբոր ուտէք անկէ՝ իսկոյն կը մեռնիք։»

—

«Զանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանըս նորա պահեսցուք, եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»։ Թ. Յովհ. ե. 3.

Այնու կարող ենք ցոյց տալ Աստուծոյ թէ զինքը կը սիրեմք՝ եթէ նորա պատուիրանները պահեմք, խկ նորա պատուիրանները ծանր բաներ չեն։

3.

Պատուիրանազանցութիւն

Ա.

Օձը երկրիս վրայի բոլոր կենդանեաց խմաստնագոյնն էր. նա եկաւ Եւայի մօտ եւ ըսաւ. «Ուղի՞ղ է որ Աստուած ձեզ ըսեր է, թէ պարտէզին մէջի բոլոր ծառոց պտուղներէն չուտէք»։ Կինը պատասխանեց օձին. «Պարտէզին մէջի բոլոր ծառոց պտուղներէն իրաւունք ունինք ուտելու, բաց ի այն ծառին պտղէն, որ պարտէզին մէջտեղն է, եթէ անկից ուտենք կը մեռնինք»։ Օձը կրկին խօսեցաւ կնոջ հետ եւ ըսաւ. «Դուք չէք մեռնիր, ընդհակառակն եթէ ուտէք, դուք ալ Աստուած կը դառնաք և կ՚իմնաք թէ ո՛րն է բարին եւ ո՛րն է չարը։»

Բ.

Կինը հաւատաց օձին, կարծեց թէ այդ ծառին պտղէն ուտելը լաւ է. երեւի մի նշանաւոր ծառ պիտի լինի, որ նորա պտուղն ուտողը իմաստուն կը դառնայ, ուստի խլեց պտուղը եւ

կերաւ, կինը՝ մարդուն եւս տուաւ այդ պտուղէն, նա ալ առաւ եւ կերաւ։

Գ.

Անմիջապէս լսեցին Աստուծոյ ոտնաձայնը



պարտէզին մէջ. վախցան եւ ամաչեցին, և անոր համար ալ փախան։ Երբ Աստուած զայս տեսաւ, ձայն տուաւ Ադամայ եւ ըսաւ. «Ո՞ւր ես»։ Ադամ պատասխանեց. «Կը վախնամ, ադոր համար

ծածկուեցայ»։ Աստուած ըսաւ. «Մի՛ գուցէ այն ծառին պտղէն կերած ըլլաս»։ Ադամ պատասխանեց. «Այս կինը, որ դու ինձ տուիր, նա՛ տըւաւ ինձ եւ ես կերայ»։ Աստուած կնոջն ըսաւ. «Այդ ի՞նչ ըրիր»։ Կինը պատասխանեց. «Օձը խաբեց զիս եւ ես ալ կերայ։»

դ.

Այն ժամանակ Աստուած ըսաւ օձին. «Անիծեալ ըլլաս բոլոր կենդանեաց մէջ. փորիդ վրայ սողաս և հող ուտես քու ամբողջ կեանքիդ մէջ»։ Յետոյ դարձաւ դէպ ի կինը և ըսաւ. «Քու վիշտերդ պիտի շատցնեմ, ցաւով որդի պիտի ծնիս.» Իսկ Ադամայ դառնալով ըսաւ. «Որովհետեւ դու ինձ չը լսեցիր, այդ պատճառաւ այն հացի պատառը զոր պիտի ուտես, երեսիդ քրտինքովը ձեռք պիտի բերես մինչեւ որ կրկին հող դառնաս, ուստի ստեղծուեցար։»

Այնուհետեւ արտաքսեց Աստուած զԱդամ ու Եւա դրախտէն. Նոքա սկսան հողագործութեամբ պարապիլ, իսկ դրախտին դուռը՝ ձեռքը հրեղէն սուրով հրեշտակ մը պահապան դրաւ։

—

«Ոչ թէ դու Աստուած կամիս զանօրէնութիւն, և ոչ բնակին առ քեզ չարք, մի՛ անօրէնք բնակեսցին առաջի աչաց քոց»։ Սաղ. ե. 5.

Աստուա՛ծ, դու անօրէնութիւն չես սիրեր, դու չար բան չես մտածեր, դու չես ներեր, որ անօրէնները քու աչքիդ առջեւ լինին։

«Աստուած հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց»։ Թ. ա. Հռմ. բ. 6.

Աստուած իւրաքանչիւրին՝ իւր գործին համեմատ կը հատուցանէ։

4.
Կայէն եւ Աբէլ

ա.

Ադամ եւ Եւա երկու որդի ունեցան — առաջնոյն անունն էր Կայէն, իսկ երկրորդինը՝ Աբէլ։ Աբէլ խաշնարած էր, իսկ Կայէն՝ երկրագործ։ Մի անգամ երկու եղբարք Աստուծոյ զոհ բերին — Կայէն իւր մշակած դաշտի պտուղներէն, իսկ Աբէլ իւր խաշանց անդրանիկ գառներէն։ Աստուած Աբէլի մատաղը սիրով ընդունեց. իսկ Կայէնինը՝ ոչ։ Այս բանիս վրայ Կայէն շատ բարկացաւ. Աստուած ըսաւ Կայէնին. «Ինչո՞ւ այդպէս տրտմեր ես, ինչո՞ւ քու դէմքդ փոխուեր է, եթէ դու բարի գործես, Աստուած կը սիրէ, իսկ եթէ ոչ՝ յանցաւոր կ՚ըլլաս։»

բ.

Չնայելով Աստուծոյ այս խօսքերուն, Կայէն դարձեալ ոխը սիրտէն չհանեց և մի անգամ երբ դաշտն էին, զարկաւ և սպաննեց Աբէլը։

Այն ժամանակ Աստուած ըսաւ Կայէնին. «Ո՞ւր է քու Աբէլ եղբայրդ»։ Կայէն պատասխանեց.«Չը գիտեմ, մի՞թէ ես անոր պահապանն եմ»։ Աստուած ըսաւ անոր. «Քու եղբօրդ արեան ձայնը կը բողոքէ ինձ, երկրիս վրայ անիծեալ ըլլաս դու. քու մշակած ագարակդ թող պտուղ չտայ. երերեալ եւ տատանեալ շրջիս։»

Гос. библиотека

Անուհետեւ՝ Կայէն իսկոյն հեռացաւ հոնկէ եւ գնաց ուրիշ երկիր մը։ Աստուած Ադամին ու



Եւային ուրիշ զաւակ մ'ալ պարգեւեց, զոր անուանեցին Սէթ. սորա յաջորդները բարեպաշտ մարդիկ էին։

—

«Ամենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է»։ 1. Թ. Յովհ. գ. 15.

Ով որ զիւր եղբայրն ատէ, նա մարդասպան է։

5.

Ջրհեղեղ

Ա.

Մարդիկ երկրիս վրայ կամաց կամաց կը բազմանային, ուստի և երկիրը անոնց բնակութեան

համար հետզհետէ չէր բաւեր։ Այս մարդիկ երթալով կը չարանային — Նոքա զԱստուած բոլորովին մոռցան, անոր բաներն այլ եւս չէին կատարեր։ Աստուած երկար ժամանակ համբերեց, բայց երբ նոցա չարութեան չափն անցաւ, Աստուած ըսաւ. «Ես այդ մարդիկը պէտք է ջնջեմ երկրիս երեսէն»։ Այդ միեւնոյն ժամանակին կ'ապրէր Նոյ անունով մարդ մը, որ Սէթի ցեղէն էր. Նա շատ բարեպաշտ էր եւ դորա համար ալ Աստուած կը սիրէր զինքը։

Բ.

Այն ժամանակ Աստուած Նոյի ըսաւ. «Ես կ'ուզեմ ջրհեղեղով կործանել այդ չար մարդիկը. դու քեզ համար մի տապան շինէ՝ բազմաթիւ սենեակներէ բաղկացած, կուպրով ծեփէ զայն թէ դրսէն ու թէ ներսէն։ Այդ տապանի մէջ կը մտնես դու և քու զաւկներդ, բաց ի դոցանէ կ'առնուս ամեն տեսակ կենդանիներէ մէկ մէկ զոյգ, նոյնպէս ամեն տեսակ կերակուր՝ թէ քեզ եւ թէ կենդանեաց համար»։ Նոյ ալ այնպէս կատարեց, ինչպէս որ Աստուած հրամայեր էր։

Գ.

Երբ նաւը պատրաստ էր, Աստուած Նոյի ըսաւ. «Մտի՛ր տապան՝ քու ամբողջ ընտանեօքդ։» Նոյ ալ մտաւ տապան իւր երեք զաւկներուն, կնոջ եւ հարսներուն հետ. ներս առաւ նմանապէս եւ ամեն տեսակ կենդանի։

Անուհետեւ սկսաւ սաստիկ անձրեւ գալ. երկրիս վրայի բոլոր աղբիւրները բացուեցան եւ

քառասուն օր եւ քառասուն գիշեր շարունակ անձրեւեց. Ջուրը բարձրացաւ եւ տապանը ըսկըսաւ լողալ ջուրին երեսը. Ջուրը այնքան բարձրացաւ՝ որ ամենաբարձր լերանց գագաթներն անգամ ծածկուեցան. ոչ մէկ կենդանի, ոչ մէկ մարդ չմնաց, առհասարակ խղդուեցան։

Դ.

Հարիւր յիսուն օր ջուրն այսպէս ծով դարձած՝ երկրիս երեսը ծածկած մնաց։ Աստուած



տեսնելով Նոյի վիճակը, հրամայեց քամիներուն փչել. փակուեցան բոլոր աղբերակունք, եւ անձրեւք կամաց կամաց դադրեցան. Ջուրն ալ ըսկըսաւ իջնալ ու ցածնալ։ Տապանը լողալով՝ Այրարատ (Մասիս) լերան վրայ հանգչեցաւ։ Նոյ բացաւ տապանին պատուհանը և մի ագռաւ ար-

ձակեց։ Ագռաւը ետ չդարձաւ։ Այնուհետև մի աղաւնի արձակեց, բայց որովհետեւ նա հանգչելու տեղ չգտաւ, ուստի ետ դարձաւ. Նոյ երկարեց իր ձեռքը ու ներս առաւ։

Եօթն օր յետոյ, Նոյ կրկին անգամ մի՛ աղաւնի թռուց։ Աղաւնին երեկոյեան դէմ վերադարձաւ՝ բերանը ձիթենւոյ չիւղ մը բռնած։ Նոյ եօթըն օր ևս սպասեց եւ կրկին աղաւնին արձա-



կեց. այս անգամ աղաւնին ետ չեկաւ։ Նոյ իմացաւ որ երկրիս երեսէն ջուրը ցամքիլ սկսեր է։

Ե.

Նոյ դուրս ելաւ տապանէն իր ընտանեօք. այն տեղ նա սեղան մը շինեց և զոհ մատոյց։

Այս բանն Աստուծոյ հաճելի եղաւ, ուստի և ըսաւ. «Այս օրէն սկսեալ՝ ես այլ ևս երկիրը չեմ

անիծեր մարդոց չարութեան համար։ Քանի որ երկիրս կայ, թո՛ղ ցանք ու հունձք անպակաս ըլլան, նոյնպէս ցուրտն ու տօթն, ձմեռն ու ամառ, տիւ եւ գիշեր թո՛ղ չարունակուին»։

Աստուած օրհնեց զՆոյ և անոր հետ դաշինք դրաւ, որ այսուհետեւ ջրհեղեղ պիտի չընէ։ «Այս աղեղը ես կը ձգեմ երկնից վրայ, նա թո՛ղ նշան լինի իմ և քու ուխտին եւ երբ ես՝ ամպերը երկրիս վրայ կը ժողվեմ, աղեղն իսկոյն կ'երեւայ և ես կը յիշեմ իմ ու քու ուխտը։»

Նոյ սկսաւ երկրագործութեամբ պարապիլ և այգի տնկեց։ Նա երեք որդի ունէր — Սեմ, Քամ և Յաբէթ։ Ասոնց որդիքը բազմացան և լցին երկիրը։

—

«Պահէ տէր զամենեսին ոյք սիրեն զնա, և զամենայն մեղաւորս սատակէ տէր»։ Սաղ․ ճխդ․ 20․

Աստուած զինքը սիրողները կը պաշտպանէ, իսկ մեղաւորները կը ջնջէ։

«Նուազեցուցանեն զազգս մեղք»։ Սող․ ԺԴ․ 34։

Մեղք՝ ազգաց նուազելուն պատճառ են։

6․

Բաբելոնի աշտարակաշինութիւնը

Ա․

Նոյի թոռները շատնալով՝ չուեցին դէպ ի արեւելք․ Եփրատ ու Տիգրիս գետոց մէջտեղ հանդիպեցան ընդարձակ դաշտավայրի մը, որոյ ա-

նունն էր Սենաար։ Այդ մարդիկն ամենքն ալ մէկ լեզու կը խօսէին եւ իրարու կ'ըսէին․ «Եկէ՛ք աղիւս պատրաստենք, թրծենք մեծ քաղաք մը ու մեծ աշտարակ մը շինենք, որոյ մէկ ծայրը երկինք հանի; իսկ միւսը երկրիս վրայ լինի․ այդ շէնքը մեր անունը պիտի անմահացնէ։»

Շինութիւնը սկսան։ Աստուած վերէն կը տեսնէր մարդկանց շինած գործը և ըսաւ․ «Ամեն անոնք՝ որոնք այս շինութեան մասնակից եղան, մի լեզուով կը խօսին իրարու հետ, ես կը խառնակեմ նոցա լեզուն, այնպէս որ այլ եւս զիրար չեն կարող հասկնալ։

Բ․

Այսպէս ալ եղաւ։ Շինութիւնը դադրեցաւ․ մարդիկ սկսան Բաբելոնէ հեռանալ ու կրկին ցրուիլ երկրիս զանազան կողմերը։

—

«Զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ»։ Ա․ Թ․ Պետ․ Ե․ 5․

Աստուած՝ ամբարտաւաններուն հակառակ է։

Բ.

ՆԱՀԱՊԵՏԱՑ ԴԱՐ

Ա.

ԱԲՐԱՀԱՄ

7.

Աստուած կը կոչէ զԱբրահամ

Ա.

Միջագետաց Խառան քաղաքին մէջ Աբրահամ անունով մարդ մը կ'ապրէր։ Նորա հայրը կռապաշտ էր, իսկ ինք՝ աստուածապաշտ։ Աստուած ըսաւ Աբրահամին. «Թո՛ղ քու հայրենիքդ, քու բարեկամներդ, քու հօրդ տունը և գնա՛ այն երկիրը զոր ես քեզ ցոյց պիտի տամ. ես կ'ուզեմ քեզմով մեծ ազգ մը ձեւացնել. զքեզ պիտի օրհնեմ, քու անունդ ամեն տեղ պիտի տարածեմ, քու ձեռքովդ պէտք է օրհնուին երկրիս վրայ ամեն ազգերը»։

Բ.

Այնուհետեւ Աբրահամ ելաւ իր Սառայ կնոջ հետ, հետն առաւ իր եղբօրորդի Ղովտն և ուրիշ ինչ որ ունէր և հեռացաւ դէպ ի Քանանու երկիրը։ Երբ Քանանացւոց երկիրը եկաւ ու Սիւքէմ կոչուած հովիտը հասաւ, Աստուած երեւցաւ Աբրահամու եւ ըսաւ. «Այս երկիրը

քեզի և քու որդւոցդ պիտի տամ»։ Աբրահամ այն տեղ սեղան շինեց եւ Աստուծոյ անունը փառաբանեց։

—

«Յայտնեա՛ առաջի Տեառն զճանապարհս քո և յուսա՛ ի նա»։ Սաղ. լզ. 5.

Աստուծոյ յանձնէ քու ճամբադ և յոյսդ նորա վրայ դիր։

«Զի օրհնեցես դու զարդարն Տէր»։ Սաղ. ե. 13։

Դու արդարները կ'օրհնես Աստուած։

8.

Աբրահամ եւ Ղովտ կը բաժնուին իրարմէ

Աբրահամ հարուստ մարդ մ'էր, ունէր բազմաթիւ խաշներ, շատ մը ոսկի և արծաթ։ Ղովտ եւս հարուստ էր, ունէր բազմաթիւ խաշներ, եզներ ու կովեր, բայց որովհետև իր բնակութեան երկիրը այնչափ փոքր էր որ իր խաշանցը նաև չէր բաւեր, դորա համար միշտ կռիւ և գժտութիւն կը պատահէր Ղովտի եւ Աբրահամու հովուաց մէջ։

Մի անգամ Աբրահամ ըսաւ Ղովտին. «Ի՞նչ պէտք մեր հովուաց մէջ կռիւ պատահի, չէ՞ որ մենք ազգական ենք. լաւագոյն է բաժնուինք, եթէ դու ձախ կողմը կ'երթաս, ես յաջ կ'երթամ. իսկ եթէ յաջ կ'երթաս, ես ձախ կ'երթամ»։

Ղովտ ընտրեց իրեն առջեւ տարածուող պար-

տեղի նման սիրուն Յորդանանու պտղաւէտ եւ ջրաշատ հովիտը։ Այսպէս երկուքն ալ բաժնուեցան իրարմէ։ Աբրահամ բնակեցաւ Քեբրոնի մօտ Յորդանանու հովտին մէջ եւ իր վրանները կը հասնէին մինչեւ Սոդոմ քաղաքը։ Այս քաղաքի բնակիչք շատ վատ մարդիկ էին, անոնք Աստուծոյ ճամբէն չէին երթար։

—

«Երանի՜ խաղաղարարաց»։ Մատ. Ե. 9.
Երանի՜ խաղաղութիւն սիրողներուն։

Թ.

Աբրահամ կ՚ազատէ զՂովտ

Պատահեց որ չորս թագաւորք Աղի Ջուրի (Սիդդիմ) վրայ յարձակեցան։ Սոդոմ եւ Գոմոր քաղաքաց թագաւորք ելան նոցա դէմ պատերազմելու։ Երկու թագաւորք յաղթուեցան, ժողովուրդը լեռները փախաւ։ Թշնամին աւար առաւ Սոդոմև Գոմոր քաղաքաց հարստութիւնը։ Ղովտ եւս գերի ընկաւ իր խաշներով։

Այդ պատերազմէն մարդ մը միայն ազատեցաւ, եկաւ Աբրահամու իմաց տուաւ, որ իր եղբօրորդին Ղովտ գերի ընկած է։ Աբրահամ երբ այս բանն իմացաւ, հաւաքեց ծառաներն, թուով երեք հարիւր տասն եւ ութը, ընկաւ թշնամւոյն ետեւէն եւ գիշեր ժամանակ յարձակելով անոնց

վերայ՝ ջարդեց թշնամին եւ ետ առաւ բոլոր աւարը. միանգամայն ազատեց զՂովտ, նորա կանայքն եւ պարագայքը։

Երբ Աբրահամ պատերազմէն կը վերադառնար, Սոդոմի թագաւորը նորա առջեւը ելաւ ու ըսաւ. «Գերի առած մարդիկդ ինձ, իսկ աւարը քե՛զ լինի»։ Աբրահամ պատասխանեց. «Կ՚երդնում Աստուծոյ անուամբ, որ ես քու ստացուածոցդ վերայ աչք չունիմ, մի արեխի թել անգամ չեմ առնուր քու հարստութենէդ»։ Աբրահամ վերադարձաւ տուն։

—

«Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո»։ Գ. Մովս. ժը. 18.
Քու ընկերդ պէտք է քու անձիդ պէս սիրես։

10

Աստուծոյ խոստումն առ Աբրահամ

Ա.

Այնուհետեւ Աստուած երեւցաւ Աբրահամու եւ ըսաւ. «Մի՛ վախեր, Աբրահա՛մ, ես քու պահապանդ եմ, ես զքեզ կը վարձատրեմ»։ Աբրահամ պատասխանեց. «Տէ՛ր, ի՞նչ պիտի տաս ինձ, ես ծերացած եմ, մահս մօտ է, անզաւակ պիտի մեռնիմ, իսկ իմ ծառայ Եղիազարի որդին ժառանգս պիտի լինի»։

Աստուած ըսաւ. «Եղիազարին որդին քու ժառանգդ չըլլար, այլ քու որդիդ պէտք է քեզ ժառանգ լինի»։ Աստուած հրամայեց Աբրահամու դուրս գալ վրանէն եւ ըսաւ. «Նայէ Աբրահա՛մ, համրէ այդ աստղերը եթէ կարող ես համրել. այսպէս ալ քու զաւակներդ պիտի բազմացնեմ»։ Աբրահամ հաւատաց Աստուծոյ ըսածին։

Աստուած ըսաւ. «Ես քու Աստուածդ եմ. ես կ'ուզեմ քեզ հետ դաշինք դնել և քու զաւակներդ բազմացնել. ես կ'ուզեմ դաշինք դնել քու ժառանգացդ հետ եւ Քանանացւոց աշխարհը՝ ուր որ դու իբրեւ օտարական կ'ապրիս, նոցա տալ»։

Բ.

Մի անգամ՝ կէս օրուան սաստիկ տաքի ժամանակ Աբրահամ նստած էր վրանին դրան առաջը, որ կը գտնուէր Մամբրէի անտառին մէջ։ Աբրահամ վեր նայեցաւ եւ տեսաւ որ երեք անցորդներ հեռուանց դէպ ի ինքն կու գան, իսկոյն վազեց անոնց ընդ առաջ, երկրպագեց եւ ըսաւ. «Եթէ Ձեր ծառան կը յարգէք, առանց նորա վրանը մտնելու մի՛ անցնիք. հանգչեցէք փոքր ինչ այս ծառին տակ. ես ջուր կը բերեմ և ձեր ոտքերը կը լուամ. փոքր ինչ նախաճաշիկ կ'ընէք եւ յետոյ դարձեալ ձեր ճանապարհը կը շարունակէք»։ Նոքա պատասխանեցին. «Թող այդպէս լինի»։

Աբրահամ շտապեց դէպ ի վրանը՝ Սառային մօտ ու ըսաւ. «Փութա՛ և թարմ ալիւրէ մի քանի նկանակ թխէ», իսկ ինք գնաց անդէից մօտ,

մի մատաղ երինջ բերաւ և ծառայից տուաւ որ մորթեն եւ հիւրերուն կերակուր պատրաստեն։ Աբրահամ բերաւ կարագ, կաթ եւ հորթի մսէ պատրաստած կերակուր, դրաւ հիւրերուն առաջը ծառի մը տակ եւ անոնք ալ կերան։

Այն ժամանակ հիւրերն ըսին Աբրահամու. «Ո՞ւր է քու կինդ Սառան». Նա պատասխանեց. «Վրանին մէջ է»։ Հիւրերէն մէկը ըսաւ. «Եկող տարի այս ժամանակ Սառա որդի մը պիտի ունենայ»։ Սառա որ վրանին դրան ետեւ կանգնած էր, ծիծաղեցաւ ինքնիրեն այս խօսքին վրայ։ Այն ժամանակ Տէրն հարցուց Աբրահամու. «Սառա ինչո՞ւ կը ծիծաղի, մի՞թէ Աստուծոյ համար անկարելի բան կայ»։ Օտարականները ելան եւ գնացին։

—

«Երանի՜ որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատասցեն» ։ Յովհ. ի. 29.

Երանի՜ անոնց, որոնք չեն տեսած, բայց կը հաւատան ։

«Ուղիղ են պատգամք Տեառն, եւ ամենայն գործք նորա հաւատովք են» ։ Սաղ. լբ, 4.

Աստուծոյ խօսքերը ճշմարիտ են, ինչ որ նա կ'ըսէ կը կատարուի ։

11.

Աբրահամ կը բարեխօսէ Աստուծոյ՝ Սոդոմ եւ Գոմոր քաղաքաց համար

Օտարականները գնացին դէպ ի Սոդոմ, Աբրահամ ալ մէկտեղ գնաց անոնց ընկերանալու համար։ Աստուած ըսաւ. «Ի՞նչ ծածկեմ միտքս իմ ծառայ Աբրահամէն, Սոդոմ եւ Գոմոր քաղաքաց մարդոց անկարգութեան չափն անցաւ, պէտք է պատժեմ այս մարդիկը որ խրատ ըլլան իրենց որդւոց»։

Երկու ճանապարհորդք գնացին դէպ ի Սոդոմ, իսկ Աբրահամ Աստուծոյ առջեւ կանգնեցաւ ու ըսաւ. «Միթէ դու արդարներն մեղաւորաց հետ միասին պիտի դատապարտե՞ս. եթէ քաղաքին մէջ յիսուն արդար ըլլայ, միթէ չե՞ս ներեր եւ միւսներուն. քա՛ւ լիցի, դու արդարներն մեղաւորաց հետ միասին չես պատժեր. դու որ ամենուն դատաւորն ես, այսպէս չես վարուիր»։ Աստուած պատասխանեց. «Եթէ քաղքին մէջ յիսուն արդար գտնեմ, անոնց սիրոյն համար միւսներուն ալ կը ներեմ»։

Աբրահամ նորէն խօսեցաւ ու ըսաւ. «Ես այժմ Աստուծոյ հետ կը խօսիմ. ես նորա ոտից հողն ու մոխիրն եմ, թերեւս այն տեղ քառասուն արդար լինի»։ Աստուած պատասխանեց. «Քառասունի համար ալ չեմ դատապարտեր»։ —«Իսկ եթէ երեսուն հոգի գտնուին».— «Եթէ երեսուն

հոգի գտնուին, դարձեալ ոչինչ չեմ ըներ։» — Աբրահամ դարձեալ ըսաւ. «Եթէ քսան հոգի գտնուի՞ն»։ Աստուած պատասխանեց. «Քսանի համար եւս չեմ պատժեր»։

Աբրահամ կրկնեց. «Մի՛ բարկանար, Տէ՛ր, եթէ մի անգամ ալ խօսիմ. իսկ եթէ տասը հոգի լինի՞ն»։ Աստուած պատասխանեց. «Տասնի համար եւս չեմ պատժեր։»

Երբ այս խօսակցութիւնը վերջացաւ, Աստուած աներեւութացաւ, երկու հրեշտակները գնացին դէպ ի Սոդոմ, իսկ Աբրահամ իւր վրանը դարձաւ։

—

«Եւ արդ աղաչեմ նախ քան զամենայն՝ առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն ամենայն մարդկան»։ Տիմոթ. բ. 1–2.

Այժմ կաղաչեմ ամեն բանէ առաջ աղօթք, խնդրուածք և աղաչանք ընել ամեն մարդոց համար։

«Բայց ոչ իմ կամք այլ քոյդ լիցին»։ Ղուկ. իբ. 42.

Ոչ թէ իմ կամքս, այլ քուկդ թո՛ղ ըլլայ։

«Մերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա»։ Սաղ. ճխդ. 18.

Աստուած մօտիկ է ամեն անոնց որոնք զինքը կը կանչեն։

12.

Սոդոմ եւ Գոմոր քաղաքաց կործանումը

Երկու հրեշտակները երեկոյեան ժամանակ Սոդոմ քաղաքը հասան. Ղովտ նստած էր քա-

ղաքի դրան առաջ։ Երբ նա ճանապարհորդները տեսաւ, տեղէն ելաւ կանգնեցաւ դէպ ի առաջ գնաց, գլուխը խոնարհեցուց ու խնդրեց որ իրեն հիւր լինին. անոնց ոտքերը լուաց, որպէս զի առաւօտը դարձեալ իրենց ճամբան կարենան շարունակել։ Նոքա պատասխանեցին. «Ո՛չ, մենք գիշերը փողոցը պէտք է անցնենք»։ Ղովտ շատ խնդրեց անոնցմէ եւ վերջապէս համաձայնեցան նորա տունը գնալու։ Ղովտ հիւրասիրեց զանոնք եւ ընթրիք պատրաստեց անոնց համար։

Երեկոյեան ժամանակ՝ Սոդոմ քաղաքի բնակիչները՝ ծեր եւ մանուկ Ղովտի տունը շրջապատեցին ու կը պահանջէին օտարականները՝ ըսելով. «Ցոյց տո՛ւր մեզ այն մարդիկը որոնք քեզ մօտ եկան, դուրս բե՛ր եւ մեզ յանձնէ»։ Ղովտ դուրս ելաւ, կղպեց բակին դուռը ու կը յորդորէր քաղաքացիները իրենց պահանջումէն հրաժարիլ, իսկ նոքա պատասխանեցին. «Դու ինքդ այս տեղ չքաւեր որ օտարական ես, կ'ուզես մեր վրայ դատաւոր եւս լինել. չէ՛, մենք զքեզ ալ նոցա հետ կը պատժենք»։ Քաղաքացիք խոյն յարձակեցան Ղովտի վրայ։ Այն ժամանակ հրեշտակները դուրս եկան տունէն, Ղովտը ներս առին ու դուռը կղպեցին։ Սոդոմի բնակիչք իրենց կատաղութենէն ինքզինքնին կ'ուտէին, բայց ոչ մէկ կերպով չկարողացան ներս մտնել։

Հրեշտակներն ըսին Ղովտին. «Ո՞վ ունիս դու քաղքին մէջ, նոցա ալ իմաց տո՛ւր եւ ի միասին դուրս ելէք, որովհետեւ Աստուած զմեզ ուղարկեց այս քաղաքը կործանելու։» Ղովտ շտապեց

իւր փեսայից մօտ և խօսեցաւ անոնց. «Ելէ՛ք, շտապեցէ՛ք, դուրս ելէ՛ք քաղքէն, որովհետեւ Աստուած վճռեր է այս քաղաքը կործանել»։ Նոքա ծիծաղեցան Ղովտի այս խօսքերուն վրայ։ Առաւօտը ծագելուն պէս՝ հրեշտակներն ստիպեցին զՂովտ շտապելու, նմանապէս նորա կինը և երկու դստերքը։ Այն ժամանակ հրեշտակներն ըսին Ղովտին. «Շտապէ՛, ազատէ՛ գլուխդ, յետ չնայիս, փախի՛ր դէպ ի լեռները, որպէս զի ազատիք»։

Նոցա հեռանալէն յետոյ, Աստուած ծծումբ եւ կրակ թափեց յերկնից Սոդոմ և Գոմոր քաղաքաց վրայ, կործանեց, ջնջեց բոլոր մարդիկը նոյնպէս եւ շրջակայ երկիրները։ Ղովտայ կինը հակառակ պատուէրին՝ յետս նայեցաւ և իսկոյն աղի արձան դարձաւ։

Աբրահամ առաւօտը կանուխ ելաւ ու գնաց այն կողմը, ուր Տիրոջ հետ խօսած էր յառաջագոյն, նայեցաւ Սոդոմ եւ Գոմոր քաղաքաց վրայ և ի՞նչ տեսաւ—ամբողջ երկիրը կը ծխէր, կարծես թէ հնոց լինէր։

—

«Ամբարիշտք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»։ Սաղ. հբ. 19.

Ամբարիշտները յանկարծակի կործանեցան, պակասեցան, սատակեցան եւ կորան իրենց անօրէն գործոց համար։

«Պահէ Տէր զամենեսեան որք սիրեն զնա, եւ զամենայն մեղաւորս սատակէ Տէր»։

Աստուած զինքը սիրողները կը պաշտպանէ, իսկ մեղաւորները կը կործանէ։

13.

Իսահակայ ծնունդն եւ զոհուիլն

Ա.

Որոշեալ ժամանակն անցնելէ յետոյ, ինչպէս որ Աստուած խոստացած էր, Սառան մի որդի ունեցաւ, որոյ անունը Իսահակ դրին։ Աբրահամ արդէն հարիւր տարեկան էր՝ երբ Իսահակ ծնաւ։ Մանուկը կ՚աճէր, իսկ Աբրահամ կ՚ուրախանար։

Բ.

Մի քանի տարի յետոյ Աստուած ըսաւ Աբրահամու։ «Աբրահա՛մ»․ Նա պատասխանեց․ «Այս տեղ եմ, Տէ՛ր»։ Աստուած ըսաւ․ «Ա՛ռ քու միակ որդիդ Իսահակը, զոր դու շատ կը սիրես և գնա՛ Մորէայի երկիրը ու այն տեղ մի լերան վրայ, զոր ես քեզ ցոյց կուտամ, զոհէ՛ զնա»։ Աբրահամ առաւօտուն կանուխ ելաւ, համետեց էշը, փայտ պատրաստեց զոհի համար, հետը երկու ծառայ առաւ, նոյնպէս և Իսահակը ու գնաց այն տեղ, ուր որ Աստուած ըսեր էր։ Երեք օր յետոյ Աբրահամ բարձրացուց իւր աչքերը եւ տեսաւ հեռուանց նշանակեալ երկիրը․ Նա ըսաւ իւր ծառայից․ «Մնացէ՛ք այս տեղ, իսկ ես Իսահակայ հետ պէտք է երթամ այն տեղ աղօթելու»։

Իսահակ մատաղի փայտը շալակեց, իսկ Աբրա-

համ ի ձեռին բռնած ունէր զոհի կրակը եւ դանակը, երկուքն ալ ի միասին կ՚երթային։ Իսահակ հարցուց հօրը․ «Հա՛յր, կրակն ու փայտը այս տեղ է, բայց ո՞ւր է մատաղցու ոչխարը»։ Աբրահամ պատասխանեց․ «Աստուած կը տեսնէ մատաղցուն»։ Երբոր նոքա լերան գագաթը հասան, Աբրահամ սեղան շինեց, փայտ շարեց վրան, կապեց Իսահակի ոտքն ու ձեռքն և դրաւ սեղանին փայտերուն վրայ․ յետոյ ձեռքը երկնցուց, վեր առաւ դանակը, որպէսզի Իսահակը զոհէ։

Այն ժամանակ Աստուծոյ հրեշտակը ձայն տըւաւ երկնքէն ու ըսաւ․ «Աբրահա՛մ, Աբրահա՛մ, ձեռքդ ետ քաշէ, ես իմացայ որ դու զԱստուած կը յարգես, դուն՝ քու միակ որդիդ չխնայեցիր նորա համար»։ Աբրահամ աչքը բարձրացուց ու տեսաւ որ ծառէն խոյի գլուխ մը կախուած է, իսկոյն գնաց վար առաւ խոյը եւ զոհեց զնա իւր որդւոյն Իսահակի փոխարէն։

Աստուծոյ հրեշտակը կրկին ձայն տուաւ Աբ-

րահամու՝ Աստուծոյ հրամանաւ ու ըսաւ. «Որովհետեւ դուն քու միակ որդիդ չխնայեցիր, անոր համար ես զքեզ կ'օրհնեմ. քու զաւակներդ թող երկնից աստղերուն եւ ծովեզերքին աւազին չափ բազմանան. քեզմով պէտք է օրհնուին երկրիս վրայի բոլոր ազգերը»:

Այնուհետեւ վերադարձաւ Աբրահամ իւր ծառայից մօտ եւ անտի նոցա հետ գնաց դէպ ի Բերսաբէ, ուր եւ բնակեցաւ:

—

«Երանեալ է այր, որ համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր եւս գտանիցի, առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց»: Թ. Յակ. Ա. 12.

Երանելի է այն մարդը, որ փորձութեան կը համբերէ, որովհետեւ եթէ փորձուելով ընտիր ելնէ, կենաց պսակին պիտի արժանանայ, ինչպէս որ Աստուած իւր սիրելեաց խոստացած է:

«Տէր ետ եւ Տէր առ, եղիցի անուն Տեառն օրհնեալ:» Յովբ. Ա. 22.

Աստուած տուաւ, Աստուած առաւ, նորա անունը թող օրհնուի:

14.

Սառայի մահը

Սառան հարիւր քսանեւեօթը տարեկան էր. Նա մեռաւ Քեբրոնի մէջ, Աբրահամ սկսաւ լալ եւ սուգ բռնել: Երբ սգոյ օրերն անցան, ելաւ դիակին վրայէն ու ըսաւ այն երկրի բնակչաց.

«Միջնորդեցէ՛ք Եփրոնին մօտ, որ նա իմ ագարակիս ծայրը գտնուող արտը և այրը ինձ վաճառէ. ես կը վճարեմ անոր՝ ինչ որ նա պահանջէ:» Եփրոն եկաւ և ըսաւ. «Ագարակը կ'արժէ չորս հարիւր սատեր, թաղէ քու մեռեալդ այն տեղ»: Մարդոց առջև կշռեց Աբրահամ արծաթը և տուաւ. եւ արտը՝ այրին հետ միասին, որ Մամբրէի մօտը կը գտնուէր, եղաւ Աբրահամի սեփհականութիւն: Այնուհետև Աբրահամ թաղեց Սառան այն տեղ Մամբրէի մօտ եւ այսպէս այրը եղաւ նորա ժառանգական գերեզմանատունը:

—

«Եւ ի մեռելոց մի՛ արգելուր զշնորհս»: Սիրաք. Է. 37.

Մեռելներն ալ պէտք է պատուել:

15.

Իսահակայ ամուսնութիւնը

Աբրահամ խոր ծերութեան հասած էր եւ ամեն աստուածային օրհնութիւն ստացած էր: Աբրահամ կանչեց իւր աւագ ծառայ Եղիազարն, որ նորա բոլոր հարստութիւնը կը կառավարէր ու ըսաւ անոր. «Երդուի՛ր ինձ երկնի եւ երկրի Աստուծոյ անուամբ, որ դու իմ Իսահակ որդւոյս համար Քանանացի աղջիկ կին չպիտի ընտրես: Այլ կ'երթաս իմ հայրենի քաղաքը՝ Խառան, եւ

այն տեղէն իմ որդւոյս համար կին կ՚ընտրես. և Աստուծոյ հրեշտակը օգնական պիտի ըլլայ և այդ գործին մէջ քեզ պիտի առաջնորդէ»։ Եղիազար երդուընցաւ եւ խոստացաւ իր տիրոջ կամքը կատարել. առաւ իր հետ քանի մը ծառաներ, տասն ուղտ եւ շատ ընծաներ բեռցնելով նոցա վրայ՝ ճամբայ ելաւ դէպ ի Միջագետաց Խառան քաղաքը։ Երբոր Եղիազար հոն հասաւ, ուղտերուն հանգիստ տուաւ քաղաքէն դուրս ջրհորի մը մօտ։

Արեւը մտնելու ժամանակ էր, կանայք սովորաբար կուգային այդ ժամին ջուր հանելու։ Եղիազար սկսաւ աղօթել ու ըսել. «Ո՛վ Տէր, Աստուած Աբրահամու. ողորմէ ինծի և յաջողցուր իմ գործս. այս քաղաքի աղջկունք ահա կուգան ջուր հանելու աստի. եթէ կոյս աղջիկ մը գայ և ես ըսեմ նմա, կարկառէ սափորդ ու ինձ ջուր խմցուր և նա ալ պատասխանէ, խմէ՛, ես քու ուղտերուդ համար եւս ջուր կը հանեմ, նա կը լինի Իսահակի կինը։

Հազիւ թէ այս խօսքերն վերջացուցեր էր, ահա կուգար Բաթուէլի դուստրը Ռեբեկան՝ սափորն ուսին. նա գեղեցիկ աղջիկ մ՚էր։ Իջաւ ջրհորը, սափորը լեցուց եւ վեր ելաւ։ Եղիազար վազեց անոր առջև և ըսաւ. «Թոյլ տո՛ւր ինձ, որ փոքր ինչ ջուր խմեմ քու սափորէդ». Նա ալ պատասխանեց. «Խմէ՛»։ Այս ըսաւ և շուտով սափորը թեւին վրայ իջեցնելով անոր ջուր խմցուց։ Յետոյ աւելցուց Ռեբեկան. «Ես քու բոլոր ուղտերուդ համար նաեւ ջուր կը հանեմ»։

Յետոյ շտապեց դէպ ի դաշտը, ուստի կենդանիք ջուր կը խմէին ու այնտեղ թափեց իր սափորի ջուրը. Նա կրկին անգամ ջրհորէն բոլոր ուղտերուն համար ջուր հանեց։ Եղիազար լուռ եւ մունջ, զարմացած կը նայէր անոր վրայ։ Երբ ուղտերուն ալ ջուր խմցուց, Ռեբեկային մի զոյգ ոսկեայ գինդ և երկու ապարանջան ընծայեց ու հարցուց. «Որո՞ւ աղջիկն ես դու, արդեօք քու հօրդ տան մէջ կարելի՞ է այս գիշեր հիւր մնալ»։ Ռեբեկայ պատասխանեց.«Ես Բաթուէլի դուստրն եմ, մենք շատ խոտ եւ գարման ունինք քու ուղտերուդ համար, նաեւ ընդարձակ տեղ զանոնք իջեւանելու համար։»

Եղիազար դարձաւ եւ Աստուծոյ շնորհակալ եղաւ ըսելով. «Օրհնեալ է Աբրահամու Աստուածը, որ ինձ յաջողութեամբ առաջնորդեց դէպ ի իմ տիրոջ եղբօր տունը»։

Ռեբեկայ վազեց եւ պատմեց այս բոլորը իր մօրն, ինչպէս եւ իր Լաբան անունով եղբօրը։ Երբ սա տեսաւ քրոջ գինդն եւ ապարանջանները, վազեց դէպ ի ջրհորը եւ ըսաւ այն տեղ եղող օտարականին. «Ո՛վ Աստուծոյ օրհնեալ մարդ, ինչո՞ւ այստեղ դուրսը մնացեր ես, մեր տունը եկուր», և առաջնորդեց Եղիազարին տուն, վերցուց ուղտերուն բեռները ու կերակրեց զանոնք. իսկ Եղիազարին ու անոր հետ եղող մարդոց ոտքերնին լուալու ջուր բերաւ և յետոյ կերակուր ալ բերաւ. բայց Եղիազար պատասխանեց. «Ես հաց չեմ ուտեր մինչեւ որ իմ միտքս չյայտնեմ»։ Անոնք ալ ըսին. «Ըսէ՛, ի՛նչ է քու միտքդ»։ Ե-

ղիազար պատմեց անոնց իւր ո՛վ լինելը, պատմեց թէ ո՛վ է իւր տէրը, թէ նա ի՛նչ յանձնարարած է իրեն, թէ ջրհորի մօտ ի՛նչ աղօթք ըրած էր եւ թէ ի՛նչ հետեւանք ունեցեր էր իւր աղօթքը։

Բաթուէլ եւ Լաբան պատասխանեցին. «Այդ Աստուծոյ կամքն է, մենք անոր դէմ ըսելիք չ'ունինք, ա՛ռ Ռեբեկան և տա՛ր, թող նա կին լինի քու տիրոջդ որդւոյն ինչպէս որ Աստուած ուզեր է»։ Այս խօսքերը լսելէն յետոյ, Եղիազար ծնրադրեց Աստուծոյ առջեւ և աղօթեց։ Այնուհետեւ Եղիազար հանեց ոսկիէ եւ արծաթէ անօթներ, ինչպէս նաեւ հանդերձներ ու տուաւ Ռեբեկային, Լաբանին, նաեւ մօրը։ Ցետոյ կերան, խմեցին թէ ինքը եւ թէ իւր մարդիկը ու յետոյ քնացան։ Առաւօտը ելաւ Եղիազար ու ըսաւ. «Թոյլ տուէ՛ք ինձ, որ տիրոջս մօտ գնամ»։ Բայց Ռեբեկայի մայրը եւ եղբայրը պատասխանեցին. «Թո՛ղ աղջիկը մի քանի օր եւս մնայ մեզ մօտ, յետոյ կարող ես գնալ»։ Նա պատասխանեց. «Աստուած իմ գործը յաջողեց, զիս մի՛ ուշացնէք, թողէ՛ք որ երթամ»։ Ծնողքն ըսին. «Կանչենք աղջիկը եւ անոր ալ հարցնենք, տեսնենք ի՛նչ կ'ըսէ»։ Կանչեցին Ռեբեկան եւ հարցուցին. «Կ'երթա՞ս այս մարդուն հետ»։ Նա պատասխանեց. «Այո՛ կ'երթամ»։ Այսպէս հեռացաւ Ռեբեկայ իւր նաժշտաց եւ Աբրահամու ծառայից հետ։ Նոքա օրհնեցին Ռեբեկան ու ըսին. «Թող քու ժառանգներդ հազարաւոր լինին»։ Ռեբեկայ իւր նաժշտաց հետ ուղտերու վրայ նստաւ ու ճամբայ ելան։

Իսահակ երեկոյեան ժամանակ դաշտ ելած էր զբօսնելու և ահա նշմարեց հեռուանց որ տասն ուղտ կուգային. Ռեբեկան եւս հեռուանց նշմարեց զԻսահակ, իսկոյն ուղտէն վար իջաւ եւ հարցուց ծառային. «Ո՞վ է այն մարդը որ դաշտին վրայէն դէպ ի մեզ կուգայ»։ Ծառան պատասխանեց. «Նա իմ տէրն է»։ Ռեբեկան իսկոյն առաւ իւր քօղը և ծածկուեցաւ։ Ծառան պատմեց Իսահակայ այն ամենը, ինչ որ Ռեբեկայ խօսեր էր։ Իսահակ առաւ Ռեբեկան եւ իւր մօրը վրանը տարաւ եւ իւր կինը ըրաւ, ու շատ կը սիրէր զնա։

—

«Ցոյց ինձ ճանապարհ յոր գնացից, զի առ քեզ, Տէր, համբարձի զանձն իմ»։ Սաղ. ճխբ. 9.

Ցոյց տո՛ւր ինձ այն ճանապարհը, Աստուած իմ, ուսկից ես պիտի երթամ, որովհետեւ իմ անձս առ քեզ բարձրացուցի։

16.

Աբրահամու մահը

Աբրահամ իւր բոլոր հարստութիւնը Իսահակին տուաւ եւ մեռաւ խորին ծերութեան մէջ, հարիւր եօթանասուն եւ հինգ տարեկան։ Իսահակ թաղեց զնա այն այրին մէջ՝ Մամբրէի կաղնւոյն մօտ, ուր թաղուած էր եւ նորա կինը Սա-

ռան։ Աբրահամու մահուանէն յետոյ Աստուած օրհնեց զԻսահակ։

—

«Երանի՜ մեռելոցն որք ի Տէր ննջեցին»։ Յայտ. Յովհ. ժդ. 13.

Երանի՜ այն մեռելներուն որոնք Տիրոջ յուսով ննջեցին։

Բ.

ԻՍԱՀԱԿ

17.

Եսաւ եւ Յակոբ

Իսահակ երկու որդի ունեցաւ, մեծին անունը Եսաւ էր, իսկ պզտիկինը՝ Յակոբ։

Եսաւ թաւ էր եւ կը պարապէր որսորդութեամբ ու հողագործութեամբ, իսկ Յակոբ հանդարտ բնաւորութեան տէր լինելով՝ տունը կը կենար եւ մօրը կ'օգնէր ընտանեկան գործոց մէջ. բայց կը սիրէր նաեւ հովուական կեանքը։ Իսահակ Եսաւը կը սիրէր եւ անոր բերած որսի միսը մեծ ախորժով կ'ուտէր, իսկ Ռեբեկայ կը սիրէր զՅակոբ։

Օր մը Յակոբ ոսպնաթան եփած էր, Եսաւ դաշտէն յոգնած տուն վերադառնալով՝ ըսաւ Յակոբայ. «Թո՛յլ տուր ինձ, եղբա՛յր, քու ոսպնաթանէն ուտել»։ Յակոբ պատասխանեց. «Ծախէ՛ ինձ քու անդրանկութիւնդ, այն ժամանակ

կ'ուտես ոսպնաթանը»։ Եսաւ ըսաւ ինքն իրեն. «Ես անօթութենէ կը մեռնիմ, ալ ինչի՞ս պէտք անդրանկութիւնը»։ Յակոբ ըսաւ. «Ուրեմն երդուընցիր ինձ այսօր, որ դուն քու անդրանկութենէդ կը հրաժարիս»։ Երդուընցաւ Եսաւ եւ այսպէս վաճառեց իր անդրանկութեան իրաւունքը։ Այն ժամանակ Յակոբ տուաւ անոր իր ոսպնաթանը։ Եսաւ կերաւ եւ խմեց, տեղէն ելաւ ու գնաց։ Այսպէս ծախեց Եսաւ Յակոբայ իր անդրանկութիւնը։

—

«Զի՞ բարի կամ զի՞ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին»։ Սաղ. ճլբ. 1.

Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ վայելուչ բան կը լինի, եթէ եղբայրները միաբանութեամբ ապրին։

18.

Յակոբայ խաբէութիւնը

Իսահակ ծերացեր էր եւ հարիւր երեսուն եւ եօթը տարեկան էր, աչքերը լաւ չէին տեսներ. կանչեց Եսաւը ու ըսաւ. «Որդեա՛կ իմ»։ Եսաւ պատասխանեց. «Հոս եմ, հա՛յր իմ»։ Իսահակ ըսաւ. «Ես արդէն ծերացեր եմ, մեռնելու ժամանակս չգիտեմ, այսօր կամ վաղը դուցէ մահս մօտենայ, ա՛ռ քու աղեղդ եւ կապարճդ, գնա՛ դաշտ, որսի միս բե՛ր ինձ համար ու խորովիկ

պատրաստէ, որպէս զի ուտեմ եւ օրհնեմ զքեզ»։ Ռեբեկան լսեց այս խօսքերը։ Եսաւ դաշտ գնաց, որսաց եւ տուն դարձաւ։

Ռեբեկայ իր մօտ կանչելով Յակոբը ըսաւ. «Ես լսեցի այն բոլորը, ինչ որ հայրդ Եսաւին պատուիրեց. Եսաւին ըսաւ, գնա՛ դաշտ, դեռ քանի որ չեմ մեռած, որսի միս բե՛ր, ուտեմ եւ զքեզ օրհնեմ։ — Ուրեմն լսէ՛ ինձ, շտապէ՛ խաշանցդ մօտ եւ երկու մատաղ ուլ բե՛ր, որպէս զի հօրդ համար պատրաստեմ իր սիրական խորտիկը։ Այս կերակուրը կը տանիս իր մօտը, կ'ուտէ եւ կ'օրհնէ զքեզ մեռնելէն առաջ»։ Յակոբ պատասխանեց. «Եղբայրս Եսաւը թաւամազ է, իսկ ես լերկ, գուցէ հայրս զիս շօշափէ, այն ժամանակ ես խաբեբայ կ'ելլեմ անոր առջեւ»։ Մայրը պատասխանեց. «Գնա՛ եւ այնպէս ըրէ՛, ինչպէս որ ըսի քեզի»։

Յակոբ դուրս ելաւ, ուլերը բերաւ ու մօրը տուաւ։ Առաւ Ռեբեկայ եւ անոնցմէ կերակուր պատրաստեց։ Եսաւի թանկագին զգեստներն ալ հագցուց Յակոբայ, ուլի մորթն ալ թեւերուն ու պարանոցին փաթթեց՝ ուր որ լերկ էր, եւ կերակուրն ալ ձեռքը տուաւ։ Յակոբ գնաց հօրը մօտ եւ ըսաւ. «Հա՛յր»։ Նա պատասխանեց. «Այս տեղ եմ, ո՞վ ես դու, որդեա՜կ»։ Յակոբ պատասխանեց. «Քու անդրանիկ որդիդ Եսաւն եմ, պատուէրդ կատարեցի, ե՛լ, նստէ՛ ու կե՛ր իմ բերած խորտիկս ու օրհնէ՛ զիս»։ Իսահակ հարցուց. «Բայց այդ ի՞նչպէս շուտ գտար որսը»։

Նա պատասխանեց. «Աստուած ինքն պատրաստեր էր այդ»։

Այն ժամանակ Իսահակ ըսաւ անոր. «Մօտ ե՛կ, որդեա՛կ, որ զքեզ շօշափեմ, և տեսնեմ թէ իմ որդի Եսա՞ւն ես թէ ոչ»։ Յակոբ մօտեցաւ հօրը որ շօշափելով զնա ըսաւ. «Ձայնդ Յակոբայ ձայնին նման է, իսկ ձեռքերդ Եսաւին»։ Հայրը չճանչցաւ, որովհետեւ անոր ձեռքերը Եսաւին ձեռքերուն նման թաւամազ էին. բայց կասկածելով կրկին հարցուց անոր. «Դու իմ որդին Եսա՞ւն ես»։ Այն ալ պատասխանեց. «Այո՛, ես եմ»։ Իսահակ ըսաւ. «Ուրեմն մօտ բե՛ր քու պատրաստած խորտիկդ»։ Յակոբ մօտեցուց անոր կերակուրը, գինի եւս տուաւ. Իսահակ կերաւ եւ խմեց եւ յետոյ ըսաւ. «Մօտ եկու եւ համբուրէ զիս, որդեա՜կ»։ Յակոբ մօտենալով համբուրեց զհայրը։ Իսահակ անոր զգեստից հոտը առաւ, օրհնեց ու ըսաւ. «Իմ որդւոյս հոտը նման է Աստուծոյ օրհնած դաշտի հոտին, Աստուած թո՛ղ քեզ յերկնից առատ ցօղ տայ, իսկ երկրիս վրայ քու արտերդ գինւով եւ ցորենով առատանան, թո՛ղ ազգերը քեզ ծառայեն, եղբարցդ վրայ տէ՛ր եղիր»։

Իսահակ օրհնելով զՅակոբ՝ վերջացուց։ Յակոբ դեռ նոր հեռացեր էր, Եսաւ որսէն վերադարձաւ և իսկոյն պատրաստեց խորտիկը և հօրը բերաւ ըսելով. «Հա՛յր, ե՛լ եւ կե՛ր քու որդւոյդ բերած խորտիկը եւ օրհնէ՛ զիս»։ Իսահակ հարցուց անոր. «Ո՞վ ես դու»։ Պատասխանեց. «Քու անդրանիկ որդիդ Եսաւն եմ»։ Իսահակ շատ զար-

մնացաւ այս բանիս վրայ եւ ըսաւ. « Հապա ո՞վ էր այն որսորդը, որ մի փոքր առաջ ինձ համար խորտիկ բերաւ, ես ալ կերայ եւ օրհնեցի զնա »։

Երբ Եսաւ հօրը այս խօսքերը լսեց, բարձր ձայնով աղաղակեց և դառնացած սրտով ըսաւ. « Հա՛յր, զիս եւս օրհնէ». իսկ Իսահակ պատասխան տուաւ. «Քու եղբայրդ խորամանկ կերպով իմ քովս եկաւ եւ այն օրհնութիւնը զոր քեզ պիտի տայի, նա առաւ »։ Եսաւ պատասխանեց. «Միթէ դու մի՞ օրհնութիւն ունիս, հա՛յր, զիս ալ օրհնէ ». եւ բարձրաձայն կուլար։ Իսահակ պատասխանեց եւ ըսաւ. « Թո՛ղ քու բնակած երկիրը եւս պտղաւէտ լինի, միայն քու եղբօրդ իշխանութեան ներքեւ պիտի ըլլաս »։

—

« Զար բիծ ի մարդ՝ ստութիւն »։ Սիրաք. ի. 26.
Սուտ խօսելը՝ մարդու մէջ մի չար բիծ է։

Գ.

ՅԱԿՈՎԲ

19.

Յակովբայ փախուստը

Եսաւ շատ կ՚ատէր զՅակովբ, որովհետեւ անդրանկութեան իրաւամբ իւր հօրմէն ստանալիք օրհնութիւնը՝ Յակովբ խորամանկութեամբ խլեր էր իրմէ եւ կ՚ըսէր ինքնիրեն. « Հայրս ծերացեր է, մահուան օրերը մօտեցեր են, երբ մեռնի, ես կ՚սպաննեմ զՅակովբ »։

Այս խօսքերը Ռեբեկայի ականջն հասան, ուստի զՅակովբ իւր մօտ կանչեց եւ ըսաւ. «Քու եղբայրդ Եսաւը կը մտածէ զքեզ սպաննել, փախի՛ր, գնա՛ Խառան իմ եղբօրս Լաբանի մօտ, մինչեւ որ եղբօրդ բարկութիւնը անցնի, յետոյ ես մարդ կ՚ուղարկեմ քեզ իմաց տալու »։ Ռեբեկայ խօսեցաւ այդ մասին Իսահակայ հետ, նա ալ Յակովբը կանչեց, որ արդէն եօթանասուն և եօթը տարեկան էր եւ դեռ չամուսնացած՝ ու ըսաւ. « Գնա՛ Միջագետք Բաթուէլի տունը և ամուսնացիր Լաբանի աղջիկներէն մէկուն հետ, որպէս զի դու ալ իմ սրտիս ցաւ չպատճառես, ինչպէս Եսաւ, որ Քանանացւոց աղջիկներէն իրեն համար կին ընտրեց. Թո՛ղ ամենակարողն Աստուած օրհնէ զքեզ, բազմացնէ քու ժառանգները և Աբրահամու օրհնութիւնը քու վրադ թափէ »։ Յակովբ լսեց իւր հօր եւ մօր խօսքին եւ հեռացաւ այն տեղէն դէպ ի Միջագետք։

—

« Իմ է վրէժխնդրութիւն, եւ ես հատուցից՝ ասէ Տէր»։ Թ. Հռովմ. բժ. 19.

Վրէժխնդրութեան իրաւունքը իմն է, ես պէտք է հատուցանեմ, կ՚ըսէ Աստուած։

«Զի արմատ ամենայն չարեաց՝ արծաթսիրութիւն է »։ Տիմոթ. զ. 10.

Բոլոր չարութեանց արմատը արծաթսիրութիւնն է։

« Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ »։ Թ. Յակ. ա. 20.

Բարկացած մարդը Աստուծոյ նման արդար բան չգործեր։

20.

Յակովբայ տեսիլքը

Յակովբ ելաւ Բերսաբէէն եւ գնաց Խառան. արեւը մտնելու ժամանակ էր, երբ քար մ'առաւ, դրաւ գլխին տակը եւ հանգստացաւ։

Հոն տեսիլքին մէջ տեսաւ սանդուխ մը, որոյ մէկ ծայրը երկինքն էր, իսկ միւսը՝ երկրիս վրայ, եւ որուն վրայ Աստուծոյ հրեշտակները կ'ելնէին եւ կ'իջնէին։ Ինքն Աստուած այդ սանդուխի վերեւը կանգնած՝ կ'ըսէր. «Ես եմ Աբրահամու եւ Իսահակայ Աստուածը։ Այս երկիրը՝ ուր որ դուն կը պառկիս, քեզ եւ քու ժառանգներուդ պիտի տամ, քու ժառանգներդ ծովի աւազի նման պիտի բազմանան և պիտի տարածուին դէպ ի արեւելք, արեւմուտք, հարաւ եւ հիւսիս, քեզմով պիտի օրհնուին ամենայն ազգք երկրիս վրայ։ Ես քեզ հետ պիտի լինիմ և դքեզ պիտի պաշտպանեմ. ուր որ ալ երթալու ըլլաս, ես դքեզ կրկին այս երկիրը պիտի վերադարձնեմ»։ Երբ Յակովբ քնէն արթնցաւ, ըսաւ. «Անկասկած Աստուած այս տեղ է եւ ես այդ չգիտէի»։ Վախցաւ եւ գոչեց. «Այս տեղ սուրբ է, Աստուծոյ տունն է, երկնքի դուռն է»։ Յակովբ վերցուց այն քարը, որոյ վրայ քնացեր էր եւ արձան կանգնեց, իւղ թափեց վրան եւ այն տեղը տուն Աստուծոյ անուանեց։

Յակովբ հոն ուխտ ըրաւ եւ ըսաւ. «Աստուած ինձ հետ պիտի ըլլայ, պիտի պաշտպանէ զիս, եւ

իմ երթալու ամեն ճամբաներս ցոյց պիտի տայ, ինձ ուտելու հաց և հագնելու զգեստ պիտի տայ. յաջողութեամբ ողջ եւ առողջ զիս հայրենիք պիտի վերադարձնէ, անոր համար ալ Տէրն է իմ Աստուածը. այն քարը զոր ես արձան կանգնեցի, Աստուծոյ տունը պիտի կոչուի»։

—

«Գթած ողորմած է Տէր, երկայնամիտ և բազումողորմ»: Սաղ. ճբ. 8.

Գթած, համբերող եւ ողորմած է Աստուած:

«Թէպէտ եւ գնացից ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի դու, Տէ՛ր, ընդ իս ես: Ցուպ քո և գաւազան, նոքա մխիթարեսցեն զիս»: Սաղ. իբ. 8.

Եթէ մահուան ստուերներուն մէջէն ալ երթալու ըլլամ, չեմ վախեր չարէն, որովհետեւ Աստուած իմ հետս է, Աստուծոյ գաւազանը զիս կը պաշտպանէ:

21.

Յակովբ Լաբանի քով

Ա.

Յակովբ ելաւ այդ տեղէն և գնաց դէպ ի արեւելք՝ իւր մօրեղբօր Լաբանի մօտ։ Դաշտի մէջ ջրհոր մը տեսաւ, որոյ շուրջը երեք ոչխարի հօտեր մակաղած էին ու մեծ քար մ'ալ անոր բերանը դրուած։ Յակովբ ըսաւ հովիւներուն. «Ո՞ր տեղացի էք, եղբա՛րք»։ Անոնք պատասխանե-

ցին. «Խառանցի ենք»։ Յակոբ հարցուց. «Կը ճանաչէ՞ք Բաթուէլի որդին Լաբանը»։ Պատասխանեցին. «Այո՛, մենք զայն լաւ կը ճանաչենք, ահա անոր աղջիկը Հռաքէլն ալ կուգայ իր ոչխարաց հետ»։ Յակոբ զՀռաքէլ տեսնելուն պէս, իսկոյն մօտեցաւ, վերցուց ջրհորին վրայի քարը եւ ոչխարաց ջուր խմցուց։ Յակոբ համբուրեց զՀռաքէլ, բարձրաձայն լացաւ ու յայտնեց անոր որ ինք Ռեբեկայի որդին է։ Հռաքէլ տուն վազեց՝ այս լուրը հօրը հաղորդելու համար։ Երբ Լաբան իմացաւ իր քեռորդւոյն Յակոբայ գալուստը, շտապեց դէպ ի նա, գրկեց զայն, համբուրեց ու տարաւ իր տունը։ Յակոբ պատմեց Լաբանին ինչ որ իր գլխէն անցեր էր։

Բ.

Ամիս մը անցնելէն յետոյ՝ Լաբան ըսաւ Յակոբայ. «Թէեւ դու իմ ազգականս ես, բայց և այնպէս չեմ ուզեր որ ինձ ձրի ծառայես. ըսէ՛, ի՞նչ է քու աշխատանացդ վարձքը»։ Լաբան երկու աղջիկ ունէր — մեծին անունը Լիա, փոքրինը Հռաքէլ։ Լիան տգեղ էր, իսկ Հռաքէլ գեղեցիկ։ Յակոբ Հռաքէլին կը հաւնէր, անոր համար ալ ըսաւ Լաբանին. «Ես քեզի եօթը տարի կը ծառայեմ, եթէ Հռաքէլը ինձ տաս»։ Լաբան պատասխանեց. «Շատ բարի, աւելի լաւ է քեզ տամ՝ քան թէ մի ուրիշին, կեցի՛ր իմ քովս»։ Յակոբ եօթը տարի ծառայեց Լաբանին։ Այս երկար ժամանակը այնպէս շուտ անցաւ, կարծես թէ մի օր լինէր, որովհետեւ նա Հռաքէլը կը սիրէր։

Երբ եօթը տարին լմնցաւ, Լաբան կանչեց իր մօտ բոլոր գիւղացիներն ու հարսնիք ըրաւ. բայց փոխանակ Հռաքէլին՝ Լիան կին տուաւ անոր։ Այն ժամանակ Յակոբ ըսաւ Լաբանին. «Ինչո՞ւ խաբեցիր զիս, ես քեզի Հռաքէլի համար եօթը տարի ծառայեցի եւ ոչ թէ Լիայի»։ Լաբան պատասխանեց. «Մեր երկիրը սովորութիւն չկայ, որ պզտիկ քոյրը մեծէն առաջ ամուսնանայ, եթէ դու ինձ նորէն եօթը տարի ծառայես, Հռաքէլն ալ կուտամ»։ Յակոբ եօթը տարի եւս ծառայեց ու Հռաքէլն ալ կին առաւ։

Յակոբ շատ զաւակներ ունեցաւ. Լաբանին վեց տարի եւս ծառայելէ վերջը ստացաւ իրմէ շատ ոչխարներ. ունէր նաեւ բազմաթիւ ծառաներ, աղախիններ, ոչխարներ, ուղտեր եւ էշեր։

—

«Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ»: Թ. Ա. Եբր. ժբ. 6.

Աստուած զով որ կը սիրէ, կը խրատէ (կը պատժէ) զնա:

22.

Յակոբ կը փախչի Լաբանի քովէն

Լաբանի զաւակները կը տրտնջային Յակոբէն եւ կ՚ըսէին. «Մեր հօր ստացուածքը՝ Յակոբ իրեն սեփհականեց, մեր հօր ստացուածքով նա այսպէս հարստացաւ»։ Յակոբ ինքն ալ կը գուշակէր այդ ներքին տրտունջը։ Բաց ասկից՝ Լա-

բան ինքն ալ առաջուան պէս չէր վարուեր անոր հետ, անոր համար Աստուած ըսաւ Յակոբայ. «Դարձիր քու հօրդ երկիրը, ես քեզի հետ կ՚ըլլամ եւ կը պաշտպանեմ զքեզ»։ Յակոբ պատմեց այս բանը Լիային եւ Ռաքէլին. անոնք ալ ըսին. «Ըրէ՛ այնպէս, ինչպէս որ Աստուած հրամայեց»։ Յակոբ ալ առաւ իր երախայքն ու կանայքը, նստեցուց ուղտերու վրայ, ժողվեց խաշինքն ու բոլոր հարստութիւնը եւ ճամբայ ելաւ դէպ ի իր հօր երկիրը՝ Քանան։

Այն ժամանակ Լաբան գնացեր էր ոչխարները խուզելու, երբ Յակոբ ծածուկ, առանց անոր իմաց տալու, առաւ իր ստացուածքը, գետն անցաւ եւ գնաց դէպ ի Գաղաատու լեռը։

Երրորդ օրը Լաբան իմացաւ որ Յակոբ փախեր է, առաւ իր եղբայրքը եւ սկսաւ անոր ետեւէն իյնալ։ Եօթն օրէ յետոյ հասաւ Գաղաատու լերանց մօտ։ Աստուած երազի մէջ զգուշացուց զԼաբան ու ըսաւ. «Զգո՛յշ կեցիր, Յակոբայ հետ սիրով վարուէ»։ Լաբան մօտեցաւ Յակոբայ ու հարցուց. «Ինչո՞ւ համար դու այդպէս ծածուկ հեռացար ու ինձ ոչինչ չըսիր. ես զքեզ երգով, թմբուկով եւ քնարով ճամբայ կը դնէի, ինչո՞ւ համար իմ աղջիկներս եւ թոռներս առանց հրաժեշտի համբոյրի ինձմէ հեռացուցիր, քու ըրածդ լաւ բան չէ, եթէ ես ուզէի՝ կարող էի քեզ վնասել, բայց Աստուած զգուշացուց զիս ըսելով. «Զգո՛յշ կեցիր՝ Յակոբայ հետ սիրով վարուէ՛»։

Յակոբ շատ բարկացաւ Լաբանի յանդիմանական խօսքերուն վրայ ու ըսաւ. «Ի՞նչ ըրի քեզ, որ այդպէս բարկացած ետեւէս ընկեր ես. քսան տարի քեզ ծառայեցի, այդքան այծ եւ ոչխար որ դուն ունիս, բոլորն ալ իմ քրտանցս պտուղներն են, ինչ որ գազանք կը յափշտակէին, կը պատառէին, այն ալ ինձմէ կը պահանջէիր. ցերեկները արեւակէզ էի, իսկ գիշերները ցրտահար, աչքս երբէք քուն չէ մտած։ Այս ձեւով ես քսան տարի քու տանդ մէջ ծառայեր եմ, տասնեւչորս տարի քու աղջկանցդ, իսկ վեց տարի ալ խաշինքներուդ համար։ Այդ ժամանակամիջոցին դու իմ վարձու պայմաններս տասն անգամ փոխեցիր։ Եթէ Աբրահամու և Իսահակայ Աստուածը ինձ հետ չըլլար, զիս ձեռնունայն ճամբայ կը դնէիր։ Աստուած՝ իմ քաշած չարչարանքներս ու նեղութիւններս տեսաւ ու անոր համար զքեզ զգուշացուց»։

Լաբան պատասխանեց. «Աղջիկները իմ աղջիկներս են, թոռները իմ թոռներս են եւ խաշինքդ իմ խաշինքներս են, այդ ամենը ինչ որ դու ունիս իմս է։ Ես ի՛նչ կարող եմ աղջկանցս և թոռանցս ընել, ամենէն լաւն այն է որ մենք դաշինք դնենք»։ Յակոբ եւ Լաբան՝ Աստուծոյ առջեւ երդուընցան և դաշինք դրին, որ այդ տեղէն այս կամ այն կողմ ոչ մէկն իրաւունք ունենայ անցնիլ։ Գաղաատ լեռը սահման եղաւ. պայմաններէն մէկն ալ այն էր, որ Յակոբ Լաբանու աղջիկները չպիտի նեղէր։ Յակոբ լերան վրայ զոհ ըրաւ և իր եղբայրքն հացի հրաւիրեց։ Ամենքն ալ գիշերը այն տեղ մնացին։ Առաւօտուն Լաբան ելաւ՝ համբուրեց աղջիկները եւ թոռները,

օրհնեց զանոնք և վերադարձաւ իւր տունը։ Յակովբ շարունակեց իւր ճամբան։

—

«Զի արմատ ամենայն չարեաց՝ արծաթսիրութիւն է»։ Ա. Տիմոթ. գ. 10.

«Զի՞ տեսանես զշիւղ յական եղբօր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ տեսանես»։ Մատ. է. 3.

Ինչո՞ւ քու եղբօրդ աչքին շիւղը կը տեսնես, իսկ քու աչքիդ գերանը չես տեսներ։

«Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»։ Մատ. զ. 12.

Մեր սխալանացը ներէ, որպէս զի մենք ալ մեզի դէմ մեղանչողներուն ներենք։

———

23.

Եսաւի եւ Յակովբայ հաշտութիւնը

Յակովբ դեսպաններ ուղարկեց Եդոմ (Սէիր) երկիրը՝ Եսաւի մօտ՝ և պատուիրեց անոնց այսպէս ըսել. «Քու ծառադ Յակովբ այսքան ժամանակ Լաբանի քովն էր. զմեզ քու քովդ խրըրկեց և շնորհք կը խնդրէ»։ Դեսպանները դարձան եւ ըսին. «Մենք գնացինք եղբօրդ Եսաւի քով, որ չորս հարիւր մարդով դէպ կուգայ դիմաւորելու։» Յակովբ շատ վախցաւ այս բանէն. թէ՛ իւր ծառաները եւ թէ՛ խաշինքը երկու մասի բաժնեց՝ այն մտօք որ եթէ եղբայրը մէկ մասին վրայ յարձակի, միւսը կարենայ ազատել։

Յետոյ Յակովբ աղօթեց եւ այսպէս ըսաւ. «Ո՛վ Աբրահամու եւ Իսահակայ Աստուած, դու ինձ հրամայեցիր հայրենի երկիրս վերադառնալ. խոստացար զիս պաշտպանել. քու ծառադ, որուն այսքան բարութիւն ես ըրեր՝ միթէ արժանի չէ՞ այդ շնորհաց։ Մի գաւազան ունէի ձեռքըս, երբ քանի տարի առաջ Յորդանանը անցայ, իսկ այժմ երկու ամբողջ հօտի տէր եմ, ազատէ զիս, ո՛վ Աստուած, իմ եղբօրս Եսաւի ձեռքէն, կը վախեմ ես անկէց, մի՛ դուցէ նա զիս, կանայքս եւ որդիքս սպաննէ։»

Յակովբ ընծաներ որոշեց իւր եղբօրը համար, ընտրեց բաւական այծեր, ոչխարներ, ուղտեր, կովեր, յանձնեց ծառայներուն եւ ըսաւ. «Դուք իմ առջեւէս գնացէ՛ք, մէկ հօտը միւսին հետ մի՛ խառնէք, իրարմէ փոքր ինչ հեռու քշեցէ՛ք։» Յակովբ առջեւէն գնացող ծառայից պատուիրեց ու ըսաւ. «Եթէ Եսաւ եղբայրս ձեզ հանդպի և հարցնէ, ո՞վ էք դուք, ո՞ւր կ'երթաք կամ որո՞ւ կը պատկանին այդ կենդանիներ, զոր դուք կը քշէք, այսպէս կ'ըսէք թէ այդ բոլորը քու Յակովբ ծառայիդ կը պատկանի, եւ ընծայ կը խըրկէ այս բոլորը իւր տէրոջ Եսաւին ու ինքն ալ ետեւէն կուգայ։» Այսպէս ալ պատուիրեց միւսին, երրորդին եւ բոլորին՝ որոնք հօտին ետեւէն կ'երթային։ Յակովբ այսպէս կը մտածէր, որ եթէ ես նախապէս ընծաներով անոր սիրտը շահիմ, յետոյ երբ տեսնուինք, թերեւս չմերժէ ինձ հետ տեսակցիլ։

Յակովբ առաւօտուն կանուխ արթնցաւ, ա-

ռաւ իր կանայքն ու զաւակները եւ գնաց Եսաւի ընդ առաջ. Յակովբ վեր նայեցաւ եւ տեսաւ որ եղբայրը չորս հարիւր հոգւով իր դէմը կուգար, իսկոյն որդիքը մօրերնուն յանձնեց, ինքն յառաջ գնաց եւ մինչեւ Եսաւին հասնիլը եօթն անգամ ծունր դնելով երկրպագեց։ Եսաւ այս տեսնելուն պէս՝ յառաջ վազեց, գրկեց զՅակովբ, վիզն ընկաւ ու համբուրեց եւ երկուքն ալ սկսան արտասուել։ Եսաւ վեր նայելով, տեսաւ կանայքն եւ որդիքն ու հարցուց. «Ո՞վ են ասոնք»։ Յակովբ պատասխանեց. «Իմ որդիքս են զորս Աստուած ինձ ընծայած է։» Այն ժամանակ ամենքն ալ մօտեցան եւ խոնարհեցան Եսաւին։ Եսաւ հարցուց. «Ինչո՞ւ համար էին այդ խաչինքն որ առջեւէս անցան։» Յակովբ պատասխանեց. «Որպէս զի քու Յակովբ ծառադ շնորհ կարենայ գտնել քու առջեւդ։» Եսաւ պատասխանեց. «Ես իմ ունեցածովս գոհ եմ, աւելին պէտք չունիմ, քեզի ըլլայ քու ունեցածդ։» Բայց Յակովբ այնքան ստիպեց զԵսաւ, մինչեւ որ ընդունեցաւ։

Եսաւ ըսաւ. «Շտապենք միատեղ հեռանալ այս տեղէն, ես քեզի հետ կ՚ուզեմ երթալ։» Յակովբ պատասխանեց. «Կաթնկեր երախաներ ունիմ, ոչխարներս եւ արջառներս եւս նոր ծնած են, եթէ ստիպեմ աւելի ճանապարհ կարելու, բոլորն ալ կը կոտորուին. լաւ կ՚ըլլայ որ դուն առաջ երթաս, իսկ ես կամաց կամաց ետեւէդ կուգամ մինչեւ Եդոմ։» Եսաւ ըսաւ. «Եթէ այդպէս է, իմ մարդոցս մէկ քանին քու քովդ կը

թողում»։ Յակովբ պատասխանեց. «Ինչո՞ւ այդքան նեղութիւն կրես, քու այսքան շնորհդ ալ ինձ բաւական է»։ Եսաւ վերստին Եդոմ դարձաւ։ Յակովբ գնաց դէպ ի Սիւքէմ, այն տեղէն անցաւ Բեթէլ եւ Տիրոջ համար սեղան պատրաստեց։ Երբոր քիչ մ՚ալ յառաջ գացին, Հռաքէլ մեռաւ։ Յակովբ թաղեց զայն եւ վրան արձան մը կանգնեց։ Յակովբ եկաւ իր հօր Իսահակի քով՝ որ կը բնակէր Մամբրէի մէջ քիչ հեռու Քեբրոնէն։ Իսահակ ծերացեր էր եւ մեռաւ հարիւր ութսուն տարեկան։ Եսաւ ու Յակովբ թաղեցին զԻսահակ՝ Աբրահամու գնած կրկին այրին մէջ։ Եսաւ կը բնակէր Եդովմայ լերանց վրայ, իսկ Յակովբ Քանանու մէջ իր հօր երկիրը։

—

«Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց»։

«Կարդասցես առ իս յաւուր նեղութեան քո. ես փրկեցից զքեզ, եւ դու փառաւոր արասցես զիս»։
Սաղ. խթ. 15.

Նեղն ինկած ժամանակդ եթէ զիս օգնութեան կանչես, ես զքեզ կ՚ազատեմ եւ դու իմ անունս կը փառաւորես։

Դ.

ՅՈՎՍԷՓ

24.

Յովսէփ եւ իր եղբայրները

Ա.

Յակոբ տասներկու որդի ունէր, որոնցմէ վերջին երկուքին անուններն էին Յովսէփ և Բենիամին՝ որոնք Հռաքէլէ ծնած էին։ Յովսէփ տասն և եօթը տարեկան էր, երբ իր եղբարցը հետ ոչխարներ կ'արածէր։ Կը պատմէր հօրը այն բոլոր սխալները՝ զորս իր եղբայրները կը գործէին։ Յակոբ՝ զՅովսէփ ամէն զաւակներէն աւելի կը սիրէր. անոր համար ծաղկեայ պատմուճան մը շինել տուաւ։ Եղբայրները երբ տեսան որ հայրերնին զՅովսէփ իրենցմէ աւելի կը սիրէ, սկսան նախանձիլ եւ սիրով չէին վարուեր անոր հետ։

Յովսէփ անգամ մը երազ տեսաւ ու պատմեց եղբարցը. «Մենք դաշտի մէջ որայներ կը կապէինք, իմ կապած որայներս ուղիղ կանգնեցան, իսկ ձեր որայները իմիններուս կ'երկրպագէին»։ Եղբայրները պատասխանեցին. «Միթէ կ'ուզես թագաւո՞ր ըլլալ մեր վրայ»։ Ասոր վրայ եղբայրները սկսան աւելի ատել զՅովսէփ։ Ուրիշ երազ մ'ալ տեսաւ և նոյնպէս պատմեց եղբայրներուն. «Ես տեսայ երազիս մէջ որ արեւը, լուսինը եւ մետասան աստղերը ինձ երկրպագու-

թիւն կ'ընէին»։ Երբ այս բանը հայրն իմացաւ, բարկացաւ եւ ըսաւ. «Այդ ի՞նչ երազ է, մի՞թէ ես, մայրդ, եղբայրներդ պէտք է գանք եւ քեզի երկրպագութիւն ընենք»։ Եղբայրներուն ատելութիւնը աւելի եւս սաստկացաւ, իսկ հայրը այդ բոլորը կը դիտէր և ծածուկ իր մէջ կը պահէր։

Բ.

Յովսէփայ եղբայրները անգամ մը Սիւքէմ գընացին իրենց հօր խաշինքը արածելու համար։ Յակոբ ըսաւ Յովսէփին. «Գնա՛ եղբարցդ քով եւ իմացիր թէ ինչպէ՞ս է անոնց առողջութիւնը, ինչպէ՞ս են ոչխարները ու ինձ անձամբ լուր բեր»։ Յովսէփ գնաց։ Երբ եղբայրները հեռուանց տեսան զինքը, սկսան իրարու հետ փսփսալ ու ըսել. «Ահա կուգայ երազատեսը, եկէք սպաննենք զանիկայ, ձգենք փոսի մը մէջ եւ ըսենք մեր հօրը, թէ չար գազանները յօշոտեր են եւ տեսնենք թէ ի՛նչ պիտի ըլլան տեսած երազները»։ Ռուբէն որ մեծ եղբայրնին էր, երբ այս բանը լսեց, ըսաւ. «Մի՛ սպաննէք զայն, արիւն մի՛ թափէք, այլ ձգեցէք անապատին փոսերէն միոյն մէջ»։ Ռուբէնին միտքն այն էր որ զՅովսէփ ազատէ իր եղբարցը ձեռքէն ու հօրը տանի։ Երբ երազատեսը եղբայրներուն մօտեցաւ, հանեցին ծաղկեայ պատմուճանը վրայէն եւ ձգեցին զինքը անջուր փոսի մը մէջ. յետոյ սեղանի նստան։

Այդ միջոցին տեսան որ խումբ մը Իսմայելացի վաճառականներ կուգային իրենց ուղտերով, եւ

խունկ, ստաշխն, ռետին կը տանէին Եգիպտոս։ Յուդան խօսեցաւ եղբայրներուն հետ ու ըսաւ. «Ի՞նչ շահ մեզի մեր եղբայրը սպաննելէ, եկէ՛ք ծախենք այս Իսմայելացի վաճառականներուն. մեր ձեռքը թո՛ղ անոր չդպչի»։ Ամենքն ալ հաւանեցան, Յովսէփը դուրս հանեցին փոսէն եւ քսան դահեկանով անոնց ծախեցին։ Ռուբէն այդտեղ չէր, յետոյ երբ փոսին քով եկաւ ու Յով-



սէփն այն տեղ չգտաւ, պատռեց իր զգեստները, եկաւ եղբարցը քով եւ ըսաւ. «Պատանին փոսին մէջ չէ, ո՞ւր երթամ, ո՞ւր փնտռեմ զինքը»։

Յովսէփայ եղբայրները ուլ մը մորթեցին, և ըզգեստները անոր արեանը մէջ թաթխեցին ու հօրերնուն բերին ըսելով. «Այս միայն գտանք, տե՛ս, ա՞յս է քու որդւոյդ պատմուճանը թէ ոչ։»

Հայրն իսկոյն ճանաչեց եւ ըսաւ. «Սա իմ որդւոյս պատմուճանն է, չար գազանը պատառեր է զայն. չար գազանը յափշտակեր է զայն»։
Այն ատեն Յակոբ պատռեց իր զգեստները և սեւեր հագաւ եւ երկար ժամանակ իր որդւոյն մահուանը սուգը կը բռնէր. բոլոր որդիքը կուգային մխիթարելու հայրերնին, բայց նա չէր ուզեր մխիթարուիլ ու կ՚ըսէր. «Այս ցաւովս ես պէտք է գերեզման իջնեմ իմ որդւոյս ետեւէն»։ Այսպէս կ՚ողբար հայրը իր Յովսէփ որդին։

—

«Ամենայն որ ատեայ զեղբայր իւր, մարդասպան է»։ Յով. Գ. 13.

25.

Յովսէփ Պետափրէսի տունը

Վաճառականները զՅովսէփ Եգիպտոս տարին։ Պետափրէս անունով մէկը որ Փարաւոնի քով դահճապետի պաշտօն կը վարէր՝ գնեց զայն Իսմայելացիներէն։ Աստուած Յովսէփայ հետն էր. ինչ որ կ՚ընէր կը յաջողէր, այնպէս որ շուտով Պետափրէսի սիրելին եղաւ։ Պետափրէս՝ իր տանը բոլոր կառավարութիւնը անոր յանձնեց. Աստուած օրհնեց եգիպտացւոյն տունը Յովսէփի պատճառով։

Քիչ ժամանակէ յետոյ Յովսէփայ եւ Պետափրէսի կնոջ մէջ անհամաձայնութիւն պատահեցաւ· կինը իր ամուսնոյն գանգատեցաւ եբրայեցի ծառայէն եւ նա ալ հրամայեց զՅովսէփ բանտ նետել։

—

«Զի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, եւ ո՛չ ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր։» Եսայի· ծե· 8·

Իմ մտածմունքներս ձեր մտածմանց նման չ՚են եւ ոչ ալ իմ ճանապարհներս ձեր ճանապարհաց նման։

«Եւ յիշեա՛ դու զՏէր Աստուած քո զամենայն աւուրս կենաց քոց, եւ մի՛ մեղանչիցես դու եւ կամ անցանիցես պատուիրանօք նորա»։ Տովբ· դ· 6·

Քու ամբողջ կենաց ընթացքիդ մէջ զԱստուած աչքիդ առջեւ եւ սրտիդ մէջ ունեցիր· հսկէ քու վրադ որ յանցանք եւ Աստուծոյ պատուիրանաց դէմ չգործես։

26·

Յովսէփայ բարծրանալը

Ա·

Աստուած զՅովսէփ կը պաշտպանէր, բանտապետը սկսաւ հաշտ աչքով անոր վրայ նայիլ եւ բոլոր յանցաւորները ու բանտը՝ Յովսէփին յանձ-

ներ էր։ Յովսէփ այնտեղ ամեն բան կարգադրողն էր և ինչ որ կարգադրէր, Աստուած ալ կը յաջողէր անոր։

Ժամանակ մը յետոյ պատահեցաւ որ թագաւորին տակառապետը եւ մատակարարը յանցանք մը գործեցին իրենց տիրոջ դէմ, թագաւորն երկուքին ալ շատ բարկացաւ և հրամայեց զանոնք բանտ դնել· Նոյն գիշերը երկուքն ալ երազ տեսան։ Հետեւեալ առաւօտուն Յովսէփ անոնց մօտեցաւ եւ շատ տխուր տեսնելով զիրենք՝ հարցուց· «Ի՞նչ է պատճառը որ այդպէս տխուր էք»· Պատասխանեցին· «Երազ տեսանք եւ չկայ մէկը որ կարենայ զայն մեկնել»· Յովսէփ ըսաւ· «Երազի մեկնութիւնը Աստուծոյ գործն է, բայց եւ այնպէս պատմեցէք ինծի։»

Նախ տակառապետը սկսաւ պատմել իր երազը· «Ես տեսայ երազիս մէջ մի որթ, որոյ վրայ երեք հասած ողկոյզներ կային· Փարաւոնի բաժակը ձեռքս էր· ողկոյզին հատիկները կը ճմլէի բաժակիս մէջ եւ Փարաւոնին կը մատուցանէի·» Յովսէփ պատասխանեց· «Քու երազիդ մեկնութիւնն այս է· երեք ողկոյզները երեք օր կը նշանակեն· անմիջապէս թագաւորը կրկին պիտի յանձնէ քեզ քու պաշտօնդ· միայն երբ քու գործդ յաջողի՝ չմոռնաս զիս, թագաւորին քով միջնորդ եղիր որ զիս բանտէն ազատէ։ Ես յանցանք չ՚ունիմ, ես Եբրայեցւոց երկրէն եմ· զիս գողցան Եգիպտոս բերին· այս տեղ ալ ընաւ յանցանք չեմ գործած· զիս զուր տեղը բանտ դրին։»

Մատակարարը երբ տեսաւ որ Յովսէփ իր ընկերոջ երազին գեղեցիկ մեկնութիւն մը տըւաւ, սկսաւ ինքն ալ պատմել. «Ես ալ տեսայ երազիս մէջ երեք մեծ ափսէ գլխուս վրայ դըրուած. առաջին սկուտակին մէջ հացագործին կողմանէ պատրաստուած՝ Թագաւորին սիրած ամեն կերակուրները կային. այդ առաջին սկուտակին կերակուրներէն կուգային եւ կ՚ուտէին թռչունները»: Քու երազիդ մեկնութիւնն ալ այս է. «Երեք ափսէները երեք օր կը նշանակեն. երեք օրէն վերջը Փարաւոն գլուխդ կտրել պիտի տայ եւ քեզ փայտէ մը կախել տալով, թռչունները պիտի գան եւ մարմինդ պիտի ուտեն:»

Երեք օր յետոյ Թագաւորին ծննդեան օրն էր. մեծ խնճոյք պատրաստել տուաւ ծառայից համար. Թագաւորն ուրախութեան մէջ յիշեց տակառապետը եւ մատակարարը: Առաջնոյն իր նախկին պաշտօնը շնորհեց, իսկ երկրորդը փայտէ մը կախել տուաւ, ինչպէս որ Յովսէփ գուշակեր էր. սակայն տակառապետը չյիշեց զՅովսէփ, այլ մոռցաւ զինքը:

Բ.

Երկու տարի յետոյ Փարաւոն երազ մը տեսաւ, իբր թէ գետեզրը կանգնած է. գետին մէջէն դուրս ելան եօթը գեղեցիկ և գէր երինջներ ու սկսան մարգագետնի վրայ արածուիլ: Անոնց հետեւ տեսաւ եօթն ուրիշ տգեղ և վտիտ երինջներ, որոնք դուրս ելան և կուլ տուին այն եօ-

թը գեղեցիկ և գէր երինջները: Փարաւոն արթընցաւ ու նորէն քնացաւ:

Երկրորդ անգամ նորէն երազ տեսաւ, իբր թէ փունջէ մը եօթը գեղեցիկ ու ընտիր հասկեր յառաջ եկան: Անոնց հետեւ տեսաւ եօթն ուրիշ ազազուն, խորշակահար հասկեր ալ որք դուրս եկան և նախկին եօթը գեղեցիկ և ընտիր հասկերը կուլ տուին: Փարաւոն երբ արթնցաւ՝ շըփոթեցաւ. իսկոյն կանչել տուաւ Եգիպտոսի երազահաններն և իմաստուն անձինքն և պատմեց անոնց իր տեսած երազները, բայց ոչ ոք կրցաւ մեկնել:

Այն ժամանակ Թագաւորին տակառապետն ըսաւ. «Այսօր ես իմ յանցանքս յիշեցի. երբ Թագաւորը զիս և մատակարարն բանտարկել տըւաւ, գիշերը երկուքս ալ երազ տեսանք, մեզ մօտ եբրայեցի տղայ մը կար, մեր երազը մեկնեց և ինչպէս որ մեկնեց՝ այնպէս ալ կատարուեցաւ. ես դարձեալ իմ պաշտօնս ստացայ, իսկ մատակարարը կախուեցաւ:

Թագաւորն իսկոյն կանչել տուաւ զՅովսէփ. բանտէն դուրս բերին, ածիլուեցաւ, նոր զգեստներ հագաւ և Փարաւոնին ներկայացաւ: Թագաւորն ըսաւ անոր. «Ես երազ եմ տեսեր և ոչ ոք կարող է մեկնել, ինձ պատմեցին որ եթէ դու երազս լսես, կարող ես մեկնել»: Յովսէփ պատասխանեց. «Ես ինքս, տէ՛ր արքայ, ոչինչ կարող եմ ընել, այդ Աստուծոյ գործն է»:

Փարաւոն պատմեց Յովսեփայ իր երազը: Յով-

սէփ պատասխանեց. «Երկու երազներն ալ մի և նոյն նշանակութիւնն ունին, տէր արքայ, Աստուած այդ ձեւով իր ընելիքը կը յայտնէ Ձեզի. եօթն տարի Եգիպտոսի մէջ լիութիւն և առատութիւն պիտի ըլլայ, իսկ յետոյ պիտի յաջորդեն եօթն սովի տարիներ։ Առատութեան տարիները պիտի մոռցուին եւ սովը պիտի սպառէ ամբողջ երկիրը. իսկ Ձեր՝ մի և նոյն երազը երկրորդ անգամ տեսնելն, այդ կը նշանակէ, տէր արքայ, որ Աստուած կ՚ուզէ յայտնել թէ այդ իրողութիւնը անշուշտ պիտի կատարուի և շուտով։ Ուրեմն, տէր արքայ, պէտք է խելացի մարդ մը գտնել եւ Եգիպտոսի կառավարիչ նշանակել, որպէս զի առատութեան եօթն տարիներուն մէջ կերակրոյ պաշար հաւաքէ եօթն սովի տարիներուն համար և երկիրը կարենայ սովէն ազատիլ»։

Այս բանին թէ Թագաւորը եւ թէ անոր բոլոր ծառայողները շատ հաւնեցան։ Յետոյ Փարաւոն ըսաւ Յովսէփին. «Եւ ո՞վ կրնայ ըլլալ քեզմէ աւելի խելացի եւ իմաստուն. ամբողջ Եգիպտոսը քեզ կը յանձնեմ, իմ բոլոր հպատակներս քեզի պիտի հնազանդին այն պայմանով որ ես միշտ քու մեծդ պիտի ըլլամ։»

Այնուհետեւ Փարաւոն հանեց մատանին իր մատէն եւ Յովսէփայ մատը անցուց. բեհեզեայ հանդերձներ հագցնել տուաւ եւ ոսկեայ մանեակն ալ վզէն կախեց։ Իր կառքին մէջ նստեցնել տուաւ և մունետիկներու բերնով բարձրաձայն հրատարակեց ըսելով. «Ծունր դրէք Յովսէփին»։ Փարաւոն՝ Յովսէփայ եգիպտական ա-

նուն մը տուաւ՝ Փսոմփթոմփանէ, այսինքն աշխարհի ազատիչ և քուրմերուն աղջկանց մէկուն հետ ալ պսակեց։ Յովսէփ երկու որդի ունեցաւ, մէկուն անունը Եփրեմ, իսկ միւսինը Մանասէ դրաւ։

Յովսէփ երեսուն տարեկան էր երբ այս պաշտօնը ստացաւ։ Լիութեան այդ եօթը տարիներուն մէջ երկիրը լեցուեցաւ ամեն տեսակ բարիքներով։ Յովսէփ ժողվել տուաւ եօթն տարիներու բերքերը, ամբողջ երկրին մէջ պաշտօնեայներ նշանակեց, որոնք կը հսկէին եւ կը ժողվէին ցորենը Փարաւոնի շտեմարանաց մէջ։ Այդ ժողվուած ցորենը չափէ դուրս շատ էր և կը նըմանէր ծովի աւազին, զոր անկարելի էր համրել։

Անցան լիութեան եօթն տարիներն եւ եկան եօթն սովի տարիները . ամբողջ երկրին մէջ սով ինկաւ։ Սովը կը նեղէր զամենքը. ժողովուրդը կ՚աղաղակէր եւ հաց կը խնդրէր Թագաւորէն։ Փարաւոն պատասխանեց Եգիպտացւոց. «Գնացէ՛ք Յովսէփի մօտ եւ ինչ որ ձեզի ըսէ, այն ըրէք։» Յովսէփ իսկոյն բանալ տուաւ ամեն տեղ շտեմարանաց բերանները եւ ցորեն կը ծախէր բոլոր Եգիպտացւոց։ Հեռաւոր երկիրներէ եւս Եգիպտոս կուգային ցորեն գնելու, որովհետեւ ամեն տեղ սով կար։

—

«Աստուծոյ խորհուրդը սքանչելի է, եւ իմաստութիւնը գերազանց։» Եսայի. իը. 29.

«Զի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, և ո՛չ ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր՝

ասէ Տէր։ Այլ որպէս հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են ճանապարհք իմ ի ճանապարհաց ձերոց»։ Եսայի. ծե. 8. 9.

Իմ մտածմունքներս ձեր մտածմանց նման չեն, և ոչ ալ իմ ճամբաներս ձեր ճամբաներուն նման, կ'ըսէ Աստուած. այլ ինչպէս որ երկինքը երկրէս հեռի է, այնպէս ալ իմ ճամբաներս ձեր ճամբաներէն։

27.

Յովսէփայ եղբայրներն Եգիպտոս կուգան

Ա.

Քանանացւոց երկիրն ալ սով ընկած էր։ Երբ Յակոբ լսեց որ Եգիպտոս շատ ցորեն կայ, կանչեց իւր որդիքը եւ ըսաւ. «Փութացէ՛ք, գնացէք Եգիպտոս ցորեն գնելու, որպէս զի սովէ չմեռնինք»։ Այսպէս Յովսէփայ տասը եղբայրները Եգիպտոս եկան ցորեն գնելու համար։ Յակոբ իր կրտսեր որդին Բենիամինը չղրկեց միւսներուն հետ, որովհետեւ կը վախէր թէ մի՛ գուցէ վտանգի ենթարկուի։

Յովսէփայ եղբայրները Եգիպտոս եկան և կ'ուզէին ցորեն գնել։ Անոնք Յովսէփը չճանչցան, երկրպագեցին և գլխակոր առջեւը կանգնած էին. բայց Յովսէփ իսկոյն ճանչցաւ և յիշեց այն երազը որ անգամ մը տեսեր էր իւր եղբարցը վրայօք։ Իբրեւ օտարական ներկայացաւ անոնց, խիստ լեզ-

ուով խօսեցաւ անոնց հետ և հարցուց. «Ուստի կուգաք»։ Անոնք պատասխանեցին. «Քանանացւոց երկրէն, որպէս զի ցորեն գնենք»։ Յովսէփ ըսաւ. «Դուք լրտեսներ էք, եկեր էք իմանալու, թէ մեր երկիրը ի՛նչ վիճակի մէջ է»։ Անոնք պատասխանեցին և ըսին. «Ո՛չ, տէ՛ր, քու ծառաներդ ենք, եկանք ցորեն գնելու, լրտես չենք. մենք տասներկու եղբայր եմք, մէկ հօր որդի, մեր հայրը Քանանացւոց երկիրն է, կրտսեր եղբայրնիս ալ տունն է. իսկ միւս եղբայրնիս այլ եւս չկայ»։ Յովսէփ պատասխանեց. «Դուք լրտեսներ էք», ու երեք օր զանոնք բանտը դրաւ։

Երրորդ օրը Յովսէփ ըսաւ անոնց. «Ձենէ մէկը պէտք է բանտը կապուած մնայ, իսկ դուք ձեր գնած ցորենը տուն տարէք, որ սովը չ'նեղէ, վերադարձին ձեր կրտսեր եղբայրն ալ իմ քովս բերէք, այն ժամանակ ես կը հաւատամ ձեր խօսքերուն»։ Եղբայրները սկսան իրարու երես նայիլ եւ ըսել. «Այս բոլորը որ մեր գլխուն կուգայ՝ Յովսէփայ պատճառաւն է. մենք անոր պաղատանաց չ'լսեցինք, երբ նա մեզի կ'աղաչէր. ատոր համար ալ Աստուած վրէժխնդիր կ'ըլլայ մեզի դէմ»։ Այդ միջոցին Ռուբէն խօսեցաւ. «Ես ձեզի չէի ըսեր թէ այդ մանկան դէմ պէտք չէ մեղանչել, դուք ինձ չլսեցիք. ատոր համար ալ այս պատիժը մեր գլխուն եկաւ»։

Անոնք այնպէս կը կարծէին թէ Յովսէփ իրենց խոստովանութիւնը չհասկնար, որովհետեւ թարգմանի բերնով կը խօսէր։ Յովսէփ երեսը դար-

ձուց եւ սկսաւ լալ։ Յետոյ դարձաւ եւ անոնց աչաց առջեւ Շմաւոնը կապել տուաւ, և հրամայեց որ անոնց տոպրակները ցորենով լեցնեն ու իւրաքանչիւրին ցորենի գինն ալ տոպրակին մէջ դնեն․ ասկէց զատ հրամայեց ճանապարհի պաշար եւս տալ։ Այդպէս ամեն բան իւր հրամանին համաձայն կատարուեցաւ։

Բ.

Յովսէփայ եղբայրները ցորենը բեռնաւորեցին էշերու վրայ և սկսան հեռանալ Եգիպտոսէն։ Ճամբան եղբայրներէն մէկը բացաւ պարկին բերանը՝ իշուն կերակուր տալու համար եւ տեսաւ որ իւր ցորենին գինը պարկին մէջն է դրուած․ իսկոյն իմաց տուաւ եղբայրներուն ու ըսաւ․ «Իմ ցորենիս փողը պարկին մէջն է դրուած»։ Ամենքը զարհուրեցան ու կ՚ըսէին իրարու․ «Այս ի՞նչ փորձանք է, որ Աստուած մեր գլխին կը բերէ»։

Երբ տուն հասան Քանանացւոց երկիրը, պատմեցին այս անցքն իրենց հօրն ու ըսին․ «Այն երկրին տէրը մեզի հետ խիստ լեզուով խօսեցաւ, զմեզ լրտեսներու տեղ դրաւ․ իսկ մենք անոր պատասխանեցինք թէ արդարախօս մարդիկ ենք, մենէ մէկը անհետացած է, իսկ կրտսերն ալ հօրերնուս քովն է ըսինք։ Երկրին իշխանը ըսաւ մեզի․ «Թողէ՛ք ձեր եղբայրներէն մէկը իմ քովս, եւ դարձէք եւ ձեր կրտսեր եղբայրը ինձ բերէք, թէ ոչ՝ ձեր խօսքին չեմ հաւատար, այն ժամանակ կը համոզուիմ որ դուք լրտեսներ չէք այլ

արդարախօս անձինք ու ձեր եղբայրն ալ ետ կուտամ»։

Երբ իրենց պարկերու ցորենները կը թափէին, իւրաքանչիւր ոք ցորենին գինը իւր տոպրակին մէջ գտաւ․ ամենքն ալ զարհուրեցան մնացին Յակոբայ հետ։ Հայրերնին ըսաւ անոնց․ «Դուք զիս անորդի ըրիք․ Յովսէփ չ՚կայ այլ եւս, Շմաւոնն ալ պակսեցաւ, հիմա ալ Բենիամինը կ՚ուզէք տանիլ․ այս բոլոր անբաղդութիւնը իմ գլխո՞ւս կուգայ»։ Ռուբէն պատասխանեց հօրն ու ըսաւ․ «Բենիամինը ինձ յանձնէ, ես ետ կը բերեմ զնա։» Յակոբ պատասխան տուաւ․ «Իմ որդիս թող չ՚եմ տար որ ձեզ հետ Եգիպտոս տանիք, որովհետեւ անոր եղբայրը չկայ, ինք միայն մնաց Ռաքելէն․ եթէ ճանապարհին վտանգ մը պատահի անոր, զիս ծերութեանս օրերուն մէջ տրտմութեամբ եւ անմխիթար գերեզման կ՚իջեցնէք։»

Գ.

Սովը երթալով կը սաստկանար երկրին մէջ․ երբ Եգիպտոսէ բերուած ցորենը սպառեցաւ, Յակոբ ըսաւ իւր որդւոց․ «Դարձեալ գնացէք այն երկիրը ու կերակուր գնեցէք»։ Յուդա պատասխանեց․ «Այն երկրին իշխանը մեզ ըսաւ, եթէ ձեր եղբայրը հետերնիդ չբերէք, երեսս մի՛ տեսնէք․ թող տուր Բենիամինին, որ նա ալ մեզի հետ գայ, ոչ մի վտանգ չ՚պատահիր անոր, ես երաշխաւոր կ՚ըլլամ, ինձմէ պահանջէ․ եթէ

անոր բան մը պատահի, եթէ ես զայն չբերեմ և քու առջեւդ չկանգնեցնեմ, թո՛ղ իմ ամբողջ կենացս մէջ յանցաւոր մնամ»։

Յակոբ պատասխանեց. «Ուրեմն ինչպէս որ կ'ուզէք այնպէս ըրէք. առէք հետերնիդ մեր երկրին ընտիր բերքերէն մեղր, խունկ, ստաշխն, բեւեկն եւ ընկոյզ եւ իշխանին ընծայ տարէք։ Զը մոռնաք ձեր պարկերուն մէջ գտնուած փողը ետ տանիլ, թերեւս սխալմունք մ'է այդ որ պատահեր է. ուրիշ փող եւս առէ՛ք հետերնիդ։ Թո՛ղ գթասիրտն Աստուած քաղցրացնէ իշխանին սիրտը ձեր վրայ, որպէս զի միւս եղբայրնիդ Շմաւոնն ալ արձակէ»։ Եղբայրները առին ընծաները և փողը եւ Բենիամինի հետ ճանապարհ ընկան դէպ ի Եգիպտացւոց աշխարհը։

Գ.

Երբ Յովսէփ իր եղբայրները եւ Բենիամինը տեսաւ, ըսաւ հազարապետին. «Տուն տար այս մարդիկը եւ սեղանի պատրաստութիւն տես, որովհետեւ անոնք ինծի հետ պէտք է ճաշեն։» Հազարապետը Յովսէփայ տունը տարաւ զիրենք. երբ տուն եկան, եղբայրները երկիւղալից սկսան խօսիլ ու ըսել իրարու. «Առաջին անգամ մեր պարկերուն մէջ փող գտնուելուն համար զմեզ այս տեղ բերին. իշխանին դիտաւորութիւնը զմեզ յանցաւոր հանել եւ ծառայ ընել է»։ Ուստի մօտեցան եղբայրները հազարապետին եւ ըսին. «Ո՜վ, տէ՛ր, մենք անկէ առաջ եկեր էինք այս տեղ կերակուր գնելու, երբ տուն դարձանք

եւ մեր պարկերուն բերանները բացինք, մեզմէ իւրաքանչիւրը իր վճարած փողը պարկին մէջ գտաւ։ Մենք այդ փողը ետ բերած ենք եւ բաց անկից ուրիշ փող եւս բերած ենք ցորեն գնելու համար, մենք չգիտենք թէ այդ փողը ո՛վ է դըրեր մեր պարկերուն մէջ։»

Հազարապետը պատասխանեց անոնց. «Մի վախնաք, այդ փողն Աստուած դրեր է ձեր պարկերուն մէջ. ես մեր տուած ցորենին փողն ամբողջապէս ստացեր եւ հաշիւը փակեր եմ։» Շըմաւոնն ալ բանտէն դուրս ելաւ եւ միատեղ Յովսեփայ տունը գնաց. Հազարապետը հրամայեց որ ջուր բերեն եղբայրներուն որպէս զի ոտքերնին լուանան եւ էշերուն ալ կերակուր տալ տուաւ։ Եղբայրները բերած ընծանին պատրաստ պահեցին, որովհետեւ լսեր էին թէ Յովսէփ իրենց հետ պիտի ճաշէր։

Երբ Յովսէփ տուն եկաւ, եղբայրները ընծաները առին և երեսի վրայ ինկան։ Յովսէփ սիրով ողջունեց զանոնք եւ ըսաւ. «Ինչպէ՞ս է ձեր ծերունի հայրը, որու համար ինձ առաջին անգամ պատմեցիք»։ Անոնք պատասխանեցին. «Մեր հայրը՝ քու ծառադ կենդանի է դեռ և առողջ.» ու գլուխնին խոնարհեցուցին։ Յովսէփ նայեցաւ, տեսաւ Բենիամինը եւ ըսաւ. «Կարծեմ սա է ձեր կրտսեր եղբայրը, որուն համար ինձ պատմեցիք։» Յետոյ աւելցուց. «Աստուած թող ողորմի քեզ, որդեա՛կ»։ Յովսէփ հեռացաւ իր սենեակը եւ սկսաւ լալ։ Յետոյ երեսը լուաց, սիրտը պնդա-

ցուց, դուրս ելաւ և պատուիրեց որ հաց բերեն։ Իւրաքանչիւրին համար առանձին առանձին ճաշ բերին, Յովսէփին առանձին, եղբայրներուն ալ առանձին առանձին, նոյնպէս եւ այնտեղ եղող Եգիպտացւոց. Եգիպտացիք սովորութիւն չունէին Իսրայելացւոց հետ ճաշելու, որովհետեւ զանոնք պիղծ կը համարէին։

Ծառաները՝ Յովսէփայ եղբայրները իրենց տարիքին համեմատ նստեցուցին, առաջ մեծերը, յետոյ կարգաւ պզտիկները եւ սկսան կերակուր բաժնել։ Բենիամինի բաժինը հինգ անգամ աւելի էր լցուած՝ քան թէ միւսներուն։ Այս բանին վրայ եղբայրները շատ զարմացան։

—

« Զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ » :
Թ. ա. Գաղ. Զ. 7.

Ինչ որ կը ցանես, այն կը հնձես :

28.

Յովսէփ կը յայտնուի եղբայրներուն

Ա.

Յովսէփ հրամայեց հազարապետին եւ ըսաւ. « Անոնց պարկերը մինչեւ բերանը լեցնել տուր ցորենով եւ իւրաքանչիւրին փողը իւր պարկին մէջ դի՛ր, իսկ իմ սկիհս՝ իրենց կրտսեր եղբօր

պարկին մէջ դիր։» Հազարապետը կատարեց Յովսէփայ հրամանը։ Հետեւեալ օրը եղբայրները ճամբայ ելան դէպ ի Խառան իրենց էշերով։ Դեռ քաղքէն նոր դուրս ելեր էին, Յովսէփ՝ հազարապետն իրեն մօտ կանչեց ու ըսաւ. « Շտապէ այն մարդոց ետեւէն, հասի՛ր անոնց և ըսէ՛. ինչո՞ւ համար դուք բարութեան փոխարէն չարութիւն ըրիք. ինչո՞ւ համար իմ տիրոջ սկիհը, ուսկից ինք միշտ կը խմէր՝ գողցաք. այդ ի՛նչ չարութիւն է ձեր ըրածը » ։

Հազարապետը օտարականաց ետեւէն հասաւ եւ այսպէս ալ ըսաւ անոնց։ Իսկ օտարականք պատասխանեցին եւ ըսին. «Այդ ի՛նչ խօսք է. Աստուած մի՛ արասցէ որ մենք այդպիսի բան ըրած ըլլանք. այն փողը զոր մենք մեր պարկերուն մէջ գտանք՝ քեզ ետ բերինք, ինչպէ՞ս կարելի է որ մենք քու տիրոջդ տունէն արծաթ կամ ոսկի գողնանք։ Որու քով որ սկիհը գտնաք, թող նա մեռնի. իսկ միւսները տիրոջդ ծառաները ըլլան » ։ Հազարապետը պատասխանեց. « Որու քով որ սկիհը գտնուի, թող նա իմ ծառաս ըլլայ, իսկ միւսներդ ազատ էք »։

Անմիջապէս վար իջեցուցին պարկերը ու ըսկըսան բերանները բանալ։ Հազարապետը նայեցաւ մեծէն մինչեւ փոքրը ու ամենէն վերջը Բենիամինի պարկին մէջէն գտաւ սկիհը։ Եղբայրները սկսան իրենց զգեստները պատռել, ամեն մէկը իւր էշը բեռցուց ու նորէն քաղաք վերադարձան։

Բ.

Յուդա իր եղբարց հետ դարձաւ Յովսէփայ տունը եւ երեսի վրայ գետին ինկաւ։ Յովսէփ ըսաւ անոնց. «Այդ ի՞նչ ըրիք»։ Յուդա պատասխանեց. «Ի՞նչ պատասխանենք եւ կամ ինչպէ՞ս արդարանանք, ահա այս տեղ ենք ամենքս եւ նա՝ որուն քով որ սկիհը գտնուեցաւ եւ մենք ամենքս՝ քու ծառաներդ ենք»։

Իսկ Յովսէփ պատասխանեց. «Այդպիսի բան ես չեմ ընդունիր. որուն քով որ սկիհը գտնուեցաւ՝ նա միայն ըլլայ իմ ծառաս, իսկ միւսներդ ազատ էք, գնացէք խաղաղութեամբ ձեր հօր քով»։

Այն ժամանակ առաջ անցաւ Յուդա և ըսաւ. «Տէ՛ր, թոյլ տուր ծառայիդ քու առջեւդ խօսք մ'ըսելու, մի՛ բարկանար անոր համարձակութեանը վրայ, որովհետեւ փարաւոնէն յետոյ առաջին մարդն ես։ Մենք առաջ քեզ պատմեցինք որ տունը ծերունի հայր մը եւ կրտսեր եղբայր մը ունինք, եւ թէ մեր հայրը զայն շատ կը սիրէ։ Դու մեզ պատասխանեցիր, եթէ ձեր կրտսեր եղբայրը ինծի մօտ չ'բերէք՝ երեսս մի՛ տեսնէք։ Մենք մեր հօրը հարցուցինք եւ կ'ուզէինք մեր կրտսեր եղբայրը քեզի մօտ բերել։ — Նա ըսաւ մեզ. «Դուք գիտէք որ Հռաքէլը երկու որդի ծնաւ, մէկէն զրկուեցայ, զայն դեռ մինչեւ այս օրս չեմ տեսած, հիմա միւսն ալ կ'ուզէք տանիլ. եթէ ճամբան հիւանդութիւն կամ դժբաղդութիւն մը պատահի, այն ժամանակ զիս ծեր ծեր գերեզման կ'իջեցնէք տրտմութեամբ։» — Ես՝ քու ծառադ

երաշխաւոր եղայ հօրս ու ըսի, որ եթէ ետ չը բերեմ, իմ ամբողջ կենացս մէջ պատասխանատու մնամ իր առջեւ։ Ասոր համար զիս ընդունէ այդ մանկան փոխարէն իբր ծառայ, իսկ անիկայ թո՛ղ եղբարցը հետ հօրը քով դառնայ, որովհետեւ առանց այդ մանկան ինչպէ՞ս կարող եմ ես հօրս աչքին երեւալ, ինչպէ՞ս տեսնեմ ես այն սրտնեղութիւնը զոր ծերունի հայրս պիտի կրէ, երբ զԲենիամին մեզ հետ չտեսնէ»։

Յովսէփ ա՛լ երկար չկրցաւ ինքզինքը բռնել, հրամայեց բոլոր Եգիպտացւոց դուրս ելնել ու սկսաւ ինք բարձրաձայն այնպէս լալ, որ Եգիպտացիք եւ փարաւոնի ծառայք դրսէն անոր ձայնը լսեցին. և վերջապէս ըսաւ իր եղբայրներուն. «Ես Յովսէփն եմ»։ Վախցան եղբայրները, չ'գիտէին թէ ի՛նչ պատասխանեն, իսկ Յովսէփ շարունակեց. «Մօտ եկէք»։ անոնք մօտեցան. «Ես Յովսէփն եմ ձեր եղբայրը, զոր Եգիպտացւոց վաճառեցիք, մի՛ վախնաք, մի՛ մտածէք ամենեւին թէ ես անոր համար ձեզի դէմ կը վշտանամ, ձեր բաղդաւորութեան համար Աստուած զիս այս տեղ ուղարկեց, շտապեցէ՛ք ուրեմն տուն եւ ըսէ՛ք հօրս՝ որ Աստուած զիս ամբողջ Եգիպտոսի տէր ըրած է. թող աճապարէ՛, ըլլայ շուտով իմ քովս գայ, թող Գեսեմ երկիրը բնակի որ ինծի մօտ ըլլայ. թող հոն բնակին նմանապէս իր որդիքը, թոռները, ոչխարները, եւ ինչ որ ունի բոլորն ալ թող հետ բերէ, ես անոր բոլոր պակասութիւնը կը հոգամ, որովհետեւ տակ

հինգ տարի դեռ պիտի շարունակէ․ ես թոյլ չեմ տար որ անոր տունը կորսուի․ պատմեցէք հօրս թէ ինչպիսի փառք ու պատիւ ունիմ Եգիպտոսի մէջ, պատմեցէ՛ք ինչ որ տեսաք»։

Փարեցաւ Յովսէփ իր հարազատ եղբօր Բենիամինի վիզը ու լացաւ․ Բենիամին ալ անոր վզին փարեցաւ ու սկսաւ լալ։ Յովսէփ համբուրեց բոլոր եղբայրները եւ շարունակ կուլար, յետոյ եղբայրները սկսան իրեն հետ խօսիլ։

Գ․

Երբ այս լուրը Փարաւոնի ականջին հասաւ՝ թէ Յովսէփայ եղբայրները եկեր են, շատ ուրախացաւ թէ ինք եւ թէ իր բոլոր ծառաները։ Փարաւոն Յովսէփայ բերնով յայտնեց եղբայրներուն՝ որ իրենց էշերը առնելով՝ Քանանացւոց երկիրը երթան եւ իրենց հայրը տնով տեղով Եգիպտոս բերեն, եւ խոստացաւ անոնց շատ բարիք ընելու։

Յովսէփ կառքեր տուաւ անոնց, նմանապէս ճամբու պաշար եւ իւրաքանչիւրին երկու ձեռք զգեստ, իսկ Բենիամինի երեք հարիւր դահեկան եւ հինգ ձեռք զգեստ․ բաց ի ասոնցմէ հօրը համար տասը էշ ուղարկեց՝ Եգիպտոսի բերքերով բեռնաւորուած, և տասն ալ ջորի ցորենով և հացով, որպէս զի հայրը ճանապարհին նեղութիւն չկրէ․ Յովսէփ իր եղբայրները այսպէս ճամբայ դրաւ։

Անոնք հեռացան Եգիպտոսէն եւ եկան Քանանացւոց երկիրը իրենց հօրը քով ու պատմե-

ցին այս բոլորը, թէ Յովսէփ կենդանի է դեռ, եւ ամբողջ Եգիպտոս անոր իշխանութեան տակն է․ Յակոբ զարմացաւ այս բանիս վրայ եւ չէր հաւատար։ Այնուհետեւ պատմեցին ինչ որ իրենց գլխէն անցեր էր։ Երբ Յակոբ կորուսեալ որդւոյն ղրկած կառքերը տեսաւ՝ սթափեցաւ ու ըսաւ․ «Միթէ իմ որդիս Յովսէփը դեռ կենդանի՞ է․ շտապեմ զայն տեսնել քանի որ չեմ մեռած։»

—

«Որ ծածկէ զամբարշտութիւն իւր՝ ոչ յաջողեսցի, իսկ որ պատմէ եւ յանդիմանէ, սիրելի եղիցի։» Գիրք Առակաց իը․ 13․

Ով որ իր յանցանքը կ'ուրանայ, միշտ կը յայտնուի․ իսկ ով որ կը խոստովանի, անոր գործը կը յաջողի։

«Զբարերարութիւն եւ զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս հաճի Աստուած։» Թ․ Պօղ․ ա․ եբր․ ժգ․ 16․

Բարիք ընելը եւ տեղեկութիւն հաղորդելը մի՛ մոռնաք, որովհետեւ այսպիսի զոհաբերութիւն կը սիրէ Աստուած։

Աստուծոյ խորհուրդը սքանչելի է եւ իր իմաստութիւնը գերազանց։

29.

Յակոբ Եգիպտոսի մէջ

Ա.

Յակոբ գնաց դէպ ի Եգիպտոս իր բոլոր ստացուածքով։ Երբ Բերսաբէ հասաւ, Աստուած ըսաւ անոր տեսիլքի մը մէջ. «Ես քու հօրդ ամենակարող Աստուածն եմ. մի՛ վախնար, գնա՛ Եգիպտոս. այն տեղ զքեզ մեծ ազգ պիտի ձեւացնեմ, ես քեզի հետ կուգամ Եգիպտոս, այն տեղ Յովսէփ պէտք է որ քու աչքերդ փակէ։»

Այս խօսքերէն յետոյ վեր ելաւ Յակոբ եւ հեռացաւ Բերսաբէէ, իր որդիքը ու ծառաները լծեցին Յովսէփի ուղարկած կառքերը ու նստեցուցին անոնց մէջ իրենց զաւկները ու կանայքը։ Առին իրենց հետ ամեն կենդանիները եւ ինչքերը որ Քանանացւոց երկիրն էին և այսպէս Յակոբ վաթսուն եւ վեց հոգւով Եգիպտոս տեղափոխուեցաւ։

Յակոբ առաջուց Յուդան՝ Յովսէփին քով խրկեց, որպէս զի իր գալուստը յայտնէ անոր. Յովսէփ այս լուրն առնելուն պէս իսկոյն լծել տուաւ կառքերը եւ եկաւ հայրն դիմաւորելու։ Երբ Յովսէփ իր հայրը տեսաւ, վիզն ընկաւ ու երկար ժամանակ լացաւ։ Յակոբ ըսաւ. «Հիմա հանգիստ կը մեռնիմ քեզ տեսնելէս յետոյ»։ Այն ժամանակ Յովսէփ խօսքն ուղղեց իր հօրն

ու եղբայրներուն եւ ըսաւ. «Ես կ՚երթամ փարաւոնի իմաց տալու ձեր գալուստը»։

Բ.

Յովսէփ եկաւ փարաւոնի մօտ և ըսաւ. «Հայրըս եւ եղբայրներս եկեր են Քանանացւոց երկրէն իրենց ոչխարներով, տաւարներով եւ բոլոր ստացուածքով ու Գեսեմայ երկիրն են»։

Յովսէփ առաւ իր եղբայրներէն հինգն և ներկայացուց փարաւոնի։ Թագաւորը հարցուց անոնց. «Ինչո՞վ կը պարապիք»։ անոնք պատասխանեցին. «Քու ծառաներդ եւ մեր հայրը խաշնարած ենք, մենք եկանք քու երկիրդ բնակելու, որովհետեւ քու ծառաներդ արօտատեղի չ՚ունին իրենց անասնոց համար. սով կը նեղէ ըզմեզ Քանանացւոց երկիրը, թոյլ տուր մեզ Գեսեմ բնակիլ»։ Փարաւոն ըսաւ Յովսէփին. «Ընտրէ հօրդ եւ եղբայրներուդ բնակութեան համար իմ երկրիս ամենալաւ տեղը. բնակեցուր զանոնք Գեսեմ. եւ եթէ եղբայրներուդ մէջ քաջ եւ զօրաւոր մարդիկ կան, խաշանցս վերակացու կարգէ։»

Յովսէփ իր հայրն եւս ներկայացուց թագաւորին։ Փարաւոն հարցուց Յակոբին. «Քանի՞ տարեկան ես»։ Յակոբ պատասխանեց. «Իմ պանդխտութեան տարիները հարիւր եւ երեսուն են»։ Յակոբ օրհնեց զփարաւոն եւ հեռացաւ։

Յովսէփ՝ զհայրն եւ եղբայրները բնակեցուց Եգիպտոսի ամենապտղաւէտ երկիրներէն մէկուն

մէջ՝ ի Գեսեմ, ինչպէս որ Թագաւորը հրամայեր էր ու կը հոգար զամէնքը։

Գ.

Այսպէս Յակոբայ սերունդը բնակեցաւ Գեսեմայ երկիրը, ուր աճեցան եւ բազմացան։ Յակոբ Եգիպտոսի մէջ տասն և եօթը տարի ապրեցաւ. երբ մահուան օրը մօտեցաւ, կանչեց զՅովսէփ եւ ըսաւ. «Եթէ զիս կը սիրես, մի՛ թողուր զիս Եգիպտոսի մէջ, վերջին ցանկութիւնս է պապերուս մօտ հանգստանալ, հանէ զիս այս երկրէն եւ պապերուս գերեզմանին մէջ թաղել տուր։» Յովսէփ պատասխանեց. «Ինչպէս որ քու կամքդ է այնպէս կ'ընեմ։» Այնուհետեւ խոնարհեցուց Յակոբ իր գլուխը եւ կ'աղօթէր անկողնին մէջ։

Իմաց տուին Յովսէփայ, որ հայրը հիւանդ էր։ Յովսէփ իսկոյն առաւ իր երկու որդիքը Եփրեմն ու Մանասէն ու գնաց հօրը քով։ Յակոբ երբ իմացաւ որ Յովսէփ կուգայ, զօրացաւ՝ տեղէն վեր ելաւ, նստեցաւ անկողնին մէջ ու ըսաւ Յովսէփին. «Ամենակարողն Աստուած տեսիլքիս մէջ երեւցաւ ինծ Քանանացւոց երկիրը, օրհնեց զիս և ըսաւ. —Ես զքեզ մեծ ազգ պիտի ձեւացնեմ, այս երկիրը քու ժառանգներուդ պիտի տամ։ Քու երկու որդիքներդ՝ Եփրեմն ու Մանասէն իմս են, ինչպէս Ռուբէնն ու Շմաւոնը»։

Յակոբ երկնցուց ձեռքերը եւ Յովսէփայ երկու որդւոց գլուխներուն վրայ դնելով օրհնեց ու ըսաւ. «Իմ հարցս Աստուածը թո՛ղ օրհնէ այս

մանուկներն, որպէս զի ասոնք աճին եւ բազմանան երկրիս վրայ»։ Յետոյ Յովսէփայ հետ խօսեցաւ ու ըսաւ. «Ահա ես կը մեռնիմ. Աստուած ձեզի հետ ըլլայ ու կրկին ձեր հարց երկիրը զքեզ դարձնէ։»

Այնուհետեւ կանչեց Յակոբ իր բոլոր որդիքը, օրհնեց իւրաքանչիւրը յատուկ օրհնութեամբ։ Նա իր չորրորդ որդին Յուդան՝ բոլոր եղբարցը վրայ գլխաւոր դրաւ։ Յակոբ խնդրեց իր որդւոցմէ եւ ըսաւ. «Զիս թաղեցէք Քանանացւոց երկիրը՝ Մամբրէի մօտ գտնուող այրին մէջ»։ Երբ իր պատուէրը վերջացուց, գոցեց աչքերը եւ բաժնուեցաւ ամենէն։ Յովսէփ ընկաւ հօրը երեսին վրայ, կուլար եւ կը համբուրէր զայն, հրամայեց բժշկաց որ զմռսեն. անոնք ալ կատարեցին իր հրամանը։ Քառասուն օր այսպէս մնաց, որովհետեւ զմռսածները այսքան օր կը պահէին։ Եգիպտացիք սուգ բռնեցին Յակոբայ մահուան համար եօթանասուն օր։

Երբ սգոյ օրերն անցան. Յովսէփ խօսեցաւ Փարաւոնի և ըսաւ. «Իմ հայրս խնդրեց ինձմէ որ ես զինքը Քանանացւոց երկիրը թաղեմ. ես կ'երթամ այն երկիրը եւ հայրս թաղելէ յետոյ կը վերադառնամ»։ Փարաւոն ըսաւ. «Գնա՛ և թաղէ՛ հայրդ, ինչպէս որ խոստացեր ես»։

Այսպէս Յովսէփ ճամբայ ելաւ դէպ ի Քանան։ Փարաւոնի ծառայները, նոյնպէս Յովսէփայ՝ իր եղբայրներուն եւ հօրը ծառայները՝ ուղեկից եղան։ Ինչպէս որ Յակոբ հրամայեց՝ այնպէս ըրին անոնք։ Դիակը տարին Քանանացւոց երկի-

րը եւ թաղեցին Մամբրէի մօտ՝ կրկին այրի մէջ, եւ յետոյ ամէնքն ալ Եգիպտոս վերադարձան։

—

«Պատուեա՛ զհայր քո եւ զմայր, զի երկայնակեաց լինիցես ի վերայ երկրի»։ Բ. Մով. Ի. 12.

Պատուէ՛ հայրդ ու մայրդ որպէսզի երկրիս վրայ երկար կեանք կարենաս վարել։

«Երանի՜ մեռելոց որք ի Տէր ննջեցին»։ Յայտ. Յովհ. ԺԴ. 13.

30.

Յովսէփայ մահը

Ա.

Յակովբայ մահուընէն յետոյ Յովսէփայ եղբայրները կը վախէին իրենց եղբօրմէն և կ'ըսէին. «Յովսէփ մեզ ոխ ունի, մեր չարութեան փոխարէնը անպատճառ պիտի հատուցանէ»։ Ուստի եկան իւր քով եւ ըսին. «Ներէ մեր բոլոր յանցանքներուն ու չարութիւններուն զոր մենք գործեցինք քեզի դէմ»։ Այս բանիս վրայ Յովսէփի սիրտը ելաւ եւ սկսաւ լալ։ Եղբայրները մօտենալով երեսի վրայ ինկան ու կ'ըսէին. «Մենք քու ծառաներդ ենք»։ Յովսէփ ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք. ես ալ Աստուծոյ ծառան եմ. դուք

ինծի դէմ թէև չարութիւն մտածեցիք, բայց Աստուած բարի ըրաւ։ Մի՛ վախնաք, ես թէ ըզձեզ եւ թէ ձեր զաւակներն կը կերակրեմ»։ Այսպէսով մխիթարեց իւր եղբայրները եւ սիրով կը խօսէր անոնց հետ։ Յովսէփ կը բնակէր Եգիպտոս իւր սերնդեան հետ։

Բ.

Երբոր Յովսէփ հարիւր տասը տարեկան եղաւ, ըսաւ եղբայրներուն. «Ահա ես կը մեռնիմ, Աստուած ձեզ պիտի այցելէ. Նա զձեզ այս երկրէն պիտի հանէ եւ պիտի տանի Քանանացւոց աշխարհը, զոր Աստուած Աբրահամու, Իսահակայ եւ Յակովբայ՝ երդուընցաւ ձեզի տալու։ Երբ դուք տեղափոխուիք, չ'մոռնաք իմ ոսկորներս ալ հետերնիդ տանելու»։ Այսպէս մեռաւ Յովսէփ, զմռսեցին զայն եւ թաղեցին Եգիպտոս։

—

«Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»։ Մատ. Ե. 9.

Երանի՜ խաղաղասէրներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիքը պիտի ըլլան։

«Եթէ որոց սիրեն զԱստուած. յամենայնի գործակից լինի ի բարիս»։ Թ. Հռովմ. Ը. 28.

Անոնք որ զԱստուած կը սիրեն, բարին անբաժան է իրենցմէ։

Գ·

ԴԱՏԱՒՈՐԱՑ ԴԱՐ

Ա·

ՄՈՎՍԷՍ

31·

Իսրայէլի նեղութիւններն Եգիպտոսի մէջ

Յովսէփ մեռած էր, նմանապէս իր բոլոր եղբայրները· բայց անոնց ժառանգները իրենց մահուընէն յետոյ այնքան բազմացեր էին որ երկիրը լեցուած էր։ Այն ժամանակ Եգիպտոսի մէջ նոր թագաւոր մը եկած էր որ զՅովսէփ չէր ճանչնար եւ ըսաւ Եգիպտացւոց· «Իսրայելացիք չափէ դուրս բազմացեր են եւ կրնան վտանգաւոր ըլլալ մեզ համար· եթէ պատերազմ մը պատահի, դիւրաւ կրնան մեր թշնամւոյն հետ միանալ եւ մեզի դէմ պատերազմ մղել, ուստի պէտք է զանոնք կերպով մը ոչնչացնել»։

Ասոր համար թագաւորը վերակացուներ նշանակեց՝ որպէս զի չարչարեն զանոնք։ Եգիպտացիք անգութ կերպով կ՚ստիպէին Իսրայելացիները աշխատելու, անոնց կեանքը կը դառնացընէին ամեն տեսակ ծանր աշխատանքներով, թէ աղիւսի գործարանաց մէջ եւ թէ դաշտերը· Փարաւոնի համար ամուր քաղաքներ եւ շտեմարաններ շինելու դատապարտուած էին Իսրայելացիք։ Սակայն որքան Եգիպտացիք կը ճնշէին, կը նեղէին Իսրայելացիներն, այնքան ասոնք կ՚աճէին եւ կը բազմանային։ Այն ժամանակ Փարաւոն հրամայեց որ Եբրայեցւոց բոլոր նորածին արու զաւակները ջուրը ձգեն, իսկ աղջկանց խնայեն։

—

«Երանի՜ քեզ, երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է»։ Ժող· Ժ· 17·

Երանի՜ այն երկրին, որուն թագաւորը ազնիւ եւ բարի է։

«Դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն եւ Աստուած խորհեցաւ վասն իմ ի բարութիւն»։ Ա·Մովս·Ծ·20·

Դուք ինձ համար չար բան մտածեցիք, իսկ Աստուած՝ բարի։

32·

Մովսէսի ծնունդը եւ ազատութիւնը

Այդ մի եւ նոյն ժամանակները՝ Ղեւի ցեղէն մէկը՝ Ղեւի անուամբ մարդու մը աղջկան հետ ամուսնացաւ եւ արու զաւակ մը ունեցաւ։ Մայրը չափէ դուրս կ՚ուրախանար, որ սիրուն երախայ մ՚էր ստացեր, ատոր համար եւս երեք ամիս շարունակ ծածուկ կը պահէր։ Երբ այլ եւս չ՚կարո-

ղացաւ թաքուցանել, եղեգեայ զամբիւղ մը հիւսեց, կպրաձիւթով ծեփեց, երեխան անոր մէջը դրաւ եւ Նեղոսի եղեգնուտ ափը թողուց։ Երեխային քոյրը հեռուանց կը դիտէր, որ տեսնէ թէ եղբօրն ինչ պիտի պատահի։

Թագաւորին աղջիկը Նեղոսի գետեզրն իջաւ լուացուելու համար եւ նաժիշտները գետափանց վրայ կը շրջագայէին։ Երբ թագաւորին աղջիկը հեռուանց տեսաւ զամբիւղը, աղախիններէն մին յուղարկեց որ առնու եւ իրեն բերէ։ Հրամանը կատարուեցաւ. զամբիւղն իրեն բերին, բացաւ ու տեսաւ որ մէջը մանուկ մը կուլար։ Թագաւորին դստեր գութը շարժեցաւ եւ ըսաւ. «Սա Եբրայեցւոց մանուկներէն պիտի լինի»։ Այն ժամանակ մանկան քոյրը մօտեցաւ եւ ըսաւ փարաւոնի աղջկան. «Արդեօք չե՞ս ուզեր եբրայեցի մայր մը կանչեմ, որ մանուկը կերակրէ»։ Փարաւոնի աղջիկն ըսաւ. «Գնա՛ կանչէ»։ Աղջիկն ըշտապեց մանկան ծնողը կանչելու. մայրը եկաւ։ Փարաւոնի աղջիկը ըսաւ. «Ա՛ռ այս մանուկը քովդ պահէ, մեծցո՛ւ, ես քու վարձքդ կը վճարեմ»։ Մայրն առաւ մանուկը եւ կը սնուցանէր զայն։ Երբ մեծցաւ, մայրը՝ թագաւորին աղջկան քով բերաւ. իշխանուհին որդեգրեց զայն և Մովսէս անուանեց, որ մեր լեզուով «Ջրէ հանուած» կը թարգմանուի։ Մովսէս ուսաւ Եգիպտոսի մէջ այն ժամանակի բոլոր գիտութիւնները, և իմաստուն մարդ մը եղաւ։

—

«Պահէ Տէր զամենեսեան, որք սիրեն զնա»։ Սաղ. ճխդ. 20.

«Զկեանս և ողորմութիւն եդեր ի վերայ իմ, այցելութիւն քո պահեաց զոգի իմ»։ Յոբ. Ժ. 12.

Կեանք եւ ողորմութիւն շնորհեցիր ինձ և քու խնամքդ պահեց իմ անձս։

33.

Մովսէսի փախուստը

Երբոր Մովսէս չափահաս եղաւ, գնաց իր իսրայելացի եղբայրներուն քով եւ տեսաւ անոնց կրած չարչարանքը։ Այն տեղ պատահեցաւ որ եգիպտացի մը իր իսրայելացի եղբայրներէն մին կը ծեծէր, նայեցաւ չուրջը եւ երբ տեսաւ որ ոչ ոք կայ՝ սպաննեց զեգիպտացին եւ հոն աւազի տակ թաղեց։

Յաջորդ օրն ալ դուրս ելաւ եւ տեսաւ որ երկու իսրայելացիք իրարու հետ կը կռուէին, դարձաւ յանցաւորին եւ ըսաւ. «Ինչո՞ւ քու ընկերդ կը ծեծես»։ Նա պատասխանեց. «Քեզ ո՞վ դրաւ մեր վրայ դատաւոր, չըլլայ որ զիս ալ եգիպտացւոյն նման ուզես սպաննել»։ Մովսէս զարհուրեցաւ, երբ իմացաւ որ ըրածը յայտնուեր է։ Այս իրողութիւնը Փարաւոնի ականջն ևս հասաւ եւ կ՚ուզէր զՄովսէս սպաննել. իսկ Մովսէս

փախաւ Մադիամու երկիրը, եւ այն տեղ ջրհորի մը մօտ կը բնակէր։

Մադիամու քուրմը եօթն աղջիկ ունէր, որք եկան ջրհորի մօտ եւ ջուր հանեցին եւ լեցուցին նաւուն մէջ՝ իրենց հօր խաշինքը ջրելու համար։ Ուրիշ հովիւներ ալ եկան եւ աղջիկներէն ջուրը յափշտակեցին։ Մովսէս իսկոյն ցատկեց, օգնեց աղջկանց, ջրհորէն ջուր հանեց եւ խաշանց խմցուց։

Երբ անոնք տուն դարձան, Յոթոր ըսաւ. «Ինչպէ՞ս պատահեցաւ որ այսօր շուտ վերադարձաք»։ Անոնք պատասխանեցին. «Եգիպտացի մարդ մը պաշտպանեց զմեզ հովուաց դէմ, ջուր հանեց և մեր ոչխարաց խմցուց»։ Յոթոր ըսաւ. «Ո՞ր տեղ է այն մարդը, ինչո՞ւ զայն հացի չը կանչեցիք»։ Եկան եւ Մովսէսը տուն հրաւիրեցին։ Մովսէս ալ Յոթորի ոչխարները կ՚արածէր և յետոյ անոր Սեփովրա աղջկան հետ ամուսնացաւ։

—

«Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ ոչ գործէ»: Թ. Յակ. Ա. 20.

Բարկացած մարդը Աստուծոյ նման արդար բան չկրնար գործել:

«Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ»: Թ. Եբր. ԺԲ. 8.

34.

Աստուած կը կանչէ զՄովսէս

Երբ Մովսէս իւր աներոջ Յոթորի խաշինքը կ՚արածէր անապատին մէջ, մօտեցաւ Քորեբ լերան։ Այն տեղ նշմարեց որ մորենի մը կը բորբոքէր բայց չէր այրեր։ Մովսէս մօտ գնաց իմանալու թէ ինչո՞ւ մորենին չ՚այրիր։ Իսկոյն թփին մէջէն ձայն մը եկաւ որ կ՚ըսէր. «Մովսէ՛ս, Մովսէ՛ս»։ Նա պատասխանեց. «Ի՛նչ է, Տէր»։ Ձայնը կըրկնուեցաւ. «Հանէ կօշիկներդ, այդ տեղը ուր որ դու կանգնած ես, սուրբ է»։ Ձայնը շարունակեց. «Ես եմ Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ Աստուածը»։ Մովսէս դարձուց իւր երեսը եւ ծածկեց ձեռքերով։ Աստուած ըսաւ. «Ես տեսայ իմ ժողովրդեանս նեղութիւնները Եգիպտոսի մէջ. անոր աղաղակը հասաւ ինծի, ես կ՚ուզեմ զանոնք այն երկրէն հանել եւ ուրիշ երկիր մը տանիլ. ես կ՚ուզեմ Քանանացւոց երկիրը անոնց տալ, ուր մեղր եւ կաթ կը բղխի. ես կ՚ուզեմ ըզքեզ Եգիպտոս ղրկել Փարաւոնի մօտ որ իմ ժողովուրդս ազատես»։ Մովսէս ըսաւ Աստուծոյ. «Եթէ ես Իսրայելացւոց քով երթամ և ըսեմ, թէ ձեր նախահարց Աստուածը՝ Եհովան զիս ուղարկեց ձեզ մօտ, անոնք չեն հաւատար եւ կ՚ըսեն. «Աստուած քեզի չ՚է երեւցեր»։ Աստուած ըսաւ. «Ձեռքիդ գաւազանը գետին ձգէ». ձգեց եւ գաւազանը օձ դարձաւ։ Վախցաւ Մովսէս եւ

հեռացաւ։ Աստուած ըսաւ. «Երկնցուր ձեռքդ եւ ագիէն բռնէ». օձն իսկոյն գաւազան դարձաւ։ Աստուած շարունակեց. «Ձեռքդ ծոցդ դիր». ձեռքը ծոցը դրաւ Մովսէս, բայց դուրս հանած պահուն տեսաւ որ ձեռքը բորոտեր էր, ձեան պէս սպիտակ դարձած։ Աստուած ըսաւ անոր. «Ձեռքդ ծոցդ դիր». կատարեց եւ տեսաւ որ միւս ձեռքին նման առողջ է։ Աստուած ըսաւ. «Եթէ այս երկու հրաշքներուն չեն հաւատար, Նեղոսէն ջուր կ՚առնուս, գետնի վրայ կը սրսկես եւ գետին ջուրը իսկոյն արիւն կը դառնայ»։

Մովսէս ըսաւ Աստուծոյ. «Տէ՛ր, ես ծանրալեզու եմ»։ Աստուած ըսաւ անոր. «Ո՞վ է որ մարդուս բերանը լեզու դրեր է, ո՞վ ստեղծեր է համրերն ու խուլերն. չէ՞ որ ես եմ ստեղծեր զանոնք. գնա՛, ես քու բերանդ կը բանամ եւ կը սորվեցնեմ՝ թէ ինչ պիտի խօսիս»։ Ասոր համար քու ճարտարախօս եղբայրդ Ահարոնը քեզի հետ կուգայ, անիկայ քու կողմանէդ ժողովրդեան իմ կամքս կը յայտնէ. նա քու բերնովդ կը խօսի եւ դու իմ փոխանորդս կ՚ըլլաս»։

Այնուհետեւ Մովսէս Յոթորի քով գնաց եւ ըսաւ. «Արձակէ զիս, որ ես վերստին Եգիպտոս եղբայրներուս քով երթամ»։ Յոթոր պատասխանեց. «Գնա՛ խաղաղութեամբ»։ Մովսէս առաւ իր կինը եւ երկու որդիքն ու գնաց Եգիպտոս։ Անապատին մէջ հանդիպեցաւ Ահարոնի և յայտնեց անոր Աստուծոյ պատգամները։ Մովսէս

տեղեկացաւ, որ այն ժամանակի փարաւոնն արդէն մեռեր է։ Այսպէս Մովսէս եւ Ահարոն փարաւոնի երկիրը գնացին եւ Իսրայելի ժողովրդեան ծերերը ի միասին հաւաքեցին։ Ահարոն յայտնեց անոնց այն բոլորը ինչ որ Աստուած Մովսէսի յայտներ էր։ Մովսէս ցոյց տուաւ այն նշանները ժողովրդեան առջեւ. երբ ծերերն իմացան որ Աստուած իրենց նեղութիւնները լսեր է, խոնարհեցան եւ սկսան աղօթել Աստուծոյ։

—

«Զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»: Բ. Կորնթ. ժբ. 9.

Իմ զօրութիւնս տկարները կը զօրացնէ:

35.

Եգիպտոսէ ելնելը

Այնուհետեւ Մովսէս եւ Ահարոն գնացին փարաւոնի քով եւ ըսին. «Իսրայելի Աստուածը կ՚ըսէ. Արձակէ իմ ժողովուրդը»։ Փարաւոն պատասխանեց. «Այն ո՞վ է որուն ես պէտք է լսեմ եւ արձակեմ քու ժողովուրդդ, այդ Աստուածը ես չեմ ճանաչեր»։

Փարաւոն նոյն օրը հրամայեց գործավարաց և անոնց օգնականներուն, որ ժողովուրդը աւելի

շատ աշխատցնեն, անոնց այլ եւս յարդ չտան, ինչպէս մինչեւ ցայժմ կուտային. Թող իրենք երթան եւ դաշտէն ծղօտ հաւաքեն աղիւս այրելու համար եւ աղիւսներու թիւը պէտք չէ պակսի։ Գործավարները գնացին և Թագաւորին կամքը ժողովրդեան յայտնեցին։ Այնուհետեւ ժողովուրդը սկսաւ ցրուիլ ամբողջ Եգիպտոսի մէջ և յարդ ու եղէգ կը հաւաքէր։ Գործավարք աւելի եւս կ'ստիպէին ժողովուրդը և կ'ըսէին. «Աւարտեցէք ձեր ամենօրեայ աշխատանքը այնպէս՝ ինչպէս որ յարդ ունեցած ժամանակ կը պատրաստէիք»։ Եւ որովհետեւ անոնք հանապազօրեայ աշխատանքը չէին կրնար աւարտել, ուստի խիստ ծեծի կ'ենթարկուէին։

Իսրայելի որդիքը գանգատեցան Մովսէսին, Ահարոնին եւ կ'ըսէին. «Աստուած թող ձեր դատաստանը տեսնէ, դուք չարժեցիք Թագաւորին բարկութիւնը»։ Մովսէս սկսաւ աղօթել Աստուծոյ եւ ըսել. «Տէ՛ր, ինչո՞ւ քու ժողովուրդդ այդպէս կը չարչարես, այն օրէն երբ ես Փարաւոնի քով գնացի՝ ժողովրդեան բեռը աւելի ծանրացաւ»։ Աստուած ըսաւ Մովսէսին. «Այժմ դու կը տեսնես՝ թէ ես Փարաւոնին ի՞նչ կ'ընեմ»։ Իսրայելացւոց կրած նեղութիւնները եւ չարչարանքները այնքան ծանր էին, որ այլ եւս Մովսէսի խօսքը մտիկ չէին ըներ։

Այնուհետեւ Աստուած հետզհետէ սկսաւ ծանր պատիժներ ղրկել Եգիպտացւոց վրայ. գորտ, մուկ, կարկուտ, մորեխ... միայն Գեսեմ

երկիրն ազատ մնաց այս պատիժներէն։ Այն ժամանակ Եգիպտացիք ըսին. «Աստուած անոնց հետն է»։ Երբ պատիժ մը կուգար, Փարաւոն կ'ըսէր Մովսէսի և Ահարոնի. «ժողովուրդը կ'արձըկեմ». իսկ երբ պատիժը կ'անցնէր, Փարաւոնի սիրտը կրկին կը քարանար եւ ժողովուրդը չ'էր արձակեր։

Աստուած ըսաւ Մովսէսին. «Պատիժ մ'ալ դեռ կ'ուզեմ ղրկել, այն ժամանակ Փարաւոն պիտի արձակէ քու ժողովուրդդ։ Ճիշդ կէս գիշերին՝ Եգիպտոսի բոլոր անդրանիկները՝ Փարաւոնի որդիէն սկսեալ մինչեւ վերջին աղախինը պիտի մեռնին, իսկ Իսրայելացւոցմէ ոչ ոք պիտի մեռնի»։

Աստուած չարունակեց խօսիլ Մովսէսի հետ. «Յայտնէ՛ Իսրայելի ժողովրդեան, որ այս ամիս (Նիսան) անոնց համար առաջին ամիսը պիտի ըլլայ. այս ամսոյն տասնըչորսին իւրաքանչիւր տան տէր պէտք է մի գառն ունենայ, երեկոյեան ժամանակ մորթէ, խորովէ եւ իւր ընտանեաց հետ ուտէ միեւնոյն գիշերը. ասոր հետ ամեն ոք պէտք է ուտէ նաեւ բաղարջ հաց. ընթրիքը այսպէս շտապով պիտի ուտէք, գօտին կապած, կօշիկները հագած եւ գաւազան ի ձեռին. այս զատիկը՝ Տիրոջ զատիկն է։ Միեւնոյն գիշեր ես պիտի հարուածեմ Եգիպտոսի բոլոր անդրանիկները, իսկ դուք անվնաս պիտի հեռանաք այս երկրէն։ Այդ օրը չպիտի մոռնաք. այդ տօնը միշտ պիտի կատարէք՝ ի յիշատակ Տեառն, եւ

նոյնը պիտի պատուիրէք ձեր յետագայից »։

Այսպէս ալ ըրին Իսրայելացիք։

Այդ մի եւ նոյն գիշերը՝ ջարդեց Աստուած Եգիպտոսի բոլոր անդրանիկներն, Փարաւոնի որդիէն սկսեալ մինչեւ վերջին աղախնոյն որդին․ տուն չկար որ սուգ չ՚ըլլար։ Փարաւոն կանչեց զՄովսէս և Ահարոն ու ըսաւ․ «Շտապեցէ՛ք, հեռացէ՛ք իմ երկրէս, առէք ձեզի հետ ձեր տաւարն ու ոչխարները »։ Եգիպտացիք կ՚ստիպէին Իսրայելացիներն հեռանալ իրենց երկրէն եւ կ՚ըսէին․ « Հեռացէ՛ք, թէ ոչ մենք ամենքս ալ կը մեռնինք »։ Այսպէս Եգիպտոսէ դուրս ելան Իսրայելացիք՝ թուով 600,000, չհաշուելով կանայքն եւ երախաները։ Իսրայելացիք մնացին Եգիպտոսի մէջ չորս հարիւր երեսուն տարի։ Մովսէս տարաւ իւր հետ Յովսէփայ ոսկորներն ալ։ Աստուած անոնց ամպէ սիւն մը ցոյց տուաւ ցերեկը, իսկ կրակէ սիւն մ՚ալ գիշերը առաջնորդուելու համար։

—

« Ամենայն ինչ նովաւ եղեւ »։ Աւետ․ Յովհ․ Ա․ Գ։
Ամեն բան իրմով եղաւ։

« Եւ հզօրացեալքդ պարտեցարուք, զի Աստուած ընդ մեզ է։ Եւ խորհուրդն զոր խորհիք, խափանէ Տէր, զի․․․ Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ոչ երկիցուք եւ ոչ խռովիցուք, զի․․․ » Ժամագիրք։

Զօրաւորներդ կը յաղթուիք, որովհետեւ Աստուած մեզ հետ է։ Այն ամեն ինչ որ կը մտածէք, Աստուած

կը խափանէ, որովհետեւ․․․ Ձեր երկիւղէն և սպառնալիքներէն մենք չենք վախնար, որովհետեւ․․․։

36․

Կարմիր ծովէն անցնիլը

Երբ Փարաւոնին իմաց տուին թէ Իսրայելացիք արդէն հեռացեր են, այն ժամանակ Թագաւորին եւ անոր պաշտօնէից միտքը փոխուեցաւ եւ ըսին․ «Ինչո՞ւ Իսրայելացիները մեր ծառայութենէն արձակեցինք »։ Փարաւոն հաւաքեց ժողովուրդը և վեց հարիւր ընտիր պատերազմական կառքերով եւ ձիերով՝ ընկաւ Իսրայելի որդւոց ետեւէն ու հասաւ Կարմիր ծովի մօտ ուր Իսրայելացիք բանակած էին։

Երբ Իսրայելացիք տեսան Եգիպտացիները, շատ վախցան․ սկսան գանգատիլ Աստուծմէ եւ ըսել Մովսէսին․ « Միթէ՞ Եգիպտոս գերեզման չկար որ դու բերիր զմեզ այս տեղ անապատին մէջ թաղուելու »։ Մովսէս պատասխանեց․ « Մի՛ վախնաք, քաջալերուեցէ՛ք, դուք շուտով կը տեսնէք թէ Աստուած այսօր ինչպէս պիտի փրկէ զձեզ։ Աստուած ինք ձեր կողմանէ պիտի պատերազմի եւ դուք հանգիստ պիտի մնաք »։

Աստուած ըսաւ Մովսէսին․ « Յայտնէ Իսրայելացւոց որ ճամբայ ելլան, իսկ դու բարձրա-

ցու քու գաւազանդ եւ երկնցու ձեռքդ ծովուն վրայ »։ Երբ Մովսէս ձեռքը երկնցուց, ջուրն իսկոյն պատռուեցաւ եւ երկու կողմէն պատի նըման անշարժ կանգնեցաւ. յետոյ հովը փչեց, չորցուց յատակը եւ Իսրայէլացիք իբր ցամաքի վրայէն անվտանգ միւս եզերքը անցան։ Եգիպտացիք անոնց ետեւէն ինկան իրենց կառքերով, ձիերով, փարաւոն ալ անոնց հետ էր։ Աստուած ըսաւ Մովսէսին. « Երկնցուր ձեռքդ ծովու վրայ, որպէս զի ջուրը միանայ եւ թափի Եգիպտացւոց վրայ »։ Մովսէս երկնցուց ձեռքը եւ ծովը միացաւ։ Եգիպտացիք սկսան փախչիլ. իսկ ջուրը ծածկեց կառքերը, ձիերը եւ փարաւոնի զօրքը, որոնցմէ եւ ոչ մէկը ողջ մնաց։ Իսրայէլացիք անվտանգ անցան ծովը և տեսան Եգիպտացիները ծովեզերքը թափուած, խեղդուած։ Այսպէս օգնեց Աստուած Իսրայէլի ժողովրդեան և ազատեց Եգիպտացւոց ձեռքէն։ Ժողովուրդը կը վախէր Աստուծմէ եւ կը հաւատար անոր ծառային՝ Մովսէսի։ Մովսէս եւ Իսրայէլի ժողովուրդը սկսան Աստուծոյ համար երգ երգել եւ ըսել. « Օրհնեցէք զԱստուած, որովհետեւ փառաւոր գործ կատարեց. փարաւոնի երիվարները եւ հեծեալները ծովը ձգեց. Տէրն է իմ օգնականը եւ փրկիչը »։

—

« Անօրէնք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»։ Սաղ. հբ. 19.

Անօրէնները յանկարծակի կործանեցան, սատկեցան և կորան իրենց անօրէն գործոց համար։

« Խոստովան եղերուք Տեառն զի քաղցր է, զի յաւիտեան է ողորմութիւն նորա »։ Սաղ. ճէ. 1.

Խոստովանեցէք որովհետեւ Աստուծոյ ողորմութիւնը քաղցր եւ յաւիտենական է։

37.

Իսրայելացիները կ՚անցնին անապատէն

Մովսէս շարունակեց ճամբան Կարմիր ծովէն դէպ ի անապատը երեք օր շարունակ. վերջապէս հասաւ Մեռա, ուր տեղի ջուրը դառն էր և չէին կարող խմել։ Ժողովուրդը սկսաւ գանգատիլ Մովսէսին եւ ըսել. « Ի՞նչ պէտք է խմենք։ » Մովսէս աղօթեց Աստուծոյ։ Աստուած Մովսէսին փայտ մը ցուցուց, զոր ջուրը ձգեց եւ ջուրը շուտ մը անուշցաւ։

Իսրայէլացիք այդ տեղէն ճամբայ ելան եւ եկան Սին անապատը. արդէն երկրորդ ամսուան տասն եւ հինգն էր, որ Եգիպտոսէն դուրս ելեր էին։ Իսրայէլի որդիքը կրկին սկսան գանգատիլ Մովսէսին, Ահարոնին եւ ըսել. « Երանի՜ թէ Աստուած մեզի Եգիպտոսի մէջ մահ տար. այն տեղ կաթսաներով միս ունէինք եւ առատ հաց. դուք բերիք զմեզ այս անապատ տեղը որ սովէ մեռ-

նենք»։ Աստուած ըսաւ Մովսէսին. «Ես երկնքէն հաց կը թափեմ ձեզ համար, ժողովուրդը թո՛ղ ամեն օր ելլայ եւ ժողվէ որքան իրեն մէկ օրուան համար հարկաւոր է. իսկ վեցերորդ օրը թո՛ղ երկու անգամ աւելի ժողվէ»։ Մովսէս եւ Ահարոն յայտնեցին այս բանս Իսրայելացւոց և ըսին. «Երեկոյեան պահուն կ'իմանաք դուք, որ Աստուած ձեզ Եգիպտոսէ հաներ է, իսկ առաւօտուն նորա փառքը կը տեսնէք. նա ձեր տրտունջը լսեց, մենք ո՞վ ենք որ մեզմէ կը գանգատիք։ Երեկոյեան ուտելու միս կ'ունենաք, իսկ առաւօտուն՝ առատ հաց. վերջապէս պիտի հասկընաք որ նա ձեր Աստուածն է»։ Երեկոյեան ժամանակ եկան լորամարգիները և ծածկեցին ամբողջ բանակը. իսկ առաւօտուն բանակը ցօղով պատած էր։ Երբ ցօղը գնաց, գետնի վրայ մնաց կլոր և սպիտակ՝ եղեամի նման բան մը։ Իսրայելացիք երբ այս բանը տեսան, կ'ըսէին իրարու. «Այս ի՞նչ բան է»։ Ժողովուրդը չէր գիտեր ասոր ինչ ըլլալը։ Մովսէս ըսաւ. «Այս այն հացն է որ Աստուած ղրկած է ձեզ ուտելու։ Ամեն ոք մէջերնէդ ամեն օր թող այնքան հաւաքէ՝ որքան մէկ օրուան համար պէտք ունի. իսկ վեցերորդ օրը թո՛ղ երկու անգամ աւելի հաւաքէ՛ որովհետև յաջորդ օրը շաբաթ է եւ այն օրը՝ հանգստեան օր է, սուրբ օր է»։ Իսրայելացիք այս հացին անունը մանանա դրին եւ առաւօտները կը հաւաքէին. գոյնը սպիտակ էր և մեղրահացի համ ունէր. երբ արեւը կը տաքնար՝ իսկոյն կը հալէր։

Այսպէս ամեն օր մանանա կ'ուտէին քանի որ անապատն էին։

Իսրայելացիք յառաջ գնացին։ Ժողովուրդը խմելու ջուր չունէր. սկսան նորէն գանգատիլ Մովսէսի եւ ըսել. «Ջուր տո՛ւր մեզ, միթէ՞ ըզմեզ եւ մեր անասունները ծարաւէ սպաննելու

համար դուրս հանեցիր Եգիպտոսէն»։ Մովսէս յայտնեց Աստուծոյ եւ ըսաւ. «Ի՞նչ ընեմ ես այս ժողովրդեան հետ, քիչ մ'ալ մնայ, զիս պիտի քարկոծեն»։ Աստուած ըսաւ. «Ա՛ռ քու գաւազանդ՝ որով ծովին ջուրը բաժնեցիր, ես քենէ առաջ ժայռի մը մօտ կանգնած կ'ըլլամ. դու գաւազանովդ ժայռին կը զարնես եւ ջուրն անկից իսկոյն կը բղխի ու ժողովուրդը կը խմէ»։ Մովսէս հնազանդեցաւ Աստուծոյ հրամանին. կատարեց անոր կամքը եւ այնպէս ալ եղաւ։

Այնուհետեւ եկան Ամաղէկացիք և պատերազմեցան Իսրայելացւոց հետ։ Մովսէս ըսաւ Յեսուին. «Քաջ մարդիկ ընտրէ, ել եւ պատերազմէ Ամաղեկացւոց հետ»։ Յեսու ալ այնպէս ըրաւ ինչպէս որ Մովսէս պատուիրած էր։ Մովսէս եւ Ահարոն բարձրացան բլրի մը վրայ. Մովսէս տարածեց իր ձեռքերն դէպ ի երկինք եւ կ'աղօթէր Աստուծոյ։ Իսրայէլ յաղթեց եւ Յեսու սրով հարուածեց Ամաղէկացիները։ Մովսէս Աստուծոյ համար սեղան շինեց։

—

«Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու։ Բանաս զձեռն քո եւ լցուցանես զնոսա քաղցրութեամբ կամօք քովք»։ Սաղ. ճխդ. 15-16.

Ամենքն ալ իրենց յոյսը քու վրադ դրած են, դու կուտաս անոնց կերակուր ժամանակին։ Կը բանաս ձեռքերդ եւ զամենքն ալ կըգոհացնես քու կամքովդ։

Մերձ է Տէր առ ամենեսեան որ կարդան առ նա. առ ամենեսեան, որ կարդան առ նա ճշմարտութեամբ»։ Սաղ. ճխդ. 18.

Գթած, ողորմած է Տէր, երկայնամիտ եւ բազումողորմ»։ Սաղ. ճբ. 8.

38.

Յոթորի բարի խորհուրդը

Մովսէսի աներ՝ Յոթոր քուրմը երբ լսեց որ Աստուած Իսրայելի ժողովուրդը Եգիպտոսէն դուրս հաներ է, առաւ Սեփովրան, զոր Մովսէս ճանապարհէն ետ դարձուցեր էր ինչպէս եւ իր երկու թոռները, գնաց անապատ եւ փեսային մարդ ուղարկեց որ իրեն գայ։ Մովսէս աներոջ գալն իմանալուն պէս գնաց ընդ առաջ, երկրպագեց, համբուրեց զինքը եւ յետոյ վրանը տարաւ։ Այն տեղ Մովսէս պատմեց աներոջը այն ամենը՝ ինչ որ Տէրը ըրաւ Փարաւոնի եւ Եգիպտացւոց. պատմեց նոյնպէս այն նեղութիւնները, զոր ճանապարհին քաշեր էր եւ թէ ինչպէս Աստուած ազատեր էր զինքը։ Յոթոր շատ ուրախացաւ Իսրայելի Աստուծոյ գործած բարի գործոց համար եւ ըսաւ. «Օրհնեալ ըլլայ զձեզ ազատող Աստուածը, հիմայ կ'զգամ որ նա ամեն Աստուածներէն մեծ է»։

Հետեւեալ առաւօտ՝ Մովսէս սկսաւ ժողովրդեան գանգատները վճռել. բազմութիւնը խռնուած էր շուրջը՝ առաւօտէն սկսեալ մինչեւ երեկոյ։ Յոթոր ըսաւ անոր. «Այդ ըրածդ լաւ բան չէ, դու կը յոգնեցնես զքեզ ալ, ժողովուրդն ալ։ Պաշտօնդ ծանր է, միայնակ չես կարող տանել այդ բազմութիւնը. լսէ ինձ, ես քեզ խորհուրդ մը տամ, Աստուած եւս կ'օգնէ քեզ այդ գործի մէջ, դու եղիր միջնորդ Աստուծոյ և

այս մարդոց մէջ, ասոնց համար կանոններ եւ օրէնքներ սահմանէ եւ սովրեցու այն ճամբան ուսկից պէտք է երթան եւ այն գործերը զոր պարտաւոր են գործելու։ Ընտրէ ժողովրդեանդ մէջէն արդարադատ, աստուածավախ, խոնարհ մարդիկ եւ զանոնք ժողովրդեան վրայ դատաւոր նշանակէ, ոմանց հազարին մէկ պետ, ոմանց հարիւրին, ոմանց յիսունին եւ ոմանց տասնին։ Եթէ մեծ դէպք մը պատահի, թող քեզ դիմեն, իսկ փոքրերը իրենք վճռեն։ Այսպէս քու աշխատանքդ կը թեթեւնայ, անոնք ալ քեզ հետ այդ ծանրութիւնը կը տանին եւ քու օգնականներդ կ'ըլլան»։

Մովսէս լսեց Յոթորի տուած խորհուրդին եւ այնպէս ալ ըրաւ։ Այնուհետեւ Մովսէս արձակեց աները որ իր երկիրը երթայ։

—

«Եւ մեծին խոնարհեցո՛ գլուխ քո»։ Սիրաք․ դ․ 7․ Մեծը՝ այսինքն դատաւորը պէտք է յարգես։

39․

Սինայի օրինատուութիւնը

Եգիպտոսէ դուրս ելնելուն երկրորդ ամսուն՝ Իսրայելացիք հասան Սինա անապատը եւ բնակեցան նոյն լերան դէմը։ Մովսէս լեռը ելաւ եւ Աստուած ըսաւ անոր․ «Իսրայելի որդւոց այսպէս կ'ըսես․ Դուք տեսաք թէ ես Եգիպտացւոց

ինչ ըրի․ ինչպէ՛ս ես զձեզ արծուի թեւերու վրայ առած՝ իմ մօտս բերի․ եթէ դուք ինձ լսէք և իմ ուխտս պահէք, իմ ընտրեալ ժողովուրդս կ'ըլլաք բոլոր ազգաց մէջ․ դուք կ'ըլլաք ինձ համար քահանայական թագաւորութիւն մը և սուրբ ժողովուրդ մը»։ Մովսէս իջաւ լեռնէն, կանչեց ժողովրդեան ծերերն և Աստուծոյ այս խօսքերը յայտնեց անոնց։ Բոլոր ժողովուրդը միաբերան պատասխանեց․ «Աստուծոյ բոլոր պահանջածները կը կատարենք»։ Մովսէս յայտնեց զայս Աստուծոյ։ Աստուած ըսաւ անոր․ «Գնա՛ ժողովրդեանդ մօտ, պատուիրէ անոր լուացուիլ եւ մաքրուիլ այսօր եւ վաղը, պատրաստուիլ երրորդ օրուան համար․ ըսէ՛ որ մաքուր զգեստներ հագնի, լերան շուրջը ցանկ պատէ՝ որ ոչ ոք հոն չ'ելլայ, ապա թէ ոչ մօտեցողը կը մեռնի»։

Վերջապէս երրորդ օրը եկաւ։ Առաւօտը կանուխ լերան վրայ որոտմունք եւ կայծակներ ըսկըսան, թանձր ամպեր պատեցին լերան գագաթը, եւ փողին ձայնը լսելի կերպով կը հնչէր․ ամէնքը զարհուրեցան․ Մովսէս ժողովուրդը բանակէն դուրս հանեց եւ տարաւ լերան ստորոտը։ Սինա լեռն ամբողջապէս ծուխի մէջ կորսուած էր, կրակէ բոցեր կը բարձրանային մէջէն եւ լեռը կը շարժէր․ փողին ձայնը հետզհետէ կը սաստկանար։

Այն ժամանակ Աստուած սկսաւ խօսիլ ժողովրդեան հետ եւ ըսել․

1․ Ե՛ս եմ քու տէր Աստուածդ, ես զքեզ

հանեցի Եգիպտոսէ եւ ազատեցի անոր ծառայութենէն, ինծմէ զատ ուրիշ Աստուած չպիտի ունենաս։

2. Կուռք չշինես ո՛չ երկնքի եւ ո՛չ երկրիս ստեղծուածոց նման ու չ'երկրպագես անոնց, որովհետեւ ես եմ քու Աստուածդ՝ Աստուած նախանձոտ. գիս ատող հարցդ մեղքը մինչեւ նոցա երրորդ եւ չորրորդ սերնդեան պատկանող զաւակներէն քաւել կուտամ. իսկ գիս սիրողներն և իմ հրամանս կատարողներն՝ մինչեւ հազարերորդ սերունդը չ'եմ մոռնար։

3. Քու Աստուծոյդ անունը սնոտի բաներու աւթիւ մի՛ յիշեր, անոր անուամբ սուտ մի՛ երդուըններ, որովհետեւ Աստուած իրեն անուամբ սուտ երդւում ընողները անպատիժ չ'թողուր։

4. Յիշէ՛ շաբաթ օրը եւ սուրբ պահէ. վեց օր աշխատէ՝ իսկ եօթներորդ օրը որ Աստուծոյ է, հանգիստ ըրէ եւ անոր նուիրէ։

5. Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որ երկար կեանք ունենաս։

6. Մի՛ սպաններ։

7. Մի՛ շնար։

8. Մի՛ գողնար։

9. Ընկերոջդ մասին սուտ վկայութիւն մի՛ տար։

10. Ընկերոջդ տանը, տղային, եզին, իշուն եւ այն ամեն բանի վրայ որ անորն է, աչք մի՛ տնկեր։

Բոլոր ժողովուրդը կը լսէր որոտման եւ փողի ձայնը, կը տեսնէր կայծակները եւ լեռնէն ծուխ

ելնելը։ Ժողովուրդը զարհուրած հեռացաւ եւ այն տեղէն կը խօսէր Մովսէսի հետ եւ կ'ըսէր. «Դո՛ւ խօսէ մեզ հետ Աստուծոյ կողմէն, մենք

քեզ կը լսենք. զմեզ ուղղակի Աստուծոյ հետ մի՛ խօսելու տար. այլ թէ ոչ ամենքս կը մեռ–

նինք »։ Մովսէս ըսաւ. «Մի՛ վախնաք, Աստուած կ՚ուզէ զձեզ փորձել. անոր երկիւղը աչքէ մի՛ հեռացնէք եւ յանցանք մի՛ գործէք»։ Ժողովուրդը մօտեցաւ, իսկ Մովսէս լեռը բարձրացաւ. Աստուած կը խօսէր Մովսէսի հետ։ Մովսէս լեռնէն վար իջաւ եւ յայտնեց ժողովրդեան Աստուծոյ բոլոր ըսածները եւ այն ամէն բանը ինչ որ իրաւունք ունին ընելու։ Այն ժամանակ ամէնքը միաբերան սկսան աղաղակել եւ ըսել. «Աստուծոյ բոլոր պատուիրանները կը կատարենք։»

Մովսէս դարձեալ բարձրացաւ լերան վրայ եւ այն տեղ քառասուն օր մնաց։ Երբ Աստուած իւր խօսակցութիւնը վերջացուց Մովսէսի հետ Սինա լերան վրայ, երկու քարէ տախտակներ տուաւ անոր, որոց վրայ Աստուած ինքը դրոշմած էր վերոյիշեալ պատուիրանները։

—

«Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ»։ Ա. Թ. Յով. դ. 19.

«Քանզի այս է սէրն Աստուծոյ, զի զպատուիրանս նորա պահեսցուք, եւ պատուիրանք նորա չեն ինչ ծանունք»: Ա. Թ. Յով. ե. 3.

40.

Ոսկեղէն հորթը

Երբ ժողովուրդը տեսաւ որ Մովսէս այլ եւս չ՚վերադարձաւ լեռնէն, Ահարոնի քով գնաց եւ ըսաւ. «Աստուածներ շինէ մեզ համար, որոնք մեզի առաջնորդեն. այն մարդը՝ Մովսէս, որ զմեզ Եգիպտոսէն դուրս հանեց, չ՚գիտենք ինչ եղաւ»։ Ահարոն պատասխանեց. «Բերէք ինձ ձեր կանանց և աղջկանց ոսկէ գինդերը»։ Այն ժամանակ իւրաքանչիւր ոք հանեց իւր ականջի ոսկի օղը եւ բերաւ Ահարոնի որ առաւ եւ անոնցմէ ոսկեղէն հորթ մը ձուլեց։ Ոսկեղէն հորթ ձուլելու գաղափարը ունեցողները երբ տեսան, որ իրենց գործը յաջողեցաւ, աղաղակեցին ժողովրդեան առջեւ եւ ըսին. «Ահա՛ ձեր Աստուածը, որ զձեզ Եգիպտոսէն դուրս հանեց»։ Ահարոն սեղան կանգնեց, քարոզ կարդաց եւ ըսաւ. «Վաղը Աստուծոյ տօնն է»։ Առաւօտուն կանուխ ժողովուրդը ելաւ եւ ողջակէզ մատոյց։ Այնուհետեւ սկսան ուտել, խմել եւ պարել հորթին շուրջը։

Այն ժամանակ Մովսէս իջաւ լեռնէն՝ ձեռքը բռնած վկայութեան երկու տախտակները։ Երբ բանակին մօտեցաւ, տեսաւ ոսկեղէն հորթը եւ պարողները, բարկացաւ, տախտակները ձեռքէն վար ձգեց լերան ստորոտը եւ կոտրեց։ Յետոյ առաւ անոնց շինած ոսկիէ հորթը, կրակով այրեց, խարտոցեց, փոշի դարձուց, ջրի մէջ ցանեց

եւ խմցուց Իսրայելացւոց։ Ապա Ահարոնին դարձաւ եւ ըսաւ. «Այս ժողովուրդը քեզ ի՞նչ ըրաւ որ այսպիսի յանցանքի մէջ ձգեցիր զինքը»։ Ահարոն պատասխանեց. «Մի՛ բարկանար, դու շատ լաւ գիտես անոնց չարութիւնը եւ յանդգնութիւնը»։ Երբ Մովսէս տեսաւ որ ժողովուրդը յանցանք գործեր է, մօտեցաւ բանակին եւ ըսաւ. «Աստուծոյ հաւատարիմ մնացողները թո՛ղ ինձ մօտ գան։» Ղեւիի բոլոր որդիքը անոր քով հաւաքուեցան. Մովսէս ըսաւ անոնց. «Հանեցէ՛ք ձեր սրերը, անցէ՛ք բանակին մէկ ծայրէն միւսը եւ կրկին վերադառնալով քննեցէք ու սպաննեցէք Աստուծոյ դէմ բոլոր մեղանչողները։» Ղեւիի որդիքը կատարեցին Մովսէսի հրամանը։ Այդ օրը ժողովրդէն երեք հազար հոգի մեռան։

Առաւօտուն՝ Մովսէս ըսաւ ժողովրդեան. «Դուք մեծ յանցանք գործեր էք, ես լեռը կ՚երթամ եւ կը խնդրեմ Աստուծմէ որ ձեր յանցանաց ներէ»։ Մովսէս ըսաւ Աստուծոյ. «ժողովուրդը մեծ յանցանք մ՚է գործեր, ներէ անոր, իսկ եթէ չ՚ես ներեր, այն ժամանակ իմ անունս ալ քու որդեգրութեանդ ցուցակէն ջնջէ»։ Աստուած ըսաւ Մովսէսին. «Յանցաւորաց անունները կը ջնջեմ. իսկ դու գնա՛ եւ առաջնորդէ՛ անոնց եւ բեր երկու քարէ տախտակներ, որպէս զի առաջին տախտակաց պատգամները նորէն գրեմ»։ Մովսէս կատարեց Աստուծոյ պատուէրը. Աստուած գրեց տախտակներուն վրայ տասնաբանեայ պատուիրանքը եւ Մովսէս բերաւ զանոնք Իսրայէլի որդւոց։

—

«Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ, եւ յամենայն մտաց քոց. այս է մեծն եւ առաջին պատուիրան»։ Աւետ. Մատթ. ԻԲ. 37-38.

Սիրէ՛ քու Տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր անձովդ եւ բոլոր մտքովդ, այս է առաջին եւ մեծ պատուիրանը։

41.

Լրտեսք

Իսրայելացիք ամբողջ տարի մը բանակեցան Սինա լերան մօտ։ Այնուհետեւ գնացին այն տեղէն և բանակեցան Փառան անապատին մէջ։ Այն ժամանակ Աստուած խօսեցաւ Մովսէսի հետ եւ ըսաւ. «Իւրաքանչիւր ցեղէն մէկ մէկ մարդ ուղարկէ Քանանացւոց աշխարհը՝ որպէս զի լրտեսեն։» Մովսէս ալ այդ հրամանը կատարեց։ Տասներկու մարդ ընտրեց ու Քանան ուղարկեց, անոնց մէջն էր եւ Յեսուն։ Մովսէս պատուիրեց անոնց եւ ըսաւ. «Գնացէք և տեսէք թէ ինչպիսի՞ երկիր է Քանան, որո՞նք են անոր բնակիչները, զօրե՞ղ թէ թոյլ մարդիկ են. բազմամա՞րդ է եր-

կիրը թէ սակաւամարդ, հաստատուն եւ ամուր քաղաքա՞ց մէջ կ՚ապրին թէ վրաններու տակ. արդեօք երկիրը պտղաւէ՞տ է թէ ոչ. ժիր եղէք վերադառնալու ժամանակ և երկրին պտուղներէն հետերնիդ առէ՛ք»։

Ասոնք գնացին եւ լրտեսեցին երկիրը՝ Սին անապատէն մինչեւ Ռոոբ (Սիդոնի մօտ)։ Այն տեղէն դարձան Քեբրոն եւ հասան Ողկուզի ձորը, ուր որթ մը կտրեցին մէկ հատ ողկոյզով եւ երկու մարդիկ լծակով հետերնին բերին. առին նաեւ նուռ եւ թուզ։ Քառասուն օր լրտեսելէ յետոյ՝ երբ վերադարձան Իսրայէլի որդւոց մօտ, պատմեցին անոնց թէ՝ ինչպիսի՜ երկիր է և ցոյց տուին անոնց հետերնին բերած պտուղները եւ այսպէս կ՚ըսէին. «Մենք գնացինք այն երկիրը ուր մեղր եւ կաթ կը բղխի. ահա այս ալ անոր պտուղն է. բնակիչները զօրեղ մարդիկ են. քաղաքները ամուր եւ մեծ են»։ Ժողովուրդն ըսկըսաւ ձայն բարձրացնել եւ տրտնջալ. Յեսուն եւ Քաղէբն ըսին. «Գնա՛նք եւ Քանանը նուաճենք». իսկ միւս տասը լրտեսները կը հակառակէին. «Մենք չ՚ենք կարող անոնց դէմ ելնել, անոնք մենէ շատ զօրեղ են»։ Այս խօսքերը մեծ աղմուկ հանեցին Իսրայէլի որդւոց մէջ եւ տասը լրտեսները կը շարունակէին ըսել. «Այնտեղ այնպիսի հսկայ մարդիկ տեսանք՝ որոց առջեւ մենք մորեխ կը թուէինք»։

Այն ժամանակ ամբողջ ժողովուրդը ոտք ելաւ, սկսաւ աղաղակել եւ լալ, կրկին տրտնջաց

Ահարոնին եւ Մովսէսին ու ըսաւ. «Երանի՜ թէ Եգիպտոս կամ անապատին մէջ մեռած ըլլայինք»։ Եւ մէկը միւսին կ՚ըսէր. «Ընտրենք մեզի առաջնորդներ եւ վերադառնանք Եգիպտոս»։ Մովսէս եւ Ահարոն երեսի վրայ ինկան ժողովրդեան առջեւ, իսկ Յեսու եւ Քաղէբ պատառեցին իրենց զգեստները եւ ըսին ժողովականներուն. «Մեր լրտեսած երկիրը շատ գեղեցիկ է, եթէ Աստուած գթայ մեզ՝ կարող է Քանան հասցընել։ Մի՛ հեռանաք Աստուծմէ եւ մի՛ վախնաք նոյն երկրի մարդոցմէ, մենք հացի պէս կ՚ուտենք զանոնք. Աստուած մեզ հետ է»։ Ժողովուրդը քիչ մնաց որ քարկոծէր երկուքն ալ։

Աստուծոյ փառքը ամպի մէջէն ժողովրդեան առջեւ երեւցաւ վկայութեան խորանին վրայ։ Աստուած ըսաւ Մովսէսին. «Մինչեւ ե՞րբ պէտք է այս ժողովուրդը զիս բարկացնէ, մինչև ե՞րբ ինծի և իմ հրաշքներուս չ՚պիտի հաւատայ. ես կը ջնջեմ անոր անունը երկրիս երեսէն. ոչ ոք պիտի տեսնէ այն երկիրը զոր ես անոր հարց խոստացեր եմ. անոր ոսկորները պիտի փտին անապատին մէջ։ Քսան տարեկանէ վեր եղողները որոնք ինծի դէմ գանգատներ ըրին, չ՚պիտի մտնեն Քանանու երկիրը։ Ձեր զաւակները միայն հոն պիտի հասցնեմ, իսկ դուք քառասուն տարի շարունակ անապատին մէջ հովուութիւն պիտի ընէք որպէս զի զգաք թէ ի՞նչ ըսել է առանց Աստուծոյ օգնութեան ապրիլ։ Առաւօտուն վերադարձէք անապատ, որ կը տանի

դէպ ի Կարմիր ծովը»։ Մովսէս այս ամէնը յայտնեց Իսրայէլի որդւոց։ Սուգ բռնեց ժողովուրդը եւ սկսաւ լալ և վերստին անապատ դարձաւ։

—

«Համբարձի զաչս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն։ Օգնութիւն ինձ ի Տեառնէ եկեսցէ, որ արար զերկինս եւ զերկիր»։ Սաղ. ՃԻ. 1–2.

Ես իմ աչքերս դէպ ի այն լեռները բարձրացուցի, ուսկից ինծի օգնութիւն պիտի գայ։ Ինձ օգնութիւն Աստուծմէ կուգայ, որ երկինքն ու երկիրը ստեղծեց։

«Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է՝ ի հնազանդութեան կայցէ. քանզի ոչ ուստեք է իշխանութիւն՝ եթէ ոչ յԱստուծոյ։ Այսուհետեւ որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ։» Թ. Ա. Հռովմ. ԺԳ. 1–2.

Ամեն մարդ թող հնազանդ ըլլայ բարձր իշխանութեան, որովհետեւ չկայ իշխանութիւն որ Աստուծմէ չլինի։ Ուրեմն իշխանութեան հակառակողը՝ Աստուծոյ հրամանին կը հակառակի։

42.

Մովսէսի մահը

Երբ քառասուն տարին անցաւ, Իսրայէլի որդիքը կրկին չուեցին խոստացեալ երկրի սահմանները, դէպի Յորդանան։ Այն տեղ Աստուած խօսեցաւ Մովսէսի հետ եւ ըսաւ. «Բարձրացիր Նաբաւ լերան վրայ և տես Քանանացւոց երկիրը, զոր ես Իսրայէլի որդւոց պիտի տամ, իսկ տեսնելէ յետոյ «յաւելցիս առ ժողովուրդ քո եւ դու»։ Մովսէս պատասխանեց. «Տէ՛ր, ժողովրդեան առաջնորդ մը նշանակէ, որ կառավարէ զնա, մի՛ գուցէ նա անտէր մնայ, ինչպէս մի հօտ առանց հովուի»։ Աստուած պատասխանեց. «Ընտրէ՛ Նաւեայ որդին Յեսուն, յորում Աստուծոյ ոգի կայ. տա՛ր ժողովրդեան մօտ և կանգնեցո՛ւ Եղիազար քահանային առջեւ, դի՛ր քու ձեռքդ անոր գլխուն վրայ, տո՛ւր անոր քու փառքդ, քու զօրութիւնդ, որպէս զի Իսրայէլի բոլոր որդիքը անոր լսեն։»

Մովսէս կանչեց զամենքն եւ ըսաւ ամեն բան ինչպէս որ Աստուած իրեն հրամայեր էր. «Ես արդէն հարիւր քսան տարեկան ծերունի եմ, ձեզ այլ ես առաջնորդել չ'եմ կարող, ասոր համար Աստուած ըսաւ ինձի որ ալ ես Յորդանանը չ'անցնիմ։ Մխիթարուեցէ՛ք եւ մի՛ վախնաք, Աստուած ինքնին ձեզ կ'առաջնորդէ, նա ձեզ չը մոռնար. Յեսու Նաւեան կ'անցնի ձեզ հետ Յորդանանը՝ ինչպէս Տէր ինքն ըսաւ»։

Մովսէս դարձաւ Յեսուայ եւ բոլոր ժողովըրդեան ներկայութեանը ըսաւ. «Քաջացի՛ր և զօրացի՛ր, դու պէտք է ժողովուրդը այն երկիրը տանիս զոր Աստուած խոստացաւ Իսրայէլի որդւոց հայրերուն. դու կը բաժնես երկիրը անոնց մէջ»։

Այնուհետեւ Մովսէս յիշել տուաւ ժողովըրդեան, ինչ որ Աստուած ըրեր էր անոնց հայրերուն և ըսաւ. «Լսէ՛, Իսրայէլ. մեր Տէրը, մեր Աստուածը մի է. դու պէտք է քու Տէրդ, քու Աստուածդ՝ ամբողջ սրտովդ, ամբողջ կարողութեամբդ սիրես, իմ այսօրուան խօսածներս դու սրտիդ մէջ պիտի պահես և քու որդւոցդ պատմես թէ՛ տան մէջ, թէ՛ ի ճանապարհի, թէ՛ արթնութեան եւ թէ՛ քնոյ ժամանակ։ Եթէ դու քու Տիրոջդ՝ Աստուծոյ խօսքին կը լսես, անոր օրհնութիւնը քու վրադ կ'ըլլայ. իսկ եթէ դու քու Տիրոջդ՝ Աստուծոյ խօսքին չ'ես լսեր, այն ժամանակ նորա բարկութիւնը քու վրադ կուգայ. նայէ՛, ժողովուրդ, ես այսօր քու առջեւդ կեանք և մահ, օրհնութիւն և նզովք դրի միանգամայն, որպէս զի ասոնց ամենուն մէջէն դու կեանքն ընտրես»։

Մովսէս օրհնեց ժողովուրդը այն օրհնութեամբ զոր Աստուած անոր ուսուցեր էր. «Օրհ-
«նեսցէ զքեզ Տէր և պահեսցէ զքեզ, երեւե-
«ցուսցէ զերեսս իւր ի քեզ, եւ ողորմեսցի քեզ.
«ամբարձցէ Տէր զերեսս իւր ի քեզ, եւ տացէ
քեզ խաղաղութիւն»։ Մովսէս Դ. զ. 25, 26, 27։

Յետոյ Մովսէս Նաբաւ լեռը բարձրացաւ. Աստուած ցոյց տուաւ անոր Քանանու ամբողջ երկիրը՝ մինչեւ Դան, մինչեւ հեռաւոր ծովը՝ Երիքովի շրջակայքը, որ հարուստ է արմաւենիներով։ Աստուած ըսաւ. «Ահա՛ այս է այն երկիրը, զոր ես խոստացեր եմ Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ, այս բոլորը քու աչքովդ տեսար, բայց դու այն տեղ չպիտի մտնես»։ Այսպէս Աստուծոյ ծառայն Մովսէս մեռաւ Մովաբացւոց երկրին մէջ. անոր գերեզմանին տեղն անծանօթ կը մնայ մինչեւ ցայսօր։ Իսրայէլի որդիքը Մովսէսի մահուան վրայ երեսուն օր սուգ բռնեցին։

—

«Լեր՛ հաւատարիմ մինչեւ ի մահ և տաց քեզ ըզպսակն կենաց»։ Յայտ. Յովհ. Բ. 10.

Հաւատարիմ եղիր մինչեւ ի մահ, կենաց պսակը քեզի կուտամ։

«Եւ իմաստունք ծագեսցին իբրեւ զլուսաւորութիւն ի հաստատութեան, եւ բազումք յարդարոց իբրեւ զաստեղս յաւիտեան»։ Դան. ԺԲ. 3.

Իմաստունք լուսոյ պէս պէտք է փայլին երկնակամարին վրայ, իսկ արդարոց շատերը՝ աստղի նման յաւիտեանս յաւիտենից։

Բ.

ՅԵՍՈՒ

43.

Յեսու կը նուաճէ Քանանու երկիրը

Ա.

Մովսէսի մահուընէն յետոյ Աստուած ըսաւ Յեսուայ. «Իմ ծառաս Մովսէս մեռաւ, արի՛ ել, անցիր Յորդանանը ժողովուրդին հետ եւ գնա՛ այն երկիրը զոր ես խոստացեր եմ Իսրայէլի որդւոց։ Ոչ ոք համարձակի քեզի դէմ կենալ, քանի որ դու կենդանի ես. ինչպէս որ Մովսէսի հետն էի, այնպէս ալ քեզ հետ պիտի ըլլամ։ Զօրացիր եւ քաջացիր; օրինաց գիրքը քու բերնէդ չհեռանայ, ցայգ և ցերեկ անոր վրայ մտածէ եւ կատարէ մէջի գրուածները, այն ժամանակ քու ամեն գործդ կը յաջողի»։

Յեսու պատուիրեց ժողովրդեան առաջնորդաց և ըսաւ. «Մտէ՛ք բանակը, հրաման տուէք ժողովրդեան և ըսէք որ պաշար պատրաստեն, որովհետեւ երեք օրէն յետոյ պէտք է Յորդանանը անցնինք»։ Յեսու ծածուկ երկու լրտեսներ ուղարկեց որ Երիքովը խուզարկեն. անոնք վերադարձան եւ պատմեցին որ Աստուած ամբողջ երկիրը եւ Երիքովը մեր ձեռքը մատնեց։

Առաւօտուն կանուխ ելաւ Յեսու եւ ժողովրդեան հետ միատեղ դիմեց դէպի Յորդանանու եզերքը, եւ հոն ըսաւ քահանաներուն. «Առէք այս Տապանակ Ուխտին եւ անցէք ժողովրդեան առջեւը»։ Քահանայք առաջ անցան, իսկ ժողովուրդը կը հետեւէր անոնց Յորդանանու մէջէն եւ եկան մինչեւ Երիքով։

Բ.

Երիքովի դռները փակուած էին Իսրայէլի որդւոց առջեւ. քաղաքացիք ելեւմուտքը դադրեցուցեր էին. Աստուած ըսաւ Յեսուայ. «Ահա՛ Երիքովը քու ձեռքդ կը մատնեմ, պատուիրէ զինուորներուդ որ քաղաքին չուրջը անգամ մը դառնան եւ վեց օր այդպէս շարունակեն. եօթներորդ օրը հրամայէ քահանայից որ փողերն առնուն եւ Տապանակին առջեւէն երթան. այդ օրը եօթն անգամ դարձէք քաղաքին չուրջը. քահանայք թող փողը հնչեն, իսկ դուք փողին ձայնը լսելնուդ պէս ամենքդ ալ աղաղակ բարձրացուցէք. այս աղաղակին ժամանակ քաղաքին պարիսպները կը կործանին»։

Յեսու այնպէս ըրաւ, ինչպէս որ Աստուած հրամայեր էր։ Եօթներորդ օրը, երբ քահանայք եօթներորդ անգամ փողը հնչեցուցին, ժողովուրդը սկսաւ աղաղակել. քաղաքին պարիսպները կործանեցան, ժողովուրդը ներս մտաւ, աւարի առաւ եւ կոտորեց ամեն ինչ որ կար՝ թէ մարդ

եւ թէ կենդանի․ իսկ մնացածը կրակի տուաւ և այրեց։

Գ․

Գաբաւոնի բնակիչները, երբ լսեցին որ Յեսու Երիքովի հետ այսպէս խստիւ վարուեր է, խորամանկութիւն ի գործ դրին․ դեսպաններ ուղարկեցին Իսրայելացւոց մօտ, հին լաթեր հագան, հետերնին առին պատռուած եւ կարկատած գինւոյ տիկեր, մաշած կօշիկներ, չորցած և բորբոսած հացեր ու եկան Յեսուայ բանակը եւ ըսին․ «Մենք հեռու տեղէ կուգանք, ամեն բան ինչ որ ունէինք՝ նոր էր՝ երբ ճամբայ ելանք, բայց երկար ճանապարհորդութեան ժամանակ ամեն ինչ հինցաւ, հիմայ մեզի հետ դաշինք դրէք»։

Յեսու խաղաղութիւն ըրաւ, դաշինք դրաւ եւ խոստացաւ անոնց չ'վնասել․ ժողովրդեան իշխաններն ալ երդուընցան և նոյնը խոստացան։ Երեք օրէն Իսրայէլի որդիքը դիմեցին դէպ ի Գաբաւոն քաղաքը․ այն ատեն Յեսու իմացաւ որ ատոնք իրենց դրացիներն են եղեր, կանչեց քաղաքացիներն եւ ըսաւ․ «Ինչո՞ւ խաբեցիք զմեզ»։ Անոնք պատասխանեցին․ «Վախերնուս որպէս զի կեանքերնիս ազատի․ այժմ մեր կեանքը քու ձեռքդ է, ըրէ՛ ինչ որ կ'ուզես»։ Յեսու խնայեց անոնց կենաց՝ եղած դաշնադրութեան եւ տրուած խոստման համաձայն․ բայց զանոնքն ալ փայտահար և ջրկիր ըրաւ Իսրայէլացւոց պետոյից համար։

Դ․

Երուսաղէմի թագաւորը երբ այս բանս լսեց՝ շատ վախցաւ․ դաշնադիր եղաւ Ամորհացի չորս թագաւորաց հետ, որոնք չուեցին եւ բանակ դրին Գաբաւոնի չուրջը։ Գաբաւոնի բնակիչները մարդ ղրկեցին Գաղգաղա, իմաց տուին Յեսուայ եւ ըսին․ «Շուտով ե՛կ եւ ազատէ զմեզ Ամորհացիներէն»։ Յեսու գիշերով փութաց այն կողմը իւր զինուորներով։ Աստուած ըսաւ Յեսուին․ «Մի՛ վախնար, ես զանոնք քու ձեռքդ կը մատնեմ»։ Այսպէս Յեսու յանկարծակի թշնամիոյն վրայ եկաւ եւ Գաբաւոնի մօտ մեծ պատերազմ մը տեղի ունեցաւ․ Աստուած սարսափեցուց Ամորհացիները, մեծ կարկուտ թափեց անոնց գլխուն եւ ցիր ու ցան ըրաւ։ Իսրայէլացիք անոնց ետեւէն ինկան․ Յեսու աղօթեց եւ ըսաւ․ «Կեցի՛ր, արեւ, Գաբաւոնի դիմացը»։ Արեւը կանգ առաւ երկնակամարի վրայ եւ մարը չ'մտաւ, մինչև որ Յեսու ոչնչացուց թշնամիները։ Այսպէս Աստուած Իսրայէլի համար պատերազմեցաւ եւ Յեսու դարձաւ նորէն դէպ ի բանակը Գաղգաղա։

Այս տեղ Յեսուայ իմաց տուին, որ հինգ թագաւորներ գտնուեր են այրի մը մէջ պահուըտած։ Յեսու հրամայեց դուրս հանել զանոնք, գլխատել տուաւ եւ փայտէ կախեց։ Երեկոյին վերուցին անոնց դիակները, նետեցին նոյն այրին մէջ եւ մեծ քար մը բերանը դրին։

Ե.

Յեսու՝ երեսուն եւ մէկ թագաւորաց յաղթեց. անոնց երկիրները նուաճեց ու տուաւ Իսրայէլի որդւոց իբր ժառանգութիւն՝ իւրաքանչիւր ցեղին իւր բաժինը յատկացնելով։ Ռուբէնի, Գադի եւ Մանասէի ցեղին մի մասը՝ ստացան Յորդանանու միւս կողմի (յայնկոյս Յորդանանու) երկիրները։ Ղեւիի որդիքը ժառանգութիւն չստացան, այլ անոր փոխարէն՝ ամէն ցեղերու յատկացեալ երկիրներու մէջէն քառասուն եւ ութը քաղաքներ առին։ Յուդայի սերունդը ստացաւ Մեռեալ ծովուն և Փղշտացւոց երկրին մէջ եղած տարածութիւնը։ Իսրայէլացիք իբր ժառանգութիւն՝ տուին Յեսուայ Թամնաթսարա քաղաքը, որ Եփրեմի լերանց մէջ կը գտնուի։ Տապանակ Ուխտին բերին Սելով քաղաքը և դրին վկայութեան խորանին մէջ։ Այսպէս ժողովուրդը բնակեցաւ Քանանու մէջ եւ այն բարիքները զոր Աստուած խոստացեր էր, բոլորն ալ ստացաւ։

—

«Սա է իմ Աստուած և փառաւոր արարից զսա. Աստուած հօր իմոյ և բարձր արարից զսա»: Մովս. ԺԵ. 3։

Այս է իմ Աստուածը և ես կը փառաւորեմ զինքը. այս է իմ հօրս Աստուածը, և ես կը բարձրացընեմ զնա։

44.

Յեսուայ մահը

Երբ Աստուած Իսրայէլացիները հանգստացուց թշնամեաց յարձակումներէն, Յեսու կանչեց բոլոր ժողովրդեան ծերերը, իշխանները, դատաւորներն և դպիրները ու ըսաւ անոնց. «Ես ծերացեր եմ, իմ օրերս անցեր են, դուք տեսաք թէ Աստուած ի՛նչ ըրաւ հեթանոսաց, ինչպէ՞ս պատերազմեցաւ անոնց հետ ձեր տեղը. ձեզմէ ամէն մէկն անոնց հազարն հալածեց. զգոյշ եղէք այսուհետեւ և ձեր Աստուածը սրտանց սիրեցէք. կատարեցէ՛ք Մովսէսի բոլոր օրէնքները. հաւատարմութեամբ եւ ուղղութեամբ ծառայեցէք Աստուծոյ, իսկ եթէ չ՛էք ուզեր ծառայել, այսօրուընէ ընտրեցէք ձեզ համար մի այլ Աստուած, իսկ ես և իմ տունս նոյն Աստուծոյ կը ծառայենք»։

Ժողովուրդը պատասխանեց. «Աստուած մի՛ արասցէ. մենք ևս նոյն Աստուծոյ կը ծառայենք, որովհետեւ նա է մեր Աստուածը»։ Այն ժամանակ Յեսու դաշինք դրաւ ժողովրդեան հետ և մի մեծ քար կանգնեց իբր վկայ այս ուխտին։ Մեռաւ Յեսու երբ արդէն հարիւր տասը տարեկան էր։ Թաղեցին զնա Եփրեմի լերանց մէջ։ Յովսէփայ ոսկորները զորս Իսրայէլի որդիքը

իրենց հետն էին բերած, Թաղեցին Սիւքէմ քաղաքին մէջ։

—

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ, և տաց քեզ զպսակն կենաց»։ Յովհ. Բ. 10։

Գ.

ՄԻՒՍ ԴԱՏԱՒՈՐՔ

45.

Գեդէոն իբր Իսրայէլի դատաւոր

Ա.

Յեսու մեռաւ. մեռած էին նաև իրեն ժամանակակից մարդիկը. այնուհետեւ նոր սերունդ մը յառաջ եկած էր։ Այն ժամանակ Իսրայէլի որդիքը սկսան ամուսնանալ հեթանոս աղջկանց հետ և իրենց աղջիկներն ալ անոնց կնութեան կուտային։ Նորէն մոռցան ճշմարիտ Աստուածը և սկսան կուռքեր պաշտել։ Աստուած եօթը տարի մատնեց զանոնք Մադիամացւոց ձեռքը։ Ինչ որ Իսրայէլացիք կը ցանէին, հունձքի ժամանակ Մադիամացիք կուգային կը յափշտակէին եւ կ'ոչընչացնէին հունձքը, այնպէս որ իրենց երկրին մէջ ոչ հաց կը մնար և ոչ կենդանի։ Իսրայէլացիք յիշեցին զԱստուած և սկսան օգնութիւն խնդրել իրմէ։

Այն ժամանակ Աստուած երեւցաւ Գեդէոն անունով մէկու մը, որ Մանասէի ցեղէն էր եւ ըսաւ. «Աստուած քեզի հետ է, ո՛վ քաջդ, գընա՛, ազատէ՛ Իսրայէլի որդիքը Մադիամացւոց ձեռքէն»։ Գեդէոն պատասխանեց. «Ինչպէ՞ս

կարող եմ ես ազատել Իսրայէլացիներն, ես բարեկամութիւն չունիմ Մանասէի ցեղին հետ, եւ բաց ի ասկէ իմ հօրս տանը կրտսեր անդամներէն մէկն եմ»։ Աստուած ըսաւ. «Ես քեզի հետ կ՚ըլլամ, դու Մադիամացւոց այնպէս կը յաղթես ինչպէս մէկ մարդու մը. կործանէ՛ Բահաղի սեղանը՝ որ քու հօրդ կը պատկանի, ջարդէ՛ անոր չորս կողմը գտնուող անտառը և շինէ՛ Աստուծոյ համար սեղան մը այս ժայռին ծայրը, ա՛ռ ողջակէզ մը եւ զոհէ՛ նոյն անտառին փայտովը։»

Գեդէոն առաւ իւր ծառայներէն տասն հոգի և գիշերանց կատարեց Աստուծոյ հրամանը։ Առաւօտուն երբ քաղաքին բնակիչներն արթնցան, տեսան որ Բահաղի սեղանը կործաներ է, անտառը ջարդուեր եւ ողջակէզ մը դրուեր է Եհովայի սեղանին առջեւ։ Այն ժամանակ սկսան իրարու նայիլ եւ ըսել. «Ո՞վ այս բանը ըրեր է»։ Ամենքը շփոթած կը փնտռէին կործանողն եւ կ՚ըսէին. «Այս բանը անշուշտ Յովասի որդի Գեդէոնի գործն է»։

Քաղաքացիք Յովասի մօտ եկան եւ ըսին. «Դուրս հանէ քու որդիդ, նա պէտք է որ մեռնի, որովհետեւ Բահաղի սեղանը կործաներ է»։ Իսկ Յովաս ըսաւ իւր շուրջը գտնուողներուն. «Դուք կ՚ուզէք Բահաղի տեղ դատաւոր կանգնիլ. եթէ նա Աստուած է, թող ինքզինքը պաշտպանէ և վրէժխնդիր ըլլայ իւր սեղանը կործանողներուն»։

Բ.

Մադիամացիք դաշտավայրին վրայ բանակներ դրեր էին. Գեդէոն հրամայեց եղջերափողերը հնչեցնել, դեսպաններ ղրկեց Մանասէի եւ Իսրայէլի միւս ցեղերուն՝ որպէս զի իրեն հետ միանան։ Զինուորեալ շատ մը մարդիկ հաւաքուեցան Գեդէոնի մօտ՝ որ առաջնորդեց զանոնք դէպ ի այն աղբիւրը, որոյ հիւսիսային կողմը բանակեր էին Մադիամացիք։ Աստուած ըսաւ Գեդէոնին. «Քու հետդ եղած ժողովուրդը շատ բազմաթիւ է. թերեւս Իսրայէլ պարծենայ և ըսէ թէ իմ բազուկս զիս ազատեց։ Խօսէ՛ ժողովրդեան հետ և յայտնէ որ երկչոտները հեռանան»։ Այն ժամանակ քսան և երկու հազար հոգի ետ դարձան և տասը հազար միայն մնացին։ Աստուած կրկին անգամ ըսաւ Գեդէոնին. «Դարձեալ շատ է զօրքդ, երեք հարիւր մարդ բաւական է, մնացածն արձակէ»։ Գեդէոն կատարեց Աստուծոյ հրամանը։ Մադիամացւոց բանակը հովտին մէջն էր, իսկ Իսրայէլացիք բարձրութեան վրայ էին։

Կէս գիշերին՝ Գեդէոն ըսաւ իւր երեք հարիւր մարդոց. «Արթնցէ՛ք, ելէ՛ք, Աստուած Մադիամացւոց բանակը ձեր ձեռքը պիտի մատնէ»։ Գեդէոն երեք հարիւր հոգին՝ երեք մասի բաժնեց եւ ամեն մէկուն մէյմէկ եղջիւրէ փող և մէյմէկ մէջը վառած սափոր տուաւ եւ ըսաւ. «Ինձ նայեցէ՛ք, ես ինչ որ ընեմ, դուք ալ նոյնը ըրէք. երբ ես փողը հնչեցնեմ, ինձ մօտ ե-

ղողները թո՛ղ նոյնպէս հնչեցնեն եւ աղաղակեն. «Հոս է Աստուծոյ եւ Գեդէոնի սուրը»։ Գեդէոն գիշերանց իւր հարիւր մարդով Մադիամացւոց բանակը մտաւ եւ հրամայեց փողերը հնչեցնել ու սափորները կոտրտել։ Երեք գնդերն ալ սկսան փողերը հնչեցնել և սափորները փշրել. փողերն աջ՝ իսկ ջահերը ձախ ձեռքերնին բռնած, սկսան աղաղակել. «Հոս է Աստուծոյ եւ Գեդէոնի սուրը»։ Մադիամացւոց զօրքերը զարհուրած սկսան աղաղակել և փախչիլ. Իսրայէլացիք հալածեցին զանոնք եւ կոտորեցին։ Այնուհետեւ Իսրայէլացւոցմէ ոմանք ըսին Գեդէոնին. «Մեր վրայ յորդւոց յորդի իշխան եղիր դուն»։ Գեդէոն պատասխանեց. «Ես ձեր վրայ իշխան չ'եմ ըլլար և ոչ ալ իմ որդիս, այլ Աստուած է ձեր իշխանը»։ Գեդէոն քառասուն տարի շարունակ դատաւոր եղաւ և իւր կենդանութեան ժամանակ երկիրը բոլորովին խաղաղ էր։

—

«Զի ամենայն կուռք հեթանոսաց սնոտիք են, այլ Տէր Աստուած մեր ճշմարիտ»։ Երեմիա. Ժ. 3-10.

Հեթանոսաց բոլոր աստուածները սուտ բաներ են, մեր Տէր Աստուածը միայն ճշմարիտ է։

«Աստուած մեր ապաւէն եւ զօրութիւն, օգնական ի վերայ նեղութեանց, որ գտին զմեզ յոյժ»։ Սաղ. ԽԵ. 2.

Աստուած է մեր ապաւէնը եւ զօրութիւնը. մեր նեղութեանց մէջ նա մեզի շատ օգնեց։

46.

Սամփսոն

Իսրայէլի որդիքը վերստին հեռացան եւ ըսկըսան Բահաղի պաշտօն մատուցանել. ուստի Աստուած ալ մատնեց զանոնք Փղշտացւոց ձեռքը քառասուն տարի շարունակ։ Այնուհետեւ Սամփսոն անունով մէկը դատաւոր ընտրեց։ Այս դատաւորը Թամնաթա գնաց, որպէս զի Փղշտացւոց աղջիկներէն իրեն կին մը առնու։ Երբ անոնց այգեստանները հասաւ, երիտասարդ առիւծ մը մռնչելով առջեւը ելաւ։ Սամփսոն այս գազանն ուլի նման ճեղքեց։ Քիչ ժամանակէ յետոյ երբ նոյն ճամբէն կ'երթար, ուզեց առիւծին սատակը տեսնել եւ գտաւ անոր բերնին մէջ խումբ մը մեղու եւ մեղր։

Սամփսոն Փղշտացւոցմէ աղջիկ մը առաւ ու հարսանիք ըրաւ Թամնաթայի մէջ։ Երեսուն Փղշտացի երիտասարդք ներկայ էին հարսանեաց որպէս հիւր։ Սամփսոն ըսաւ անոնց. «Ես ձեզ հանելուկ մը պիտի ըսեմ, եթէ դուք մինչեւ հարսանեաց եօթներորդ օրը գտնէք, ինձմէ երեսուն ձեռք զգեստ կ'առնաք. իսկ եթէ չ'կարողանաք գտնել, դուք տուէք ինձ նոյնքան զգեստ»։ Համաձայնեցան եւ զրուցեց հանելուկը. — «Ի կերողէ ել կերակուր եւ ի հզօրէ ել քաղցր.» այսինքն ուտողէն ուտելիք ելաւ եւ հզօրէն՝ քաղցր։ Անոնք չ'կրցան գտնել այս հանելուկը, ուստի

գնացին Սամփսոնի կնոջը եւ ըսին. «Խաբէ՛ քու էրիկդ եւ այս հանելուկի միտքն իմացի՛ր. ապա թէ ո՛չ այն ժամանակ մենք զքեզ ալ՝ քու հօրդ տունն ալ կ՚այրենք»։ Կինը այնքան խնդրեց եւ լացաւ, մինչեւ որ Սամփսոն յայտնեց գաղտնիքը եւ նա ալ իր հայրենակից երիտասարդաց պատմեց։ Եօթներորդ օրը՝ արեգակին մտնելէն առաջ Փղշտացիք ըսին Սամփսոնի. «Ի՞նչ կայ մեղրէն աւելի քաղցր եւ առիւծէն հզօրագոյն»։ Սամփսոն պատասխանեց. «Եթէ դուք իմ կինս չ՚ստիպէիք՝ չէիք կրնար երբեք իմանալ»։

Սամփսոն գնաց Փղշտացւոց ուրիշ մէկ քաղաքը եւ երեսուն մարդ սպաններ, անոնց զգեստները բերաւ եւ հանելուկը գտնողներուն տուաւ եւ ինքը վերադարձաւ Յուդայի երկիրը։ Աները՝ Սամփսոնի կինը այն տեղի երիտասարդաց միոյն տուաւ։ Երբ ժամանակէ մը յետոյ վերադարձաւ Սամփսոն իր կնոջ քով եւ տեսաւ որ ուրիշին տուեր են զնա, բարկացաւ եւ ուզեց վրէժ առնուլ բոլոր Փղշտացիներէն։ Ուստի բռնեց երեք հարիւր աղուէս, զոյգ զոյգ պոչ պոչի կապեց և պոչերնուն մէջ վառած ջահ դնելով՝ արձակեց Փղշտացւոց երկրին դաշտերուն մէջ եւ այրեց ցորենի արտերը, այգիները եւ ձիթենեաց ծառերը։ Փղշտացիք Թամնաթա եկան և Սամփսոնի աներն ու կինը միասին այրեցին։ Սամփսոն պարազմեցաւ անոնց հետ եւ շատերն սպաններ։

Փղշտացիք յարձակեցան Յուդայի երկրին վրայ եւ ստիպեցին Իսրայէլի որդիքն զՍամփսոն կապած իրենց յանձնել։ Բայց Սամփսոն իր կամօք թոյլ տուաւ իր հայրենակցաց որ կապեն զինքը եւ թշնամւոյն ձեռքը մատնեն։ Երբ Փղշտացիք տեսան զինքը, սկսան ուրախութեամբ աղաղակել։ Սամփսոն թելի նման դիւրաւ կտրեց չուանները, գտաւ մի սատկած իշու ծնօտ եւ անով հազար մարդ սպաններ։ Յետոյ գնաց Սամփսոն Փղշտացւոց ուրիշ քաղաք մ՚ալ, որուն բնակիչները քաղաքին դռները փակեցին գիշերով եւ կը հսկէին՝ առաւօտուն խեղդամահ ընելու զինքը։ Սամփսոն կէս գիշերին ելաւ, վերցուց քաղաքին դռները սեմով ու նիգով, շալկեց եւ տարաւ քաղաքին մօտ գտնուող լերան գլուխը դրաւ։

Քիչ ժամանակէ յետոյ Սամփսոն գտաւ ուրիշ Փղշտացի աղջիկ մը Դալիլա անունով եւ ամուսնացաւ անոր հետ։

Բ.

Փղշտացւոց իշխանները եկան Սամփսոնի կնոջ քով եւ ըսին. «Եթէ դու էրիկդ մեր ձեռքը մատնելու ըլլաս՝ մեզմէ իւրաքանչիւրը պիտի վճարէ քեզի հազար հարիւր արծաթ»։ Երբ Սամփսոն քնացաւ, կինը՝ Փղշտացիները քովը կանչեց, որք բռնեցին Սամփսոնը երկաթէ շղթաներով կապեցին, աչքերը հանեցին եւ Գազա քաղաքը տանելով բանտ դրին՝ ուր նա աղօրիքի քարը կը դարձնէր։

Այնուհետեւ Փղշտացիք և անոնց իշխանները հաւաքուեցան Դագոն կուռքին զոհ մատուցանե-

լու համար եւ ըսին. «Մեր Աստուածը՝ մեր թշնամին ձեռքերնիս մատնեց»։ Երբ անոնց սրտերը զուարթացան, Սամփսոնը բանտէն հանեցին որ իրենց առջեւ խաղայ. կանգնեցուցին զինքը տանը մէջ՝ երկու սիւներու մէջտեղ՝ որոնց վրայ տունը հաստատուած էր։ Տունը լեցուն էր այր եւ կին մարդոց բազմութեամբ, իսկ տանեաց վրայ՝ մօտ երեք հազար հոգի կանգնած էին։ Յանկարծ բռնեց Սամփսոն տանը մէջի երկու սիւները եւ աղաղակեց. «Թո՛ղ ես ալ այս այլազգեաց հետ մեռնիմ»։ Այս ըսաւ և բոլոր ուժովը շարժեց երկու սիւները, որոնք գետին ընկան. տունը փլաւ իշխաններուն ու անոնց հետ ուրախացողներուն գլխուն վրայ։ Հոս Սամփսոն աւելի փղշտացի սպաննեց քան թէ բոլոր իւր կենացը մէջ։

—

«Աստուծով արասցուք զօրութիւն։» Սաղ. ԾԹ. 14։

Աստուծով զօրութիւն կը գործենք։

«Իմ է վրէժխնդրութիւն եւ ես հատուցից՝ ասէ Տէր։» Թ. Ա. Հռովմ. ԺԲ. 19.

47.

Հռութ

Դատաւորաց կառավարութեան ժամանակ Իսրայէլացւոց երկիրը սով ինկաւ։ Եղիմելէք անունով մարդ մը իւր Նոեմի կնոջ եւ երկու որդւոց հետ՝ Յուդայի Բեթլեհէմ քաղաքէն գնաց Մովաբացւոց երկիրը։ Եղիմելէք մեռաւ այնտեղ, իսկ անոր որդիքը ամուսնացան այն տեղի աղջկանց հետ, որոնց միոյն անունը Որփա էր, իսկ միւսինը Հռութ։

Տասը տարի յետոյ Նոեմիի երկու որդիքը մեռան։ Երբ լսեց Նոեմի որ հայրենի երկրին մէջ սովը դադրեր է, ելաւ իւր հարսներուն հետ եւ փափաքեցաւ Յուդայի երկիրը դառնալ։ Ճամբան՝ սկեսուրն ըսաւ իւր հարսներուն. «Դարձէ՛ք ձեր ծնողաց քով, Աստուած օրհնէ զձեզ, դուք լաւ կնութիւն ըրիք իմ որդւոցս եւ ինծի համար բարի հարսեր եղաք»։ Հարսերն սկսան լալ։ Որփա փաթթուեցաւ սկեսրոջը, համբուրեց և հրաժարական ողջոյն տուաւ. իսկ Հռութ չ՚էր ուզեր դառնալ։ Նոեմի ըսաւ. «Տեսա՞ր Որփան որ ետ դարձաւ իւր ծնողաց մօտ, դու ալ գնա՛ անոր հետ»։ Հռութ պատասխանեց. «Աստուած մի՛ արասցէ որ ես զքեզ միայն թողում և հեռանամ. ուր որ դու երթաս, ես ալ հետդ կուգամ. ուր որ դու կը մնաս, այնտեղ ես ալ կը մնամ։ Քու ազգդ իմ ազգս պիտի ըլլայ և քու Աստուածդ իմ Աստուածս. ուր որ դու կը մեռնիս՝ այնտեղ ալ ես, մահը միայն զիս քեզմէ պիտի բաժնէ»։ Երբ Նոեմի տեսաւ որ Հռութ որոշեր է իւր հետ երթալու, ալ խօսք չըրաւ այդ մասին։ Այսպէս անոնք միատեղ գնացին մինչեւ Բեթլեհէմ։ Այն ժամանակ Նոեմի ըսաւ. «Հարուստ հեռացայ

ես ձեզմէ, իսկ Աստուած աղքատ ետ դարձուց զիս»։ Երկուքն ալ սկսան բնակիլ Բեթլեհէմի մէջ։

Հունձքի ժամանակ էր. Հռութ դաշտ կ՚երթար և հասկ կը ժողվէր։ Օր մը գնաց Բոոսի արտը։ Նոյն ժամանակ Բոոս եկաւ հնձողաց քով եւ սիրով ողջունեց զանոնք ըսելով. «Աստուած հետերնիդ ըլլայ»։ Հնձողները պատասխանեցին. «Օրհնէ՛ զքեզ Աստուած»։ Բոոս հարցուց. «Ո՞ւմ աղջիկն է այդ»։ Վերակացուն պատասխանեց. «Սա այն Մովաբացի աղջիկն է, որ Նոեմիի հետ դարձեր է»։ Բոոս ըսաւ Հռութին. «Աղջիկս, մի՛ երթար ուրիշի արտը հասկ ժողվելու, այլ մնացիր իմ աղջկանցս քով ուր անոնք կը հնձեն, դու ալ անոնց կը հետեւիս. երբ ծարաւիս, գնա՛ այն ամաններէն խմէ, ուսկից իմ ծառաներս կը խմեն»։ Հռութ պատասխանեց. «Ես օտարական կին մ՚եմ, իմ ո՞ր արժանաւորութեանս համար այդպիսի մեծ ողորմութեան արժանանամ»։ Բոոս պատասխանեց. «Ինծ ամեն բան պատմեցին, թէ դու ինչպէս վարուեր ես սկեսրոջդ հետ՝ ամուսնոյդ մահուընէն յետոյ. դու թողեր ես հայրդ ու մայրդ, ծննդեան տեղըդ եւ եկեր ես սկեսրոջդ հետ՝ քեզի համար անծանօթ երկիր մը»։ Ճաշի ժամանակ Բոոս Հռութին հաց տուաւ, նա ալ կերաւ եւ կտոր մ՚ալ սկեսրոջը համար պահեց։ Երբ Հռութ ելաւ դարձեալ հասկ ժողվելու, Բոոս պատուիրեց ծառայից եւ ըսաւ. «Թոյլ տուէք անոր՝ որայից

մէջէն հաւաքելու եւ աւելորդ մաս մ՚ալ թափեցէք որ ժողվէ»։ Այսպէս Հռութ մինչեւ երեկոյ հասկ հաւաքեց. երբ գիշերը հասաւ՝ շալկեց հաւաքածը եւ տուն դարձաւ։

Սկեսուրը հարսին հաւաքած հասկերը եւ հետը բերած հացը տեսնելով ըսաւ. «Ո՞ւր տեղ էիր այսօր հասկ հաւաքելու»։ Հարսը պատասխանեց. «Բոոս անունով մարդու մը արտն էի»։ Նոեմի պատասխանեց. «Աստուած օրհնէ զայն. անիկայ մեր ազգականն է»։ Այսպէս Հռութ ամեն օր կ՚երթար Բոոսի արտը եւ հասկ կը ժողվէր մինչեւ հունձքին վերջը։ Բոոս՝ Հռութին հաւնեցաւ եւ անոր հետ ամուսնացաւ։ Աստուած զաւակ մը տուաւ, որուն անունը դրին Ովբէդ։ Նոեմի ալ դայեակ եղաւ մանկան։ Ովբէդ՝ Յեսսէի հայրն եղաւ, իսկ Յեսսէն ալ Դաւթի։

—

«Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ եւ տաց քեզ ըզպսակն կենաց»։ Յայտ. Յովհ. Բ. 10։

48.

Հեղի եւ Սամուէլ

Ա.

Հեղիի քահանայապետութեան ժամանակ կ՚ապրէր Եղկանա անունով մարդ մը իւր Աննայ

կնոջը հետ։ Ասոնք անզաւակ էին. Եղկանա սովորութիւն ունէր ամէն տարի Սելով երթալու և Աստուծոյ զոհ մատուցանելու. անոր հետ կ'երթար եւ իր Աննա կինը։ Անգամ մը Սելով գացած ժամանակ՝ խիստ տրտմեցաւ ու լացաւ, աղօթեց Աստուծոյ և ըսաւ. «Տէր Սաբաւովդ, յայտնի է քեզի աղախնոյդ նեղութիւնը, եթէ անոր որդի մը ընծայես, ես զանիկայ քեզ կը նուիրեմ, որ մինչև իր մահը ծառայէ»։ Հեղի քահանայապետը նստած էր վկայութեան խորանին դրանը առջեւ եւ ուշադրութեամբ կը նայէր Աննայի բերնին, որովհետեւ շրթունքները կը շարժէին, իսկ ձայն չ'էր լսուեր։ Եւ որովհետեւ երկար տեւեց այս աղօթքը, Հեղի ըսաւ. «Աննա՛, մինչեւ ե՞ր պիտի աղօթես»։ Աննա պատասխանեց. «Ես վշտացած կին մ'եմ, սիրտս Աստուծոյ առաջ կը բանամ»։ Հեղի ըսաւ. «Դարձիր խաղաղութեամբ տունդ, Իսրայէլի Աստուածը խնդիրքդ կը կատարէ»։ Կինը վերադարձաւ. անոր սիրտը այլ եւս այնպէս տխուր չէր։

Աստուած յիշեց զԱննա և որդի մը պարգեւեց, զոր անուանեցին Սամուէլ, որ կը նշանակէ «Աստուծմէ խնդրուած»։ Երբ մանուկը քանի մը տարեկան եղաւ, մայրը զայն բերաւ Սելով Հեղի քահանայապետին առջեւ և ըսաւ. «Տէ՛ր, ես այն կինն եմ, որ քեզի մօտ կեցած կ'աղօթէի այս մանկան համար. Աստուած իմ աղօթքս լսեց, ուստի ես իր տուածը իրեն կ'ընծայեմ մինչեւ ի մահ։» Աննա գոհութիւն մատոյց Աստուծոյ եւ

տուն դարձաւ, իսկ մանուկը Հեղիի մօտ Աստուծոյ սպասաւոր եղաւ։

Բ.

Հեղիի որդիքը չար էին, Աստուծմէ երկիւղ չ'ունէին եւ իրենց քահանայական իրաւունքը չէին ճանչնար։ Կը խլէին Իսրայէլացի ուխտաւորաց զոհերուն մեծ մասը և անվայել գործեր կ'ընէին. ծերունի Հեղին գիտէր անոնց բոլոր ըրածները եւ յաճախ կ'ըսէր. «Ինչո՞ւ այդպէս կ'ընէք, ձեր անարժան վարմունքով ժողովուրդը կը գայթակղեցնէք»։ Բայց անոնք չէին լսեր։ Իսկ մանուկ Սամուէլ կ'աճէր եւ կը զօրանար, զայն կը սիրէին Աստուած եւ մարդիկ։ Աստուծոյ խօսքը շատ անգին էր այդ ժամանակներ, չ'էր գտնուեր, հազուադիւտ էր։

Օր մը, երբ Սամուէլ վկայութեան խորանին առջեւ՝ Տիրոջ տանը մէջ քնացած էր, ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր. «Սամուէ՛լ, Սամուէ՛լ»։ Սամուէլ վազեց Հեղիի մօտ եւ ըսաւ. «Հոս եմ. ինչո՞ւ կանչեցիր զիս»։ Հեղի պատասխանեց. «Ես զքեզ չկանչեցի, դարձիր եւ քնացիր»։ Աստուած զՍամուէլ երկրորդ եւ երրորդ անգամ կանչեց։ Սամուէլ կրկին անգամ գնաց Հեղիի մօտ։ Հեղի գուշակելով որ Աստուած է զայն կանչողը, ըսաւ. «Դարձիր եւ քնացիր. եթէ միւս անգամ ալ ձայն լսես, ըսէ՛. Տէ՛ր, քու ծառադ կը լսէ քեզ»։ Սամուէլ դարձաւ իր տեղը։ Աստուած կրկին անգամ ձայն տուաւ. «Սամուէ՛լ,

Սամուէ՛լ»։ Սամուէլ պատասխանեց․ «Ըսէ՛, Տէ՛ր, քու ծառադ կը լսէ»։ Աստուած ըսաւ Սամուէլին․ «Ես կ՚ուզեմ Հեղին իր որդւոց հետ դատել, որովհետեւ գիտէ իր որդւոց անվայել վարմունքն և չպատժեր զանոնք»։ Սամուէլ կը վախէր այս բանը Հեղիին յայտնելու։

Այն ժամանակ Հեղի կանչեց զայն եւ ըսաւ․ «Աստուած ի՞նչ ըսաւ քեզ․ մի՛ ծածկեր ինձմէ որդեակ»։ Սամուէլ պատմեց անոր ամեն բան։ Հեղի ըսաւ․ «Ինչ որ բարի է, թո՛ղ զայն կատարէ Աստուած»։

Դ.

Իսրայէլացիք պատերազմ ունեցան Փղշտացւոց հետ եւ խիստ հարուած ստացան։ Այն ժամանակ Իսրայէլի ծերերն ըսին․ «Տապանակ Ուխտին բերենք Սելովէն, որ զմեզ ազատէ այլազգեաց ձեռքէն», եւ բերել տուին․ անոր հետ եկան եւ Հեղիի երկու որդիքը։ Երբ Տապանակը բանակ բերին, բոլոր ժողովուրդը բարձր ձայնով սկսաւ աղաղակել․ իսկ Փղշտացիք կ՚ըսէին իրարու․ «Իսրայէլի Աստուածը բանակ եկեր է, ո՛վ Փղշտացիք, քաջ պատերազմեցէք որ Եբրայեցւոց ծառայ չ՚լինիք»։ Պատերազմի մէջ Իսրայէլացիք յաղթուեցան, Հեղիի երկու որդիքն ալ սպաննուեցան, իսկ Տապանակ Ուխտին գերի ինկաւ թշնամեաց ձեռքը։

Պատերազմի դաշտէն մէկը՝ զգեստները պա-

տռտելով եւ գլխին հող ցանելով Սելով եկաւ։ Հեղի դրան առջեւ աթոռի վրայ նստած էր, եւ իր սիրտը երկիւղի մէջ էր Տապանակին համար։ Հարցուց եկող մարդուն բանակին վրայօք և մարդն ալ պատասխանեց․ «Իսրայէլ յաղթուեցաւ, երկու որդիքդ ալ սպաննուեցան եւ Տապանակ Ուխտին գերի ինկաւ»։ Այս գոյժը լսելուն պէս՝ Հեղի աթոռէն վար ինկաւ, մէջքը կոտրեցաւ եւ մեռաւ։

Փղշտացիք առին Տապանակ Ուխտին եւ դրին կռատան մէջ՝ իրենց կուռքերուն քով։ Առաւօտուն տեսան որ իրենց կուռքերը Տապանակին առջեւ երեսի վրայ ընկած՝ ձեռքերնին ու ոտքերնին փշրուած մնացեր են, այն ատեն Փղշտացիք Տապանակ Ուխտին Իսրայէլացւոց ետ ղրկեցին։

Դ.

Սամուէլ կ՚աճէր եւ կը զօրանար․ Աստուած անոր հետ էր։ Սկսաւ քարոզ կարդալ բոլոր Իսրայէլացւոց․ ժողովուրդը խոստովանեցաւ որ անիկայ Աստուծոյ ճշմարիտ մարգարէն է։ Սամուէլ դատաւոր եղաւ, հաւաքեց բոլոր Իսրայէլացիներն եւ ըսաւ․ «Եթէ դուք ի բոլոր սրտէ կը դառնաք դէպ ի ճշմարիտ Աստուածը, կը թողուք օտար աստուածներն ու ծշմարտին միայն կը ծառայէք, այն ժամանակ Նա զձեզ կ՚ազատէ Փղշտացւոց ձեռքէն»։ Իսրայէլացիք թողուցին օտար աստուածները։

Երբ Փղշտացիք այս լուրը իմացան, ելան

կրկին անգամ պատերազմելու։ Իսրայէլացիք ըսին Սամուէլին. «Մի՛ դադարիր Աստուծմէ խնդրելէ՝ մինչեւ որ մեզ օգնէ»։ Սամուէլ առաւ մի գառն, ողջակէզ ըրաւ Աստուծոյ՝ ժողովրդեան հետ եւ աղօթեց. այն ժամանակ Փղշտացիք յարձակեցան Մասեփաթայի մօտ Իսրայէլացւոց վրայ։ Փղշտացիք յաջողութիւն չ՚ունեցան՝ յաղթուեցան։ Սամուէլ առաւ քար մը եւ տնկել տուաւ Մասեփաթայի և Բեթսանայի մէջ և այդ տեղն Աբենեզեր անուանեց ու ըսաւ. «Աստուած մեզ մինչեւ այս տեղ օգնեց»։ Փղշտացիք փախան եւ Սամուէլի կենդանութեան ժամանակ երբէք չհամարձակեցան Իսրայէլի դէմ զէնք առնելու։ Սամուէլ կառավարեց զԻսրայէլ իւր ամբողջ կենաց ընթացքին մէջ։ Ամեն տարի կու գար Բեթէլ, Գաղգաղ եւ Մասեփաթ, կը դատէր ժողովուրդը եւ կրկին կը դառնար Արիմաթեմ, որովհետեւ իւր տունը այն տեղ էր։ Հոս եւս կը դատէր զԻսրայէլ եւ Աստուծոյ համար սեղան մը շինեց։

—

«Որ խնայէ ի գաւազան՝ ատեայ զորդի իւր, իսկ որ սիրէն՝ խնամով խրատէ»։ Առակք Սող. ԺԳ. 24.

Ով որ կը խնայէ գաւազանին, կ՚ատէ իւր որդին։

«Արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք»։ Առակք Սող. ԺԴ. 34.

Արդարութիւնը ազգերը կը բարձրացնէ, իսկ յանցապարտութիւնը ազգերը կը նուազեցնէ։

«Եւ իմաստունք ծագեսցեն իբրեւ զլուսաւորութիւն

ի հաստատութեան եւ բազումք յարդարոց իբրեւ զաստեղս յաւիտեանս»։ Դան. ԺԲ. 3.

Դ.

ԹԱԳԱՒՈՐԱՑ ԴԱՐ

Ա.

ՍԱՒՈՒՂ

49.

Սաւուղայ Թագաւորելը

Ա.

Երբ Սամուէլ ծերացաւ, իր որդիքը Իսրայէլի վրայ դատաւոր նշանակեց. բայց անոնք իրենց հօրը ճամբէն չէին երթար. ագահութեամբ կուրցած, շարունակ կաշառք կ՚առնէին եւ օրէնքէ դուրս գործեր կը կատարէին։ Ասոր համար Իսրայէլի ծերերը Արիմաթեմ հաւաքուեցան Սամուէլի մօտ եւ ըսին. «Դուն ծերացեր ես, որդիքդ քու ճամբէդ չ՚են երթար, մեր վրայ թագաւոր մը նշանակէ ինչպէս այլազգիք ունին, որպէս զի զմեզ դատէ եւ պատերազմի մէջ առաջնորդէ»։ Այս բանը ախորժելի չ՚եկաւ Սամուէլին եւ աղօթեց Աստուծոյ այդ մասին։ Աստուած ըսաւ. «Հնազանդէ՛ ժողովրդեան պահանջման եւ թագաւոր մը տուր անոնց»։

Բ.

Բենիամինի ցեղին մէջ Կիս անունով մարդ մը կար. որդի մը ունէր որուն անունը Սաւուղ էր եւ գեղեցիկ մարդ մ՚էր։ Անգամ մը Կիսի էշերը կորան, Սաւուղ փնտռելու գնաց եւ հասաւ մինչեւ Արիմաթեմ քաղաքը։ Երբ Սամուէլ տեսաւ Սաւուղը, Աստուած ըսաւ անոր. «Ահա այս է այն մարդը՝ որ իմ ժողովուրդս պիտի կառավարէ»։ Սամուէլ ըսաւ Սաւուղին. «Դուն այսօր ինձ հետ պէտք է հաց ուտես. իշոց վրայ մի՛ մտածեր, անոնք գտնուած են. Իսրայէլի ժողովրդեան մէջ ամենէն մեծ պատիւը քեզ կը պատկանի»։ Սաւուղ Սամուէլի հետ ճաշեց։ Հետեւեալ օրը կանուխ անոնք հեռացան քաղաքէն։

Սամուէլ ըսաւ Սաւուղին. «Հանգիստ եղի՛ր»։ Այս ըսաւ եւ առաւ իւղի սրուակը, գլխին վրայ թափեց, համբուրեց եւ ըսաւ. «Աստուած զքեզ իր ժառանգութեան վրայ տէր նշանակեց»։ Երբ Սաւուղ հեռացաւ Սամուէլէ, Աստուած անոր ուրիշ սիրտ, ուրիշ հոգի տուաւ։

Սամուէլ հաւաքեց Իսրայէլի ժողովուրդը ի Մասեփաթ եւ յայտնեց որ Աստուած զՍաւուղ թագաւոր ընտրած է. ժողովուրդը սկսաւ փնտռել զայն, բայց չգտաւ, որովհետեւ կարասի մը տակ պահուըտեր էր. վերջապէս գտան և բերին։ Երբ Սաւուղ ժողովրդեան ներկայացաւ, ամենէն բարձր էր. միւս մարդոց հասակը հազիւ անոր ուսը կը հասնէր։ Ժողովուրդը ու-

րախութեան աղաղակ բարձրացուց եւ ըսաւ. «Կեցցէ՛ արքայ»։ Բայց ոմանք կ'ըսէին. «Միթէ՞ սա զմեզ պիտի փրկէ» եւ կ'անարգէին Սաւուղ թագաւորը եւ ոչ իսկ ընծայ մը կը բերէին։ Բայց Սաւուղ չ'լսել կը ձեւացնէր։

Դ.

Ամոնացւոց թագաւորը յարձակեցաւ Իսրայէլացւոց վրայ. Յաբիս քաղաքը պաշարեց եւ ըսաւ քաղաքացւոց. «Ես ձեր ամենուդ աջ աչքը պէտք է հանեմ ի նախատինս Իսրայէլի»։ Յաբիսացիք դեսպաններ ղրկեցին իրենց եղբայր Իսրայէլացւոց մօտ եւ օգնութիւն կը խնդրէին։ Դեսպանք Գաբաա եկան եւ ամեն բան ժողովրդեան առջեւ կը պատմէին։ Ժողովուրդը սկսաւ լալ։ Առաւօտուն Սաւուղ արտէն ի դարձին, տեսաւ ժողովրդեան լացը եւ հարցուց. «Ինչո՞ւ կուլայ ժողովուրդը»։ Պատմեցին անոր եղելութիւնը։

Աստուծոյ հոգին խկոյն Սաւուղի վրայ եկաւ։ Սաւուղ շատ բարկացաւ, առաւ երկու եզ, կըտոր կտոր ջարդեց եւ դեսպանաց ձեռօք բոլոր Իսրայէլի քաղաքներն ուղարկեց ըսելով. «Ո՛վ որ Սաւուղի եւ Սամուէլի չհետեւիր, անոր եզներն ալ այսպէս պատառ պատառ կ'ըլլան»։ Ժողովուրդը անմիջապէս իրենց նոր թագաւորին չուրջը հաւաքուեցան: Սաւուղ դեսպան ղրկեց Յաբիսի բնակչաց եւ ըսել տուաւ. «Վաղը արեւը ծագելուն պէս ձեզ համար օգնութեան դուռը կը բացուի»։ Յաբիսացիք շատ ուրախացան։ Սաւուղ առաւօտուն երեք գունդի բաժնեց իւր զօրքը, յարձակեցաւ Ամոնացւոց բանակին վրայ եւ ջարդեց զանոնք մինչեւ արեւուն մուտքը. Մնացած թշնամին ցրուեց, այնպէս որ երկու Ամոնացի ի միասին գտնել չ'էր կարելի։

Այն ժամանակ ժողովուրդը ըսաւ. «Մեր ձեռքը մատնեցէք Սաւուղը անարգող մարդիկը որպէս զի սպաննենք»։ Սաւուղ պատասխանեց. «Այսօր՝ երբ Աստուած մեզ ազատութիւն տուաւ, ոչ մէկ Իսրայէլացի չպիտի մեռնի»։ Սամուէլ Գաղգաղայի մէջ հաւաքեց բոլոր Իսրայէլացիքը, այն տեղ զՍաւուղ թագաւոր օծեցին եւ շնորհակալութեան զոհ մատուցին Աստուծոյ։ Նորընտիր Սաւուղ թագաւորը բոլոր ժողովրդեան հետ կ'ուրախանար։

—

«ՅԱստուծոյ երկերուք, զթագաւորս պատուեցէք:» Ա. Թ. Պետ. Բ. 17.

Աստուծմէ վախցէք, Թագաւորը պատուեցէք։
«Երանի՜ քեզ, երկիր, որոյ Թագաւոր քո որդի ազատի է»։ Ժող. Ժ. 17.

50.

Յովնաթանու քաջագործութիւնը

Փղշտացիք մեծ պատրաստութեամբ Իսրայէլի վրայ պատերազմի եկան՝ երեսուն հազար կառքով, վեց հազար հեծեալ զօրքով, իսկ ժողովրդեան բազմութիւնը՝ ծովի աւազին կը նմանէր։ Երբ Իսրայէլացիք այս բազմութիւնը տեսան, սարսափի մէջ ընկան եւ ամեն ոք իր գլուխն ազատելու համար սկսաւ աշխատիլ. ոմանք այրերու, ոմանք գոմերու, ոմանք ժայռերու եւ ծերպերու, ոմանք անտառներու եւ ջրհորներու մէջ պահուըտեցան, ոմանք Յորդանանը անցան, մի քանիներն ալ Թշնամւոյն հետ միանալով՝ յառաջ արշաւեցին։ Սաւուղ իր Յովնաթան որդւոյն եւ վեց հարիւր մարդոց հետ միատեղ Գաբաայի մօտ՝ բլրի մը վրայ մնաց որ կը գտնուի Բենիամինի երկրին մէջ, ոչ հեռու Փղշտացւոց բանակէն։ Թշնամւոյն բանակէն երեք գունդ զօրք ելան երկիրը ասպատակելու։ Այն ժամանակը Իսրայէլացւոց երկրին մէջ ոչ դարբին եւ ոչ երկա-

թագործ կը գտնուէր, որովհետեւ ամենքն ալ իրենց երկիրը քաշուեր էին որպէս զի Եբրայեցիք սուր եւ գեղարդ չկարենան շինել տալ։

Օր մը Յովնաթան ըսաւ իր կապարճակրին. «Եկու անցնինք Փղշտացւոց բանակը, Աստուած անշուշտ կ'օգնէ մեզի. Նորա համար դժուար չէ մեզ նման փոքրաթիւ մարդոց եւս յաղթութիւն պարգեւել»։ Կապարճակիրը պատասխանեց. «Ըրէ՛ այնպէս՝ ինչպէս քու սիրտդ կը փափաքի, եւ ես քեզի կը հետեւիմ»։ Երկուքն ալ հեռացան, առանց Սաւուղի իմաց տալու. ժողովուրդը բնաւ տեղեկութիւն չ'ունէր։ Այն տեղ ուսկից Յովնաթան Փղշտացւոց բանակը կ'ուզէր մտնել՝ երկու սրածայր ժայռեր կային, Յովնաթան կրկնեց իր կապարճակրին. «Եթէ Թշնամին զմեզ տեսնէ եւ ըսէ, հանգիստ մնացէք տեղերնիդ մինչեւ որ ձեզ մօտ գանք, մենք կանգ կ'առնունք. իսկ եթէ ըսէ, եկէ՛ք վար մեզի մօտ, այդ կը նշանակէ թէ Աստուած զանոնք մեր ձեռքն է մատնած»։ Երբ երկուքն ալ այլազգւոյն կիրճը մտան՝ այնպէս որ Թշնամւոյն կողմանէ տեսնուեցան, Փղըշտացիք ըսին. «Նայեցէ՛ք, Եբրայեցիք այրերէն դուրս ելեր են. եկէք մեզի մօտ, ձեզ ըսելու խօսք ունինք»։ Յովնաթան ըսաւ կապարճակրին. «Հետեւէ՛ ինձ, Աստուած զանոնք մեր ձեռքն է մատնած»։ Յովնաթան սկսաւ վեր մագլցել, կապարճակիրն ալ ետեւէն։ Յովնաթան սկսաւ հարուածել Թշնամին, կապարճակիրն ալ նոյնպէս, այնպէս որ առաջին պատերազմին քըսան հոգի սպաննեցին։ Բանակին մէջ շփոթու-

թիւն ինկաւ, պատերազմող գնդերն անգամ զարհուրեցան։

Սաւուղի պահապանները բարձրէն տեսան որ թշնամեաց բանակին մէջ շփոթութիւն ինկեր է և մէկը միւսին ետեւէն կը փախչի։ Այն ժամանակ Սաւուղ ըսաւ ժողովրդեան. «Համրեցէ՛ք եւ տեսէ՛ք մեզմէ ո՞վ է պակաս»։ Անոնք համրեցին եւ տեսան որ Յովնաթան եւ իր կապարճակիրն այն տեղ չէն։ Փղշտացւոց բանակին մէջ աղմուկըն ու շփոթութիւնը քանի կ'երթար կը մեծնար։ Սաւուղ կանչեց ժողովուրդը որ հետեւեցաւ իրեն և արիւնահեղ պատերազմ մ'եղաւ։ Այն Եբրայեցիք որ Փղշտացւոց բանակն ապաստանած էին, միացան Իսրայէլացւոց հետ. Սաւուղ եւ Յովնաթան հալածեցին թշնամիները։ Եփրեմի լերանց մէջ պահուըտած Եբրայեցիք եւս միացան եւ պատերազմը սկսաւ Փղշտացւոց դէմ։ Փղշտացիք չարաչար յաղթուեցան և ցիր ու ցան եղան։ Այսպէս Աստուած առաջնորդեց Իսրայէլի դէպ ի յաղթութիւն։

—

Յաղթութիւնը անորն է որ իր յոյսը Աստուծոյ վրայ կը դնէ։

51

Սամուէլ կը հրաժարի պաշտօնէն

Սամուէլ Գաղգաղայի մէջ հաւաքեց իրեն մօտ ամբողջ Իսրայէլի ժողովուրդը եւ ըսաւ. «Ես ձեզ մօտիկ ըրի եւ թագաւոր տուի. մանկութենէս ի վեր ձեր մէջն եմ եղած եւ ձեզ առաջնորդած մինչեւ այսօր։ Այժմ ծերացեր եմ, մազերըս բամբակ դարձեր են. ահա ձեր առջեւը կանգներ եմ. զրուցեցէք ինձ Աստուծոյ եւ Նորա օծելոյն առաջ, եթէ ես մէկուն եզը կամ էշը առեր եմ, եթէ մէկը զրկեր կամ անոր դէմ անիրաւութիւն մը գործեր եմ, եթէ մէկէն կօշիկ մը նաեւ ընծայ առացեր եմ, պատրաստ եմ փոխարէնը վճարելու»։ Ժողովուրդը պատասխանեց. «Դու զմեզ ո՛չ զրկեր, ո՛չ մեզի դէմ անիրաւութիւն գործեր, եւ ո՛չ ալ մէկէն կօշիկ մը ընծայ ընդուներ ես. Աստուած եւ Նորա օծեալը կարող են վկայ ըլլալ»։

Սամուէլ շարունակեց. «Յիշեցէք այն բարութիւնները, որ Աստուած ձեզի եւ ձեր հարցը ըրեր է, Աստուծոյ երկիւղը սրտերնէդ մի՛ հանէք. ծառայեցէք անոր հաւատարմութեամբ ի բոլոր սրտէ, վասն զի դուք ալ տեսաք՝ թէ ինչպիսի՜ մեծ գործեր կատարեց ձեր աչքին առջեւ։ Այժմ ձեզի ալ թագաւոր մը տուաւ ինչպէս որ խնդրած էիք։ Եթէ դուք ձեր սրտին մէջ Աստուծոյ երկիւղը ունենաք և հաւատարմութեամբ

ծառայէք, այն ժամանակ Աստուած ձեզ ալ, ձեր թագաւորն ալ կ՚օրհնէ. իսկ եթէ գէշ վարուիք, դուք ալ՝ ձեր թագաւորն ալ կը կորսուիք։ Իսկ ես քանի որ դեռ շունչ ունիմ բերանս՝ չեմ դադրիր ձեզի համար աղօթելու, ձեզ ուսուցանելու Աստուծոյ բարի եւ ճշմարիտ ճանապարհը»։ Սամուէլ այսպէս հրաժարեցաւ իր դատաւորական պաշտօնէն։

—

«Աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է»։ Տիմոթ. Ա. դ. 8.

Աստուածպաշտութիւնը ամեն բանի համար օգտակար է։

52.

Սաւուղայ անհնազանդութիւնը

Նոր պատերազմ ծագեցաւ Փղշտացւոց եւ Իսրայէլացւոց մէջ։ Սամուէլ զօրք ժողվեց եւ եկաւ Գաղգաղա. ժողովուրդը կը հետեւէր անոր ահիւ եւ դողութեամբ։ Սամուէլ ըսաւ թագաւորին. «Սպասէ՛ ինձ Գաղգաղայի մէջ մինչեւ որ ես գամ եւ զոհ մատուցանեմ»։ Սաւուղ եօթն օր անհամբեր կ՚սպասէր։ Սամուէլ չ՚եկաւ, ժողովուրդը սկսաւ ցրուիլ։ Թագաւորը ըսաւ. «Մօտ բերէք ողջակէզը որ զոհենք»։ Բայց դեռ զոհը չվերջացած՝ Սամուէլ եկաւ եւ ըսաւ. «Այդ ի՞նչ

ըրեր ես»։ Սաւուղ պատասխանեց։ «Ես տեսայ որ ժողովուրդը սկսաւ ցրուիլ, դու եւս որոշեալ ժամանակին չ՚եկար, Փղշտացիք խմբուած էին մեզի դէմ, ուստի համարձակեցայ ողջակէզ մատուցանելու»։

Սամուէլ ըսաւ Սաւուղին. «Դու անմտութեամբ վարուեր ես. դու Աստուծոյ պատուիրանաց զանցառութիւն ես ըրեր. միթէ դու կարծես որ Աստուած ողջակէզը՝ զոհը աւելի՞ կը սիրէ՝ քան թէ հնազանդութիւնը. «Լաւ է ունկնդրութիւն քան զզոհ». անհնազանդութիւնը յանցանք է, կռապաշտութիւն է։ Որովհետեւ դու Աստուծոյ խօսքը անարգեցիր, արհամարհեցիր, Աստուած ալ զքեզ կ՚արհամարհէ՝ որպէս զի դու այլ եւս թագաւոր չ՚ըլլաս Իսրայէլի վրայ»։

Սամուէլ՝ Սաւուղէն երես դարձուց և մինչեւ իր մահը այլ եւս զինքը չտեսաւ, բայց եւ այնպէս կը ցաւէր Սաւուղի վրայ։

—

Քակեաց զհզօրս յաթոռոց»։ Ղուկ. Ա. 52.

Զօրաւորները աթոռներէն իջեցուց։

Բ.

ՍԱՒՈՒՂ եւ ԴԱՒԻԹ

53.

Դաւթի Թագաւոր ընտրուիլը

Աստուած ըսաւ Սամուէլին. «Մինչեւ ե՞րբ պիտի տխրիս Սաւուղայ համար, ես զանիկայ արդէն անարգեցի. լեցո՛ւ եղջիւրդ իւղով եւ գընա՛ Բեթլեհէմ Յեսսէի մօտ, անոր որդւոց մէկը թագաւոր եմ ընտրեր»։ Սամուէլ գնաց Բեթլեհէմ, հրաւիրեց Յեսսէն եւ իր որդիքը՝ զոհ մատուցանելու։

Երբ որդիքը եկան, Սամուէլ նայեցաւ մեծին եւ կարծեր թէ նա պիտի ըլլայ ընտրեալը. բայց Աստուած ըսաւ. «Դու ո՛չ անոր մեծ հասակին նայէ եւ ոչ տեսքին. ես մեծ հասակ ունեցողն անարգեցի։ Գործը երեւցածին նման չէ շատ անգամ. մարդս իր աչքին առջեւ եղածը միայն կը տեսնէ, բայց Աստուած սրտին ալ կը նայի։ »

Յետոյ Յեսսէն իր եօթը որդիքն ալ Սամուէլի դէմը հանեց։ Սամուէլ պատասխանեց. «Աստուած ատոնցմէ եւ ոչ մին ընտրեր է։ Ասո՞նք են արդեօք քու բոլոր որդիքդ »։ Յեսսէն պատասխանեց. «Պզտիկ որդի մը եւս ունիմ որ խաշներ կ՚արածէ »։ Սամուէլ ըսաւ. «Մարդ ղրկէ՛ եւ կանչել տուր »։

Դաւիթ եկաւ, կարմրերես էր, գեղեցիկ աչքեր ունէր եւ սիրուն հասակ։ Աստուած ըսաւ Սամուէլի. «Վեր կաց և օծէ ասիկայ, որովհետեւ այս է ընտրեալը »։ Սամուէլ առաւ եղջիւրը եւ օծեց զնա թագաւոր իր եղբարցը մէջ։ Այդ օրէն սկսեալ Աստուծոյ հոգին Դաւթի վրայ իջաւ։

—

«Քակեաց զհզօրս յաթոռոց եւ բարձրացոյց զխոնարհս »: Ղուկ. Ա. 52.

Զօրաւորները աթոռէն իջեցուց, իսկ խոնարհները բարձրացուց:

«Մարդ հայի յերեսս եւ Աստուած հայի ի սիրտս»: Ա. Թագ. ԺԶ. 7.

Մարդս կը տեսնէ աչքին առջեւինը, իսկ Աստուած սրտին կը նայի:

54.

Դաւթի՝ Սաւուղայ արքունիքը գալը

Աստուծոյ հոգին հեռացաւ Սաւուղէն, չար ոգին կը տանջէր զինքը։ Ծառաները ըսին թագաւորին. «Գտնենք մարդ մը որ կարենայ քընարի վրայ երգել. երբ չար ոգին գայ՝ այդ մարդը երգէ քու առջեւդ եւ զքեզ հանգստացնէ »։ Սաւուղ պատասխանեց. «Եթէ գտնաք այդպիսի մարդ մը, իմ քովս բերէք »։ Ծառաներէն մէկը

պատասխանեց. «Բեթլեհէմ քաղաքը ես կը ճանչնամ Յեսսէ անունով մարդ մը, որուն որդին քնարի վրայ կ՚երգէ, իմաստուն եւ քաջ երիտասարդ մ՚է եւ Աստուած ալ անոր հետն է»: Սաւուղ դեսպաններ ղրկեց Յեսսէի եւ այսպէս պատուիրեց. «Ուղարկէ՛ ինձ քու Դաւիթ որդիդ»:

Այսպէս Դաւիթ Սաւուղայ քով եկաւ եւ կը ծառայէր անոր: Սաւուղ զայն շատ կը սիրէր եւ իրեն կապարճակիր կարգեց: Երբ չար ոգին Սաւուղայ վրայ կուգար, Դաւիթ կ՚առնուր քնարը եւ կ՚սկսէր երգել: Այսպէս կը հանգստանար Սաւուղ եւ չար ոգին կը հեռանար իրմէ:

—

«Երանի՜ այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք»: Մատ. Ե. 8.

Երանի սուրբ սիրտ ունեցողներուն:

Աստուծոյ խորհուրդը աքանչելի է, իսկ իր իմաստութիւնը գերազանց:

55.

Դաւիթ եւ Գողիաթ

Փղշտացիք զօրք ժողվեցին եւ եկան Յուդայի երկիրը, բանակ դրին եւ կ՚ուզէին պատերազմիլ: Սաւուղ եւ Իսրայէլի ժողովուրդը նոյնպէս զօրք հաւաքեցին եւ Փղշտացւոց դիմացը բանա-

կեցան, այնպէս որ հովիտով մը բաժնուած էին իրարմէ: Փղշտացւոց բանակէն Գողիաթ անուամբ հսկայ մը ելաւ, որուն հասակին երկայնութիւնը վեց կանգուն եւ թիզ մ՚էր. գլուխը սաղաւարտ էր դրած, հագած էր հիւսկէն զրահ, ոտքերուն վրայ պղնձէ սռնապաններ, ուսոց վրայ պղնձէ գեղարդ: Նիզակին բունը ոստայնանկաց գլանին պէս էր եւ փոհանակիրն առջեւէն կ՚երթար:

Գողիաթ ելաւ բանակէն եւ ձայն տուաւ Իսրայելացւոց. «Ձենէ մէկը ընտրեցէք, թող ինծի հետ մենամարտելու ելլայ. եթէ անիկայ յաղթէ, մենք ձեր ծառաները կ՚ըլլանք, իսկ թէ ես յաղթեմ՝ դուք մեր ծառաները եղէք»: Սաւուղ եւ Իսրայելացիք երբ այս խօսքերը լսեցին՝ զարհուրեցան եւ շատ վախցան:

Դաւթի երեք մեծ եղբայրները Սաւուղի հետ կը բնակէին, իսկ ինքը տուն գնացեր էր հօրը ոչխարները արածելու: Անգամ մը Յեսսէն ըսաւ Դաւթին. «Ա՛ռ այս տասը հացերը՝ տար եղբայրներուդ, հարցուր եւ տես թէ ինչպէս է անոնց առողջութիւնը»: Երբ Դաւիթ եղբայրներուն քովը եկաւ, հսկայ Գողիաթը նորէն դուրս ելաւ բանակէն և սկսաւ նոյն ձեւով նախատել Իսրայէլացիները: Ոչ մէկ Իսրայէլացի չէր վստահեր անոր դէմ ելնել, որուն ձայնը միայն լսելով՝ կը փախչէին: Դաւիթ հարցուց իր քովը կեցողներուն. «Այս Փղշտացին կը նախատէ կենդանի Աստուծոյ ժողովուրդը, միթէ չկա՞յ մէկը որ զայն ըսպաննէ եւ Իսրայէլի նախատինքը վերցնէ»: Ժո-

ղովուրդը պատասխանեց. «Ո՛վ որ զայն սպաննէ, թագաւորը կը հարստացնէ զինքը եւ իւր աղջիկն ալ անոր կնութեան կուտայ»։ Այս լուրը Սաւուղին ականջը հասուցին, ան ալ Դաւիթը իրեն քով կանչեց։

Դաւիթ ըսաւ Սաւուղին. «Բնաւ մի՛ վախնար, տէ՛ր արքայ, ես կ՚երթամ եւ կը մենամարտիմ անոր հետ»։ Սաւուղ պատասխանեց. «Դու մանուկ ես, Փղշտացւոյն հետ չես կրնար պատերազմիլ, անիկայ մանկութենէ վարժած է այս գործին մէջ։» Դաւիթ պատասխանեց. «Հօրս խաշները արածելու ժամանակ երբ առիւծ կամ արջ մը կուգար եւ կը յափշտակէր ոչխարներս, անոնց ետեւէն կ՚երթայի, ոչխարը կը կորզէի իրենց բերանէն եւ զիրենք ալ կ՚սպաննէի։ Այն Աստուածը, որ զիս առիւծէն և արջէն ազատեց, կ՚ազատէ եւ այս Փղշտացիէն»։

Այն ժամանակ Սաւուղ ըսաւ Դաւիթին. «Գընա՛, Աստուած քեզի հետ ըլլայ»։ Սաւուղ իւր զրահները Դաւիթին հագցուց, պղնձէ սաղաւարտը գլուխը դրաւ, սուրը մէջքը կապեց եւ ուղարկեց։ Բայց որովհետեւ Դաւիթ չէր վարժըւած այդ սպառազինութեան, ուստի ըսաւ. «Ես չեմ կարող այսպէս յառաջ գնալ»։ Զրահները վրայէն հանեց, առաւ իւր ցուպը եւ հինգ ողորկ քար եւ դրաւ հովուական մախաղին մէջ, պարսատիկը ձեռքն առաւ եւ սկսաւ դիմել դէպ ի Փղշտացին։

Երբ Փղշտացին Դաւիթը տեսաւ, արհամարհեց եւ ըսաւ. «Միթէ ես շո՞ւն եմ, որ դու ցու-

պով եւ քարով իմ վրաս կուգաս. մօտ եկո՛ւ, ես քու մարմինդ երկնքի թռչուններուն եւ երկրի գազաններուն կերակուր պիտի ընեմ»։ Դաւիթ պատասխանեց. «Դու կուգաս իմ վրաս սրով, նիզակով եւ վահանով, իսկ ես՝ Սաբաւովթի՝ Իսրայէլի Աստուծոյ անուամբ՝ զոր դու նախատեցիր։ Աստուած զքեզ այսօր իմ ձեռքս կը յանձնէ որպէս զի ամենքը ճանաչեն Իսրայէլի Աստուածը. Թող գիտնան որ փրկութիւնը սրով եւ գեղարդով չըլլար»։ Փղշտացին տեղէն վեր կանգնեցաւ եւ դիմեց դէպ ի Դաւիթ. սա ալ դիմաւորելով զայն՝ մախաղէն քար մը հանեց, դրաւ պարսին մէջ եւ նետեց դէպ ի այլազգին. քարը ճակատին դպաւ եւ հսկան գետին փռուեցաւ երեսի վրայ։ Բայց Դաւիթ ձեռքը սուր չունենալուն՝ վազեց դէպ ի Փղշտացին, անոր սուրը պատեանէն հանեց եւ գլուխը կտրեց։ Երբ Փղըշտացիք տեսան, որ իրենց դիւցազնը ինկաւ՝ փախան. իսկ Իսրայէլացիք սկսան զանոնք հալածել մինչեւ իրենց քաղաքին դռները։

—

«Զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց»։ Ա. Թ. Պետ. Ե. 5.

Աստուած ամբարտաւան մարդոց հակառակ է, իսկ խոնարհներուն շնորհք կուտայ։

«Զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»։ Բ. Թ. ա. Կորնթ. ԺԲ. 9.

56.

Սաւուղ կ'ատէ, իսկ Յովնաթան կը սիրէ զԴաւիթ

Ա.

Երբ Դաւիթ Գողիաթի գլուխը կտրեց և յաղթութեամբ ետ դարձաւ, Թագաւորին Աբեններ զօրապետը զնա Սաւուղի քով առաջնորդեց։ Սաւուղ հարցուց Դաւիթին. «Որո՞ւն որդին ես»։ Դաւիթ պատասխանեց. «Քու ծառայիդ Յեսսէ, որ Բեթլեհեմացի է»։ Այս դէպքէն յետոյ Յովնաթան՝ Դաւիթը սրտանց սիրեց և ընկերական դաշինք դրաւ անոր հետ եւ իրեն տուաւ իր լօդիկը, վարապանակը, սուրը, աղեղը և գօտին։ Սաւուղ Դաւիթը չթողուց որ իր հօրը տունը դառնայ, այլ իրեն քով պահեց եւ զօրաց վրայ հրամանատար կարգեց. ժողովուրդը կը սիրէր Դաւիթը։ Գողիաթն սպաննելէ յետոյ՝ երբ Դաւիթ կը վերադառնար Փղշտացւոց պատերազմէն, Իսրայէլի բոլոր քաղաքներէն կանայք դուրս կ'ելնէին Դաւթի ընդառաջ թմբուկներով և ծնծղաներով՝ կ'սկսէին պարել, երգել և ըսել. «Սաւուղ հազար սպաննեց, իսկ Դաւիթ բիւր»։ Այս խօսքերը ախորժելի չ'եկան Սաւուղին որ բարկացաւ եւ ըսաւ. «Ալ ի՞նչ կը պակսի անոր, բաց ի իմ թագաւորութենէս»։ Այդ օրէն սկսեալ Սաւուղ կասկածանօք կը նայէր Դաւթին։

Հետեւեալ օրը չար ոգին կրկին տիրացաւ Սաւուղայ վրայ, իսկ Դաւիթ սկսաւ ըստ սովորականին քնարը զարնել։ Այն ժամանակ Սաւուղ առաւ գեղարդը եւ նետեց Դաւթի ետեւէն այն մտքով որ զայն պատին գամէ. բայց անիկայ խոյս տուաւ և գեղարդը պատին մէջ ցցուեցաւ։ Սաւուղ կը վախնար եւ Դաւիթը իրմէ հեռացընելու համար՝ հազարապետ կարգեց։ Դաւիթ զգոյշ կը վարուէր ամեն պարագայի մէջ. Աստուած անոր հետն էր և բոլոր Իսրայէլի ժողովուրդը զայն կը սիրէր, կը յարգէր։

Սաւուղի աղջիկը զԴաւիթ կը սիրէր եւ որովհետեւ թագաւորը խոստացեր էր անոր իր աղջիկը կնութեան տալ, ըսաւ. «Յարմար ժամանակ է Դաւիթը ոչնչացնելու համար, կը փեսայացնեմ զինքը եւ Փղշտացւոց դէմ պատերազմի կը ղրկեմ»։ Սաւուղ պատուիրեց իր ծառաներուն որ ծածուկ Դաւթի հետ այսպէս խօսին. «Թագաւորը զքեզ կը սիրէ՝ նմանապէս եւ անոր բոլոր մարդիկը, եկո՛ւ եւ անոր փեսայ եղիր»։ Նոյնը կատարեցին ծառաները։ Դաւիթ ըսաւ. «Ես աղքատ եւ աննշան մարդ մ'եմ»։ Ծառաները պատասխանեցին. «Թագաւորը քեզմէ բնաւ վարձք չ'պահանջեր, բաց ի հարիւր Փղշտացւոյ գլխէ»։ Անոնց միտքն այն էր, որ Դաւիթ թշնամեոյն հետ պատերազմելով՝ կարելի է սպաննուի։ Դաւիթ իսկոյն ելաւ իր մարդիկներովը եւ Փղշտացւոց դէմ գնաց և երկու հարիւր մարդ սպաննեց, ուստի թագաւորը իր Մելքող աղջիկը կնութեան տուաւ։ Սաւուղ տեսաւ որ Աստուած Դաւթի հետն էր, այս պատճառաւ աւելի

եւս վախցաւ եւ թշնամացաւ անոր հետ իր ամբողջ կենաց ընթացքին մէջ։ Դաւիթ՝ թագաւորին բոլոր մարդիկներէն խելացի և իմաստուն էր, եւ անունը ժողովրդեան մէջ յարգուած էր։

Բ.

Սաւուղ յայտնապէս խօսեցաւ Յովնաթան որդւոյն եւ ծառայներուն հետ որ Դաւիթը սպաննեն։ Յովնաթան այս բանը յայտնեց Դաւիթին եւ անիկայ ալ պահուըտեցաւ։ Յետոյ Յովնաթան խօսեցաւ հօրը հետ՝ ի նպաստ Դաւիթի եւ ըսաւ. «Յանցանք մի՛ գործեր, հայր իմ, Դաւիթ արդար է քու առջեւդ, քեզի համար շատ աշխատեցաւ եւ իր անձը վտանգի ենթարկեց ու ըսպաննեց փղշտացին։ Աստուած անոր ձեռօք փըրկեց Իսրայէլի ժողովուրդը»։ Սաւուղ լսեց իր որդւոյն, երդուընցաւ որ այնուհետեւ Դաւիթի մահը չցանկայ։ Յովնաթան յայտնեց Դաւիթի այս բանը եւ զայն հօրը քով բերաւ։ Դաւիթ՝ թագաւորին հետ դարձեալ առաջուան պէս էր։

Նոր պատերազմ ծագեցաւ։ Դաւիթ ելաւ փղշտացւոց դէմ եւ մեծ հարուած տալով անոնց՝ փախցուց։ Երբ նորէն Սաւուղի քով դարձաւ եւ քնար կը զարնէր, չար ոգին դարձեալ յայտնուեցաւ թագաւորին վրայ որ առաւ գեղարդը եւ կ'ուզէր Դաւիթը պատին վրայ բեւեռել. բայց Դաւիթ դարձեալ խոյս տալով՝ գեղարդը պատին մէջ մխուեցաւ։ Դաւիթ միեւնոյն գիշերը փախաւ

եւ հեռացաւ պալատէն։ Սաւուղ մարդ ղրկեց որ տունը գիշերով շրջապատեն եւ առաւօտուն զայն սպաննեն։

Մելքոլ եղելութիւնը յայտնեց Դաւիթին եւ ըսաւ. «Եթէ դու այս գիշեր քու կեանքդ չ'ազատես, առաւօտը կենդանի չես մնար։» Կինը պատուհանէն վար իջեցուց զԴաւիթ՝ որ և անյայտացաւ։ Յետոյ Մելքոլ պաճուճապատանք շինեց, դրաւ անկողնոյն մէջ, գլուխը այծի մորթով պատեց եւ ծածկեց զգեստներով։ Սաւուղ դեսպաններ ղրկեց որ Դաւիթը բռնեն։ Մելքոլ պատասխանեց. «Հիւանդ է»։ Սաւուղ կրկին անգամ մարդ ղրկեց եւ ըսաւ. «Մահիճովը քովս բերէք որ սպաննեմ»։ Երբ դեսպանները եկան, պաճուճապատանքը անկողնոյն մէջ դրուած էր, եւ իրողութիւնը թագաւորին յայտնեցին։ Սաւուղ ըսաւ իր աղջկանը. «Ինչո՞ւ դու զիս խաբեցիր եւ թշնամիս փախուցիր»։ Մելքոլ պատասխանեց. «Նա ըսաւ ինձ որ եթէ թող չտամ զինքը, պիտի սպաննէ զիս։»

Գ.

Դաւիթ աստանդական թափառելով՝ վերջապէս եկաւ Յովնաթանի քով եւ ըսաւ. «Ի՞նչ յանցանք եմ գործեր ես քու հօրդ դէմ, որ իմ կենացս կը դարանի, իմ եւ մահուանս մէջ քայլ մը միայն հեռաւորութիւն կայ»։ Յովնաթան պատասխանեց. «Դու չպիտի մեռնիս, ես քու սըրտիդ փափաքը կը կատարեմ, կը խօսիմ հօրս հետ եւ կը համոզեմ զայն։ Պահուըտէ դաշտին մէջ քա-

րի մը ներքեւ, երեք օր յետոյ ես քեզի իմաց կուտամ՝ թէ գործը խաղաղութեամբ կը վերջանա՞յ թէ ո՛չ»։

Հետեւեալ օրը Սաւուղ՝ Յովնաթանի և Աբենների հետ սեղան նստած էր։ Երբ Դաւթի մասին խօսք եղաւ, Յովնաթան ի նպաստ անոր խօսեցաւ։ Սաւուղ բարկացաւ և ըսաւ. «Խարդա՛խ, ես գիտեմ որ դու Յեսսէի որդւոյն հետ դաշնակից ես, ամօթ քեզի, քանի որ նա կ՚ապրի երկրիս վրայ, քու թագաւորութիւնդ հաստատ չ՚է. ուստի մարդ ղրկէ անոր ետեւէն եւ բերել տուր. անիկայ պէտք է մեռնի»։ Յովնաթան պատասխանեց. «Ինչո՞ւ պիտի մեռնի, ի՞նչ է ըրեր»։ Սաւուղ բարկացաւ և այս անգամ գեղարդը Յովնաթանի վրայ նետեց՝ զայն սպաննելու դիտմամբ։ Յովնաթան տեսաւ որ Սաւուղ վճռեր է Դաւիթը սպաննել, սեղանէն ելաւ եւ ամբողջ օրը բնաւ բան չ՚կերաւ ու կը մտածէր մի միայն Դաւիթի վրայ։

Առաւօտուն Յովնաթան դաշտ գնաց՝ ուր ժամադիր եղած էին եւ ամեն բան յայտնեց Դաւթին։ Երկուքն ալ գրկեցին զիրար եւ լացին. Դաւիթ աւելի կ՚արտասուէր. երդուընցան հաւատարիմ ըլլալ իրարու եւ թէ իրենց յետադայից։ Յովնաթան ըսաւ. «Գնա՛ խաղաղութեամբ, ինչ որ մենք Տիրոջ անուամբ երդուընցանք՝ թող այդ յաւիտեան անխախտ մնայ»։ Յովնաթան քաղաք դարձաւ, իսկ Դաւիթ փախաւ հեռացաւ։

—

«Յամենայն ժամանակի բարեկամք եղիցին քո, բայց եղբարք՝ ի վիշտս եղիցին քեզ պիտոյ»։ Առակք ԺԷ. 17.

Բարեկամը ամեն ժամանակ սիրող է, բայց եղբայրը նեղ օրուան համար ծնած է։

«Որ առնէ մեղս, ծառայէ մեղաց»։ Յովհ. Ը. 39.

Ո՛վ որ մեղք կը գործէ, մեղքին ծառայ կը դառնայ։

«Արթուն կացէք եւ աղօթս արարէք՝ զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն»։ Մատ. ԻԶ. 41.

Արթուն կեցէք եւ աղօթք ըրէք, որ փորձութեան մէջ չիյնաք։

«Եթէ որոց սիրենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս»։ Թ. Ա. Հռովմ. Ը. 28.

Աստուած զինքը սիրողներուն՝ երբ բարին կ՚ուզեն գործել՝ միշտ գործակից է։

57.

Դաւթի մեծահոգութիւնը դէպ ի Սաւուղ

Ա.

Սաւուղին իմացուցին որ Դաւիթ՝ Գադդայի անապատն է։ Սաւուղ առաւ երեք հազար զօրք ու գնաց Դաւիթը եւ անոր ընկերները փնտռելու։ Այն անապատին մէջ այր մը կար. Սաւուղ ներս մտաւ քնանալու. իսկ Դաւիթ իւր մարդոց հետ արդէն այրին մէջն էր։ Դաւթի մարդիկը ըսին. «Ահա՛ այս այն օրն է որ Աստուած թշնամիդ քու ձեռքդ կը մատնէ»։ Դաւիթ ելաւ

եւ ծածուկ կտրեց Սաւուղի լօդիկի ծայրէն, բայց շուտով զղջաց եւ ըսաւ իր մարդոց. «Աստուած չ'ընէ որ ես իմ ձեռքս օծելոյն վրայ բարձրացնեմ»։ Դաւիթ իր մարդիկը համոզեց եւ թոյլ չ'տուաւ Սաւուղը սպաննելու։

Սաւուղ երբ արթնցաւ՝ դուրս ելաւ այրէն եւ սկսաւ ճամբան շարունակել. ետեւէն ելաւ եւ Դաւիթ ու սկսաւ ձայն տալ Սաւուղին. «Տէր իմ թագաւոր»։ Սաւուղ ետին նայեցաւ. Դաւիթ ըսաւ. «Այսօր Աստուած զքեզ իմ ձեռքս մատնեց այրին մէջ, բայց ես քու կենացդ խնայեցի եւ ըսի, թէ անիկայ իմ տէրս է եւ Աստուծոյ օծեալը. տե՛ս, հայր իմ, ահա քու լօդիկիդ ծայրը իմ ձեռքս է. Թո՛ղ Աստուած դատաւոր ըլլայ իմ եւ քու մէջդ եւ ազատէ զիս քու ձեռքէդ, բայց ես իմ ձեռքս քու վրադ չեմ բարձրացներ»։

Սաւուղ սկսաւ բարձրաձայն լալ և ըսել. «Դուն ինձմէ արդար ես. դուն ինձ բարի, իսկ ես քեզի չար հատուցի. ինչ որ դուն այսօր ինծի ցոյց տուիր, Աստուած քեզ ասոր փոխարէն բարի հատուցանէ։ Ես գիտեմ դուն Իսրայէլի թագաւոր պիտի ըլլաս»։ Սաւուղ տուն դարձաւ, իսկ Դաւիթ իր մարդոց հետ մնաց անապատը։

Բ.

Այնուհետեւ լուր առաւ Սաւուղ որ Դաւիթ Զիփայի անապատն է։ Ելաւ Սաւուղ, առաւ իր հետը դարձեալ երեք հազար մարդ եւ սկսաւ

Դաւիթը որոնել՝ ու բանակեցաւ անապատին մէջ բլրի մը վրայ։ Դաւիթ զայս իմանալուն պէս՝ եկաւ Սաւուղի բանակը եւ ըսաւ իր ընկերներուն. «Ո՞վ կուգայ ինծի հետ Սաւուղի բանակը մտնելու»։ Աբեսսա պատասխանեց. «Ես կուգամ քեզի հետ բանակ մտնելու»։ Այսպէս Դաւիթ եւ Աբեսսա գիշերով Սաւուղի բանակը մըտան։ Սաւուղ կը քնանար բարձր մահճի մը վըրայ, գեղարդը գլխին վերեւ՝ գետինն էր ցցուած. իսկ Աբեններ եւ բոլոր զօրքը անոր շուրջը կը քընանային։ Աբեսսա ըսաւ Դաւթին. «Աստուած այսօր թշնամին քու ձեռքդ կը մատնէ, թող ես գեղարդով մի անգամ այնպէս զարնեմ որ գետին մխի»։ Դաւիթ պատասխանեց Աբեսային. «Մի՛ զարներ, ո՛վ է այն մարդը որ Տիրոջ օծելոյն զարնէ եւ անպատիժ մնայ։ Աստուած կենդանի է, անոր դատաստանը կը կարէ կամ անոր օրը կուգայ եւ կը մեռնի, կամ թէ պատերազմի մէջ կը մտնէ եւ կ'սպաննուի։ Աստուած չ'ընէ, որ ես ձեռքս անոր օծելոյն վրայ բարձրացնեմ։ Ա՛ռ անոր գլխին վրայէն գեղարդը, ջրի կուժը ու երթանք»։ Այսպէս Դաւիթ վերցուց գեղարդը և ջրի կուժը ու գնաց։ Ջ'եղաւ մէկը որ տեսնէր կամ նշմարէր, վասն զի ամէնքն ալ քնացած էին։

Դաւիթ վեր ելաւ բլրին գագաթը և այն տեղէն ձայն տուաւ զօրքերուն, Աբեններին ու ըսաւ. «Ջ'ե՞ս լսեր Աբեննե՛ր»։ Աբեններ պատասխանեց. «Ո՞վ ես դուն»։ Դաւիթ պատասխանեց. «Ինչո՞ւ քու տէրդ, քու թագաւորդ չպաշտպա-

նեցիր, որովհետեւ գիշերով մէկը բանակ մտաւ եւ թագաւորիդ գեղարդն ու ջրի կուժը տարաւ. թող ձերմէ մէկը գայ եւ տանի»: Սաւուղ Դաւթի ձայնը ճանչցաւ եւ ըսաւ. «Այդ քու ձայնդ է Դաւիթ որդեակ»: Դաւիթ պատասխանեց. «Այո՛, իմ ձայնս է տէր իմ, ինչո՞ւ քու ծառայիդ ետեւէն ընկեր ես, ի՞նչ չար գործեցի քեզի»: Սաւուղ ըսաւ. «Արի ինձ մօտ եկուր, որդեակ իմ Դաւիթ, ես յանցաւոր եմ, ես զքեզ այլ եւս չեմ հալածեր, որովհետեւ դու այսօր իմ կեանքս թանկագին համարեցար»: Դաւիթ պատասխանեց. «Աստուած ամենքն ալ իր արդարութեան եւ հաւատարմութեան համար կը վարձատրէ: Աստուած զքեզ այսօր իմ ձեռքս մատնեց, բայց ես իմ ձեռքս անոր օծելոյն վրայ չը բարձրացուցի: Եւ ինչպէս որ այսօր քու անձդ ես թանկագին համարեցայ, այդպէս ալ Աստուած իմ անձս կը գնահատէ, եւ զիս այս նեղութենէն կ'ազատէ»: Սաւուղ ըսաւ Դաւիթին. «Օրհնեալ ըլլաս, որդեակ իմ Դաւիթ, գիտեմ որ դու այդ բանը կ'ընես եւ գլուխ կը հանես»: Յետոյ Դաւիթ իր ճամբէն գնաց, իսկ Սաւուղ կրկին տուն դարձաւ:

—

«Սիրեցէք զթշնամիս ձեր, օրհնեցէք զանիծիչս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց, եւ աղօթս արարէք ի վերայ այնոցիկ, որ լլկեն զձեզ եւ հալածեն»: Մատ. Ե. 44.

Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անի-

ծողները, աղէկութիւն ըրէք ձեզ ատողներուն, աղօթք ըրէք ձեզ չարչարողներուն եւ հալածողներուն համար:

«Մի զանձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկութեան. քանզի գրեալ է, ի՛մ է վրէժխնդրութիւն, ես հատուցից ասէ Տէր»: Թ. Ա. Հռմ. ԺԲ. 19.

Ձեր անձանց համար վրէժխնդրութիւն մի՛ ընէք, սիրելիք, այլ բարկութեան տեղի տուէք. որովհետեւ գրուած է, վրէժխնդրութեան իրաւունքը իմս է, ես պիտի հատուցանեմ:

Ինքն իրեն հետ պատերազմիլը ամենադժուար պատերազմն է, ինքն իրեն յաղթելը ամենագեղեցիկ յաղթութիւնն է:

«Մի՛ յաղթիր ի չարէ. այլ յաղթեա՛ բարեաւն չարին»: Թ. Ա. Հռմ. ԺԲ. 21.

Մի՛ յաղթուիր չարէն, այլ բարութեամբ՝ չարին յաղթէ:

58.

Սաւուղայ մահը

Մեռաւ Սամուէլ. բոլոր Իսրայէլացիք սուգ բռնեցին և թաղեցին մարմինը Արիմաթեմի մէջ:

Փղշտացիք նորէն պատերազմ ունեցան Իսրայէլի հետ: Իսրայէլացիք փախան եւ Գելբուա լերան մօտ ջարդուեցան: Թշնամին շրջապատեց

Սաւուղը եւ անոր որդիքը, պատերազմը սաստիկ եղաւ եւ Սաւուղ ծանր կերպով վիրաւորուեցաւ։

Այն ատեն Թագաւորը ըսաւ իր կապարճակիրին. «Հանէ՛ սուրդ և սպաննէ՛ զիս, որպէս զի Փղշտացիք չգան, չխոցոտեն եւ չծաղրեն զիս»։ Կապարճակիրը հրաժարեցաւ անոր հրամանը կատարելէ։ Յետոյ Սաւուղ ինքն առաւ իր սուրը եւ ինկաւ վրան։ Երբ կապարճակիրը տեսաւ որ Սաւուղ մեռաւ, ինքն ալ իր սուրին վրայ ընկաւ եւ ինքնասպան եղաւ։ Յովնաթան իր երկու եղբայրներուն հետ, կապարճակիրը եւ հետն եղած բոլոր մարդիկը ընկան պատերազմին մէջ եւ մեռան։ Հետեւեալ օրը Թշնամին եկաւ որ անկեալները մերկացնէ, զՍաւուղ՝ իր երեք որդւոցը հետ միատեղ գտաւ։ Կտրեցին Թագաւորին գլուխը, հանեցին վրայէն զէնքերը եւ իրենց երկիրը ղրկեցին աւետիս տալու. իսկ Սաւուղի եւ Յովնաթանի մարմինը Բեթսանայի պարսպէն կախեցին։

Երբ Յաբիսի բնակիչները լսեցին Թագաւորին մահը, բոլոր պատերազմող մարդիկը ոտք ելան. ամբողջ գիշերը քալեցին եւ Թագաւորին ու անոր որդւոյն՝ Յովնաթանի դիակները Բեթսանայի պարըսպէն վերցնելով քաղաք բերին եւ այրեցին. յետոյ ժողվեցին ոսկորները՝ ծառի մը տակ թաղեցին՝ եւ եօթն օր պահք պահեցին։

Սաւուղի մահուընէն երեք օր յետոյ, Ամաղէկացի մը զգեստները պատռտելով եւ գլուխը հող ցանելով Դաւթի քով եկաւ եւ ըսաւ. «Իսրայէլի բանակէն ազատեր եմ, ժողովուրդը փախաւ, մեծ մասը պատերազմի մէջ ընկան. Սաւուղ եւ Յովնաթան մեռան»։ Դաւիթ պատասխանեց. «Ուստի՞ գիտես որ Սաւուղ եւ Յովնաթան մեռան»։ Ամաղէկացին պատմեց. «Գելբուայի լերանց վրայ էի. Սաւուղ կռթնած էր սուրին վրայ, թշնամւոյն հեծելազօրը կը դիմէր իր վրայ։ Սաւուղ ըսաւ ինձ. Սպաննէ՛ զիս, վասն զի ամեն կողմէն վտանգով շրջապատեալ եմ։ — Քովը գնացի, սպաննեցի զինքը, առի թագը ու ապարանջանը, և ահա զանոնք իմ տիրոջս բերեր եմ»։ Դաւիթ ըսաւ. «Դու ի՞նչպէս համարձակեցար Տիրոջ օծելոյն վրայ ձեռք բարձրացնել»։ Դաւիթ նշան տուաւ իրեն մարդոցմէ միոյն, որ սպաննէ Ամաղէկացին։

Այնուհետեւ Դաւիթ սկսաւ պատռտել իր զգեստները. նոյնը ըրին եւ քովի մարդիկը, որոնք կուլային և կը սգային Սաւուղի, Յովնաթանի և բոլոր Իսրայէլի ժողովրդեան վրայ։ Դաւիթ ողբ յօրինեց իր սիրելի Յովնաթանին վրայ և կ'ըսէր. «Արձանացի՛ր Իսրայէլ, ի վերայ ըլլոցն ի
«բարձունս քո վիրաւորաց. զիա՞րդ անկան զօ-
«րաւորքն։ Մի՛ պատմէք ի Գէթ, եւ մի՛ տայք
«զայս աւետիս յելս Ասկաղոնի. զի մի՛ երբէք ու-
«րախ լիցին դստերք այլազգեաց և մի՛ ցնծաս-
«ցեն դստերք անթլփատից։ Լերինք Գելբուայ,
«մի՛ իջցէ՛ ի ձեզ ցօղ, եւ մի՛ եկեսցէ ի վերայ
«ձեր անձրեւ. Յովնաթան ի վերայ բարձանց
«քոց վիրաւոր։ Ցա՛ւ է ինձ ի վերայ քո, եղբայր

«իմ Յովնաթան, գեղեցկացար ինձ յոյժ, զարմա-
«նալի եղեւ սէր քո ինձ քան զսէր կանանց»։

—

« Զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն հնձեսցէ»։ Թ. ա. Գաղ. Զ. 7.

«Անօրէնք եղեն յաւէտ յանկարծակի. սատակեցան, պակասեցան, կորեան, վասն անօրէնութեան իւրեանց»։ Սաղ. ՀԲ. 19.

«Որ համարիցի հաստատուն կալ, զգոյշ լիցի՝ գուցէ անկանիցի»։ 1. Թ. Ա. Կորն. Ժ. 12.

Ով որ կարծէ թէ հաստատ կանգնած է, թո՛ղ ըզգոյշ լինի որ վար չիյնայ։

Գ.

ԴԱՒԻԹ

59.

Դաւթի թագաւորելը

Դաւիթ իւր մարդիկներուն հետ Քեբրոն քաղաքը գնաց։ Յուդայի տան մարդիկը զինքը թագաւոր օծեցին Յուդայի տան վրայ. իսկ ան ալ Սաւուղի զօրավար Աբենների՝ որդին Յեբուսթէն թագաւորեցուց միւս ցեղերուն վրայ։ Ասոր հա-

մար Դաւթի եւ Սաւուղի տան մէջ երկար ժամանակ պատերազմներ եղան։ Դաւթի տունը քանի կ'երթար կը զօրանար, իսկ Սաւուղինը կը նուաղէր եւ կը տկարանար։ Յեբուսթէի քով երկու գլխաւոր մարդիկ կային որք անոր քնացած ժամանակը՝ սպաննեցին զինքը և գլուխը կտրելով Դաւթի բերին Քեբրոն քաղաքը։ Բայց Դաւիթ ըսաւ անոնց. «Դուք արդար մարդ մը սպաննեցիք» եւ հրամայեց երկու մարդասպաններն ալ սպաննել։

Այն ժամանակ Իսրայէլի բոլոր ցեղերը Քեբրոն եկան եւ Դաւիթը թագաւոր օծեցին ամբողջ Իսրայէլի վրայ. Դաւիթ երեսուն տարեկան էր երբ թագաւոր եղաւ. կառավարեց Յուդայի ժողովուրդը եօթն ու կէս տարի, իսկ երեսուն տարի ամբողջ Իսրայէլը։

Թագաւորը գնաց դէպ ի Երուսաղէմ Յեբուսացւոց դէմ, որոնք Յուդայի երկիրը կը բնակէին։ Ասոնք ըսին Դաւթին. «Դու չես կարող քաղաք մտնել. կոյրերը եւ կաղերը կ'արգելուն ըզքեզ»։ Բայց Դաւիթ առաւ քաղաքը, Սիօն լեռը ու վրայի աշտարակը, բնակեցաւ այդ աշտարակին մէջ, անուանեց զայն Դաւթի քաղաք, ու այն տեղ փառաւոր տուն մը շինեց։

Այնուհետեւ մարդիկներ հաւաքեց եւ գնաց Տապանակ Ուխտին բերելու։ Ուրախութեան ձայներով եւ փողերը փչելով՝ Տապանակը Սիօնի աշտարակը հանեցին եւ դրին այն վրանին տակ զոր Դաւիթ կանգնել տուած էր։ Թագաւորը Ղեւտացիներէն մէկ քանիները պաշտօնեայ նշանակեց

Տապանակին, որոնք երգով եւ քնարով կ'օրհնէին եւ կը փառաբանէին զԱստուած. Նոյնպէս քահանաներ նշանակեց Ահարոնի ցեղէն, որոնք ամէն օր ողջակէզ կը մատուցանէին։ Այսպէս աստուածպաշտութեան կարգը սահմանեց եւ ինքը անձամբ քանի մը երգեր եւ սաղմոսներ հեղինակեց։

Յետոյ Դաւիթ Փղշտացւոց դէմ պատերազմի ելաւ, հալածեց զանոնք. Մովաբացւոց դէմ ալ գնաց, յաղթեց եւ հարկատու ըրաւ. Ասորւոց եւ Եդոմացւոց նաեւ յաղթեց։ Դաւթի թագաւորութիւնը ընդարձակեցաւ ծովէն մինչեւ Եփրատ և Դամասկոսէն մինչեւ Եգիպտոս։ Աստուած կ'օգնէր Դաւթին ուր որ կ'երթար։ Դաւթի անունը մեծցաւ բոլոր աշխարհիս մէջ. հեթանոսները կը դողային անոր անունը միայն լսելով։ Դատաւորներ և պաշտօնեայներ նշանակեց երկրին մէջ. իրեն բոլոր հպատակաց համար իրաւունք եւ արդարութիւն ձեռք բերաւ։

Այս գործերէն ետքը Դաւիթ ըսաւ. «Արդեօք Սաւուղի տունէն ո և է ժառանգ չէ՞ մնացեր, որ Յովնաթանի սիրոյն համար անոր օգնութիւն մը ընեմ»։ Ծառաներէն մէկը ըսաւ. «Յովնաթանէն միայն կաղ որդի մը մնացեր է»։ Անմիջապէս Դաւիթ մարդ ղրկեց եւ բերել տուաւ։ Երբ Յովնաթանի որդին Մեմփիբոսթէն՝ Դաւթի առջեւ ելաւ՝ երեսի վրայ ինկաւ։ Դաւիթ ըսաւ անոր. «Մի՛ վախնար, ես կ'ուզեմ քեզի օգնել՝ քու հօրդ Յովնաթանի սիրոյն համար, քեզի կուտամ Սաւուղի բոլոր արտերը, եւ դու ամէն օր

սեղանիս վրայ պիտի ճաշես»։ Այսպէս չ'մոռցաւ Դաւիթ իւր սիրելի Յովնաթանը։

—

«Թագաւոր հանճարեղ՝ իմաստութիւն ժողովրդոց»: Իմաստ. Սող. Զ. 26.

Իմաստուն թագաւորը ժողովրդեան համար բաղդաւորութիւն է:

«Երանի՜ քեզ երկիր, որոյ թագաւոր քո որդի ազատի է»: Ժող. Ժ. 17.

60.

Դաւթի մեղանչելը

Դաւիթ իւր Յովաբ զօրավարը եւ ծառաները Ամմոնացւոց դէմ ղրկեց որ Ռաբաթաւ գլխաւոր քաղաքը պաշարեն, եւ ինքը մնաց Երուսաղէմ։ Օր մը թագաւորը անկողինէն ելաւ եւ տան երդիքին վրայ կը պտըտէր։ Յանկարծ տեսաւ գեղեցիկ կին մը՝ Բերսաբէ անուն, որ Ուրիայի կինըն էր։ Ուրիա Յովաբի հետ պատերազմի գընացեր էր։ Դաւիթ Յովաբին նամակ մը գրեց, որով կը պատուիրէր ու կ'ըսէր. «Ուրիան պատերազմի վտանգաւոր տեղը ղրկէ՛, դու ետ դարձիր, թող անիկայ սպաննուի»։ Յովաբ ալ նոյնը

կատարեց․ Թշնամիք քաղաքէն դուրս ելան եւ սկսան Յովաբի դէմ պատերազմիլ։ Դաւթի ծառայներէն ոմանք մեռան, մեռաւ նմանապէս եւ Ուրիան։ Յովաբ մարդ ղրկեց Դաւթին այդ լուրը հաղորդելու։ Երբ Ուրիայի կինը ամուսնոյն մահուան բօթը առաւ, սկսաւ սուգ բռնել․ սըգոյ օրերն անցնելէն յետոյ, Դաւիթ մարդ ղըրկեց կնոջ՝ տուն բերել տուաւ եւ իրեն կին ըրաւ։

Դաւթի այս գործը վշտացուց զԱստուած, որ Նաթան մարգարէն ղրկեց, որ Թագաւորին քով եկաւ եւ հետեւեալ առակը ըսաւ․ «Քաղաքի մը մէջ երկու մարդիկ կային, մէկը հարուստ, իսկ միւսը աղքատ։ Հարուստը ունէր շատ հօտեր եւ եզներ, իսկ աղքատը մի միայն գառնուկ մը։ Աղքատը շատ կը սիրէր իր գառնուկը, իրեն հետ կը կերցնէր, կը խմցնէր եւ գոգը կը քնացընէր որդւոյն նման։ Օր մը հարուստին հիւր եկաւ, սա խնայեց իր ոչխարաց կամ գուարաց մէկը մորթելու, այլ աղքատին գառնուկը խլեց եւ անով հիւրը պատուեց»։ Դաւիթ բարկացաւ այդ բանին եւ ըսաւ Նաթանին․ «Այդ մարդը մահուան արժանի է»։ Նաթան ըսաւ Դաւթին․ «Այդ մարդը դու ես, դու խլեցիր Ուրիայի կինը, զինքն ալ Ամմոնացւոց սրով սպաննել տուիր։ Աստուած այսպէս կ՚ըսէ․ Ես զքեզ Սաւուղի ձեռքէն ազատեցի եւ Յուդայի ու Իսրայէլի տան վրայ Թագաւոր նշանակեցի, ինչո՞ւ դու իմ խօսքըս արհամարհեցիր եւ այսպիսի չարութիւն գործեցիր։ Քու տունէդ քեզի դէմ չարիք՝ անբաղ-

դութիւն պիտի ունենաս, դու ծածուկ չարութիւն գործեցիր, իսկ ես զքեզ յայտնի կերպով պիտի պատժեմ ամբողջ Իսրայէլի եւ արեգական առջեւ։»

Այն ժամանակ Դաւիթ ըսաւ Նաթանին․ «Ես մեղաւոր եմ Աստուծոյ առջեւ»։ Դաւիթ գետնի վրայ ինկած կ՚աղօթէր եւ կ՚ըսէր․ «Ողորմեա՛ «ինձ Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում, «ըստ բազում գթութեան քում քաւեա՛ զանօրէ- «նութիւնս իմ։ Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս, «Աստուած, եւ հոգի ուղիղ նորոգեա՛ ի փորի «իմում։ Մի՛ ընկենուր զիս, Տէր, յերեսաց քոց «եւ զհոգի սուրբ քո մի՛ հաներ յինէն»։ Նաթան ըսաւ․ «Աստուած ներեց քու յանցանքդ, դու չես մեռնիր»։ Նաթան տուն գնաց։ Այնուհետեւ Բերսաբէ զաւակ մը ունեցաւ, զոր Սողոմոն անուանեց։ Աստուած կը սիրէր զայն։ Դաւիթ՝ Նաթան մարգարէին յանձնեց Սողոմոնի կրթութիւնը եւ նա ալ անոր անունը Յեդեդի դրաւ։

«Որ ծածկէ զամբարշտութիւն՝ ոչ յաջողեսցի․ իսկ որ պատմէ եւ յանդիմանէ, սիրելի եղիցի»։ Առակք․ Սող․ ԻԸ․ 13․

61.

ԱԲԻՍՈՂՈՄ

Ա.

Բոլոր Իսրայէլի մէջ Դաւթի որդւոյն Աբիսողոմի նման գեղեցիկ մարդ մը չկար. ոտից մատներէն սկսեալ մինչեւ գլուխը պակասութիւն մը չունէր։ Աբիսողոմի ամենագեղեցիկ զարդարանքը գլխուն մազերն էին։ Աբիսողոմ կառքեր, ձիեր եւ յիսուն հատ սուրհանդակ ունէր։ Առաւօտները կանուխ կ'ելլար եւ կը կենար քաղաքի դըրան ճամբուն վրայ։ Ամէն անոնք որոնք գանգատելու համար Թագաւորին քով կ'երթային, կ'ըսէր Աբիսողոմ. «Դու արդար ես, բայց ո՞վ կայ Թագաւորին քով որ զքեզ պաշտպանէ։ Երանի՜ թէ զիս դատաւոր ընտրէին այս երկրին վրայ, ես գիտէի թէ ինչպիսի՛ արդարութեամբ պիտի պաշտպանէի ամենուն իրաւունքը»։ Եթէ մէկը խոնարհէր իրեն երկրպագութիւն ընելու, ձեռքէն կը բռնէր, վեր կը կեցնէր եւ կը համբուրէր։ Այս ձեւով Աբիսողոմ իրեն գրաւեց Իսրայէլի որդւոց սիրտը։

Այնուհետեւ ըսաւ Դաւթին. «Թոյլ տո՛ւր ինձ, հայր, որ Քեբրոն երթամ և Աստուծոյ խոստացած զոհս մատուցանեմ»։ Թագաւորը ըսաւ. «Գնա՛ խաղաղութեամբ»։ Աբիսողոմ կանխաւ մարդ ղրկեր էր Իսրայէլի բոլոր քաղաքները ըսելու. «Երբոր փողին ձայնը լսէք, ըսէք որ Աբիսողոմ Քեբրոնի մէջ Թագաւոր եղեր է»։ Աբիսողոմ Քեբրոն գնաց, դաւաճանութիւնը քանի կ'երթար կը զօրանար եւ մեծ բազմութիւն ժողովրդեան կը հետեւէր իրեն։

Երբ զասոնք Դաւթին իմացուցին, Դաւիթ Երուսաղէմ գտնուող իր բոլոր ծառայներուն ըսաւ. «Ելէ՛ք փախչինք Աբիսողոմի երեսէն, շտապեցէք, մի՛ գուցէ մեզ հասնի եւ կոտորէ ու քաղաքն ալ սրոյ ճարակ դարձնէ»։ Թագաւորը քաղաքէն հետիոտն փախաւ իր ծառայներուն հետ, որուն կը հետեւէր մեծ բազմութիւն մը եւ դառնացած բարձրաձայն կուլային։ Դաւիթ անցաւ Կեդրոնի վտակը եւ լալով կ'ելնէր Ձիթենեաց լեռը. Թագաւորը կ'երթար գլուխը ծածկած եւ բոկոտն։ Սաւուղի տնէն Սեմէի անուամբ մարդ մը՝ Դաւթին պատահեցաւ եւ սկսաւ անիծել, քարեր արձակել ու ըսել. «Դո՛ւրս, դո՛ւրս, ո՛վ արիւնահեղ. Սաւուղի տան արիւնը Աստուած քու վրադ դարձուցեր է. Թագաւորութիւնդ յանձնեց Աբիսողոմ որդւոյդ եւ դու այժմ անբաղդութեան մէջ ինկար»։ Աբեսսան պատասխանեց. «Ինչպէ՞ս կը համարձակիս իմ տէր Թագաւորս այսպէս անարգել. հրամայէ՛ արքայ որ սորա գլուխը կըտրեմ»։ Թագաւորը ըսաւ. «Թող որ անիծէ, Տիրոջ կամքն է այդ։ Ահա հարազատ որդիս իմ ետեւէս է ընկեր եւ զիս կը հալածէ, ի՞նչ զարմանալու բան կայ որ օտար համարուած Սեմէին այդպէս վարուի, գուցէ Աստուած գթայ իմ նեղութեանս»։ Այսպէս Դաւիթ կը շարունակէր իր

ճամբան։ Աբիսողոմ մտաւ Երուսաղէմ եւ գրաւեց ամէն ինչ որ հօրը կը պատկանէր։

Բ.

Աբիսողոմ իւր մարդոց հետ անցաւ Յորդանանը՝ իւր հայրը հալածելու համար։ Դաւիթ իւր մօտ եղած բազմութիւնը կարգի դրաւ եւ ըսաւ. «Ես ալ ձեզի հետ կ՚ուզեմ թշնամւոյն դէմ ելնել»։ Ժողովուրդը պատասխանեց. «Դու մի՛ ելներ, դու մեզ համար տասն հազար մարդու հաւասար ես»։ Ժողովուրդը գնաց, իսկ Դաւիթ՝ Յովաբին, Աբեսային եւ բովանդակ գլխաւորներուն պատուիրեց ու ըսաւ. «Իմ սիրոյս համար խնայեցէք Աբիսողոմին»։ Երբ պատերազմի դաշտը ելան, Եփրեմի անտառին մէջ հանդիպեցան իրարու. պատերազմը արիւնահեղ էր։ Իսրայէլի ժողովուրդը մեծ հարուած ստացաւ Դաւթի ծառաներէն. Աբիսողոմ ջորւոյն վրայ նստած փախաւ, եւ երբ մեծ կաղնւոյ մը թաւ ճիւղերուն ներքեւէն կ՚անցնէր, մազերը ճիւղերուն փաթթուեցան; կախուած մնաց և կը ճօճէր երկնի ու երկրի մէջ. տակի ջորին անցաւ գնաց։ Յովաբ զայս իմանալով՝ առաւ երեք գեղարդ և խրեց Աբիսողոմի սիրտը։ Յովաբի զինակիրք շրջապատեցին զայն, սպաննեցին, ձգեցին փոսի մը մէջ եւ վրան քարակոյտ կազմեցին։

Պատերազմի դաշտէն աւետաբեր եկաւ Դաւթի եւ յայտնեց յաղթութեան լուրը։ Դաւիթ հարցուց. «Աբիսողոմ պատանին ո՞ղջ է»։ Երբ տեղեկացաւ իրողութեան, տխրեցաւ, կուլար

եւ կ՚ըսէր. «Որդեա՛կ իմ Աբիսողոմ, Աբիսողո՛մ որդեակ իմ, երանի՜ թէ ես մեռնէի քու տեղդ, ո՜վ որդեակ իմ Աբիսողոմ»։

Յուդայի բնակիչքը Դաւթի մարդ ղրկեցին եւ ըսին. «Արի՛ վերստին դու ալ, ծառաներդ ալ». եւ գնացին մինչեւ Յորդանան՝ Դաւիթը դիմաւորելու։ Սեմէին ալ եկաւ անոնց հետ, թագաւորին ոտքը ինկաւ եւ կ՚ըսէր. «Մի՛ յիշեր յանցանքըս, ես կը խոստովանիմ սխալմունքս»։ Աբեսսան ըսաւ. «Պէտք է որ մեռնի, վասն զի Աստուծոյ օծեալը անիծեց»։ Դաւիթ պատասխանեց. «Այսօր ոչ ոք պիտի մեռնի, երբ ես Իսրայէլի վրայ թագաւոր եղեր եմ»։ Դաւիթ երդուընցաւ Սեմէիին եւ ըսաւ. «Դու չպիտի մեռնիս»։ Յետոյ Դաւիթ վերստին դարձաւ Երուսաղէմ։

—

«Սրդեամբք եւ բանիւք պատուեա զհայր քո, զի եկեսցէ ի վերայ քո օրհնութիւն ի նմանէ։ Զի օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոյ, եւ անէծք մօր՝ խլեն զհիմունս»։ Սիրաք. Գ. 9–11.

Պատուէ հայրդ թէ գործով եւ թէ խօսքով, որ անոր օրհնութիւնը քու վրայ գայ։ Որովհետեւ հօր օրհնութիւնը կը հաստատէ որդւոց տունը, իսկ մօր անէծքը ի հիմանց կը կործանէ։

«Որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից լինի ի բարիս»։ Ն. ա. Հռովմ. Գ. 28.

«Անօրէնք եղեն յաւեր յանկարծակի, սատակեցան, պակասեցան, կորեան վասն անօրէնութեան իւրեանց»։ Սաղ. ՀԲ. 19.

62.

Դաւթի մահը

Երբ Դաւիթ ծերացաւ, Երուսաղէմ կանչեց բոլոր իշխանները, դատաւորները եւ զինուորականները ու ըսաւ. «Ինձ լսեցէք, ո՛վ ժողովուրդ, ես մտադիր էի Աստուծոյ համար տաճար մը շինել, որպէսզի Տապանակ Ուխտին այն տեղ դնեմ։ Բայց Աստուած իրեն Նաթան ծառային բերնով ըսաւ. Ինձ համար դու տաճար չես կրնար շինել, որովհետեւ զինուոր մարդ ես, շատերուն արիւնը թափեր ես։ Երբ դու կը մեռնիս, որդիդ Սողոմոն քեզ պիտի յաջորդէ. Նա ինձ համար տաճար մը պիտի կառուցանէ, եւ ես ալ անոր թագաւորութիւնը յաւիտեան հաստատ պիտի պահեմ։ —Արդ Աստուած՝ իմ բոլոր որդւոցս մէջէն Սողոմոնը ընտրեց գահուս ժառանգ։ Ուրեմն Աստուծոյ բովանդակ պատուիրանները պահեցէք, որպէս զի այս գեղեցիկ երկիրը ժառանգէք եւ ձեր որդւոց ժառանգել տաք։ Իսկ դու, որդեակ իմ Սողոմոն, ճանչցիր հօրդ Աստուածը եւ ծառայէ՛ անոր կատարեալ սրտով եւ յօժար կամքով. եթէ զայն խնդրես՝ կը գտնես, իսկ եթէ թողուս, մոռնաս, նա ալ զքեզ կը թողու, կը մոռնայ։ Աստուած զքեզ ընտրեց իրեն համար տաճար կառուցանող։ Ես կ'երթամ այնտեղ, ուր ամենքն ալ գացած են. դու մխիթարուէ՛, մի՛

վախնար, իմ Աստուածս քեզ հետ կ'ըլլայ»։

Դաւիթ իւր Սողոմոն որդւոյն տուաւ տաճարին գաղափարը թէ ի՛նչ ձեւով պիտի շինէ եւ շարունակեց ժողովրդեան հետ խօսիլը. «Աստուծոյ տաճարը կառուցանելը շատ մեծ գործ է. ես իմ կարողութեանս չափ ըստ բաւականին ոսկի, արծաթ, թանկագին քարեր, երկաթ, փայտ եւ մարմար ժողվեր եմ։ Բաց ասկէ՝ Աստուծոյ տաճարին վրայ ունեցած սիրոյս համար կուտամ 3000 տաղանդ ոսկի եւ 7000 տաղանդ արծաթ. իսկ ձեզնէ ո՞վ յօժար է Աստուծոյ տաճարին համար այսօր կամաւոր նուէր մատուցանելու»։ Այն ժամանակ իշխանք, դատաւորք եւ ժողովրդեան մէջէն ամեն ոք իրենց կարողութեան չափ ընծայներ տուին։ Ժողովուրդը շատ ուրախացաւ որովհետեւ ամենքն ալ ազատ կամքով նուիրեցին։ Դաւիթ ալ շատ ուրախացաւ եւ կը փառաբանէր զԱստուած ու կ'ըսէր. «Օրհնեցէք ձեր Տեառն Աստուծոյ անունը»։ Բոլոր ժողովուրդը օրհնեց Աստուծոյ անունը եւ խոնարհելով երկրպագութիւն կ'ընէր, աղօթք եւ ողջակէզ կը մատուցանէր։ Քահանան առաւ իւղի եղջիւրը և Սողոմոնը թագաւոր օծեց։ Փողերը կը փչէին եւ ժողովուրդը կ'աղաղակէր. «Յաջողութի՛ւն Սողոմոն թագաւորին»։ Շատ չանցեց, մեռաւ Դաւիթ թագաւորը եւ թաղուեցաւ համանուն քաղաքին մէջ, թագաւորելով Իսրայէլի վրայ քառասուն տարի։

—

«Երանի՜ մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չոքան զհետ նոցա»: Յայտ. Յովհ. ԺԴ. 13.

. Երանի՜ այն մեռելներուն որք Աստուծով ննջեցին, որովհետեւ իրենց աշխատանքէն հանգստացան եւ իրենց ընտիր գործքերը ապագային յիշատակ թողուցին:

Դ.

63.

Սողոմոնի Թագաւորելը

Ա.

Սողոմոն կը սիրէր զԱստուած եւ իւր հօր Դաւթի ճանապարհովը կ'ընթանար։ Երբ Թագաւորը Գաբաւոնի մէջ զոհ կը մատուցանէր, նոյն գիշերը Աստուած երեւցաւ երազին մէջ եւ ըսաւ. «Խնդրէ՛ ինծմէ ինչ որ կ'ուզես»։ Սողոմոն պատասխանեց. «Ո՜վ Տէր իմ Աստուած. Դու թագաւորեցուցիր ծառայդ՝ իմ հօրս Դաւթի տեղը, որ քեզի հաճելի կենօք ապրեցաւ. ես փոքր տղայ մ'եմ, չ'գիտեմ ոչ բարին եւ ոչ չարը, ուրեմն տուր քու ծառայիդ իմաստուն միտք՝ ժողովուրդը դատելու, եւ կարողութիւն՝ լաւը վատէն որոշելու»։ Այս խօսքերը Աստուծոյ հաճելի եղան եւ ըսաւ. «Որովհետեւ դու չ'խնդրեցիր

երկար կեանք եւ հարստութիւն, ահա՛ կու տամ քեզի այնպիսի իմաստուն միտք մը որ ոչ քեզմէ առաջ մէկը ունեցած է եւ ոչ ալ քենէ յետոյ մէկը պիտի ունենայ։ Կու տամ քեզի նաեւ ինչ որ չ'խնդրեցիր, այսինքն հարստութիւն եւ փառք։ Եթէ դու իմ ճամբովս երթաս եւ իմ պատուիրանքներս պահես, քու հօրդ Դաւթի նման՝ քեզ երկար կեանք եւս կու տամ»։

Բ.

Այդ օրերը երկու կանայք Թագաւորին գանգատի եկան։ Կանանց մէկը ըսաւ. «Ո՜հ, Տէր իմ, ես եւ այս կինը մէկ տան մէջ կ'ապրէինք։ Ես որդի մը ծնայ, երեք օր յետոյ անիկայ եւս որդի մը ունեցաւ. մենք միայնակ էինք, մեզմէ զատ ոչ ոք կար այդ տանը մէջ։ Այս կնոջ որդին՝ գիշերը կը մեռնի, որովհետեւ վրան պառկեր եւ խղդեր է։ Կէս գիշերին կ'ելլայ, իմ որդիս կ'առնու գրկէս եւ խղդուած որդին ծոցս կը դնէ։ Առաւօտուն արթնցայ տղուն ծիծ տալու, տեսայ որ մեռած էր եւ ցերեկուան լուսով ուշադրութեամբ նայելով՝ գտայ որ իմ որդիս չէ»։ Միւս կինը խօսեցաւ եւ ըսաւ. «Այդպէս չէ, կենդանին իմ տղաս է, մեռածը իրենն է»։ Առաջինը պատասխանեց. «Ո՛չ, մեռածը քու տղադ է, իսկ կենդանին իմս է»։ Այսպէս կը խօսէին Թագաւորին առջեւ։ Թագաւորը ըսաւ. «Բերէք ինծի սուր մը»։ Երբ սուրը բերին, Սողոմոն ըսաւ. «Կիսեցէք կենդանի երախան, կէսը տուէք միոյն, եւ կէսն ալ միւսոյն»։ Կանանց

մէկը ըսաւ. «Մի՛ սպաննէք». իսկ միւսը կ՚ըսէր. «Ո՛չ ինծի ըլլայ եւ ո՛չ ալ քեզի, թո՛ղ կտրեն»։ Թագաւորը ըսաւ. «Առաջին կնոջը տուէք կենդանի երախան, վասն զի այն է հարազատ մայրը»։ Այս դատաստանը իմացուեցաւ բովանդակ Իսրայէլի մէջ եւ ամէնքը կը պատկառէին, որովհետեւ Սողոմոնի աստուածային իմաստութիւնը յայտնի եղաւ այս կերպով դատելու եղանակին մէջ։

Գ.

Սողոմոն կը թագաւորէր այն բոլոր երկիրներուն վրայ, զորս հայրը նուաճեր էր. իւր հպատակները ընծայներ կը բերէին եւ կը ծառայէին նմա ամենայն անձնուիրութեամբ։

Սողոմոն ունէր քառասուն հազար կառքի ձիեր եւ տասուերկու հազար ձիաւոր։ Գործակալները ամեն բան կը հոգային անթերի։ Պալատին մէջ ամեն օր կը գործածուէր իննսուն քոռ ալիւր, երեսուն տաւար եւ հարիւր ոչխար։

Սողոմոնի կենդանութեան ժամանակ՝ երկրին մէջ խաղաղութիւնը կը տիրապետէր։ Յուդայի եւ Իսրայէլի ժողովուրդները հանդիստ կեանք կը վարէին՝ իւրաքանչիւրը իրենց որթի և թզենւոյն տակ։

Աստուած Սողոմոնին մեծ իմաստութիւն տըւաւ. իմաստուն էր քան զամեն մարդ, եւ անունը հեթանոսաց մէջ տարածուած էր։ Սողոմոն երեք հազար առակներ ըսաւ, եւ հազար

հինգ երգեր երգեց։ Երկրիս բոլոր ծայրերէն մարդիկ կուգային անոր իմաստութիւնը լսելու։

—

«Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ»։ Ա. Թ. Յովհ. Ե. 14.

Ուրախութիւն մ՚է ստուգիւ մեզ համար ինչ որ անոր կամաց համաձայն կը խնդրենք, կուտայ մեզի։

«Սկիզբն գգօնութեան երկիւղ Տեառն»։ Սաղ. ՃԺ. 10.

Իմաստութեան սկիզբը Աստուծոյ երկիւղն է։

64.

Սողոմոնի տաճարին շինութիւնը

Ա.

Սողոմոն մարդ ղրկեց Տիւրոսի Քիրամ թագաւորին ըսելու. «Դու գիտես, որ իմ հայրս Դաւիթ՝ պատերազմաց պատճառաւ չկրցաւ իւր Տիրոջ Աստուծոյ անուանը վայել տաճար մը կանգնել։ Այժմ իմ Տէր Աստուածս ինծի խաղաղութիւն պարգեւեց եւ ես մտադիր եմ տաճար մը

կանգնել։ Արդ հրաման տուր քու ծառայներուդ՝ որ իմ ծառայներուս հետ Լիբանանու անտառներէն եղեւիններ կտրեն, որոց փոխարէնը ես քեզի ցորենով, գինիով եւ իւղով կը վճարեմ։ Քիրամ շատ ուրախացաւ եւ մարդ ղրկեց Սողոմոնի ըսելով. «Ամեն բան քու ցանկութեանդ համաձայն կը կատարեմ». եւ իրարու հետ դաշինք դրին։ Սողոմոն երեսուն հազար փայտահար ղրկեց Լիբանան, եօթանասուն հազար բեռնակիր, ութսուն հազար քարահատ, առնցմէ զատ երեք հազար հինգ հարիւր իշխաններ՝ վերակացու նշանակեց գործին վրայ։ Սողոմոնի եւ Քիրամի վարպետները կը տաշէին, կը պատրաստէին քարերը տաճարին շինութեան համար։ Սողոմոնի թագաւորութեան չորրորդ տարին Մօրէա լերան վրայ Սողոմոնի տաճարին հիմունքը դրուեցան։ Տիրոջ անուան կառուցանելի տաճարը՝ վաթսուն ոտնաչափ երկայնութիւն, քսան ոտնաչափ լայնութիւն և երեսուն ոտնաչափ բարձրութիւն ունէր։ Տաճարը ներսէն շինուած էր եղեւնափայտով, յատակը կաղնիի տախտակով ծածկուած, իսկ տաճարին ներքին մասը մաքուր ոսկիով պատած և յատակն ալ ոսկեայ թիթեղով, այնպէս որ բոլոր շինուածքը ոսկիով պատած էր։ Տաճարը երկուքի բաժնուած էր. ներսի կողմն էր Սրբութիւն Սրբոցն՝ ուր պէտի դրուէր Տապանակ Ուխտին։ Տաճարին չուրջը Սողոմոն երկու գաւիթ շինեց, արտաքինը ժողովրդեան համար, իսկ ներքինը՝ քահանայից. հոս զետեղուած էր ողջի սեղանը եւ պղնձէ ծովը՝ քահանայից լուացուելու համար։

եօթը տարուան մէջ տաճարին շինութիւնը աւարտեցաւ։

Բ.

Երբ շինութիւնը ամբողջացաւ, Սողոմոն Երուսաղէմ կանչեց երկրին մէջի բոլոր ծերերը, իշխանները եւ ժողովուրդը։ Քահանայք՝ Տապանակ Ուխտին և ամբողջ սրբազան անօթները Սիօնի լերան վրայէն տաճարը փոխադրեցին։ Սողոմոն եւ ամբողջ հասարակութիւնը անոնց կը հետեւէր։ Երբ քահանայք Ուխտին Տապանակը՝ Սրբութիւն Սրբոցին մէջ դրին, թագաւորը օրհնեց ամբողջ Իսրայէլի ժողովուրդը, ծունր դրաւ Տիրոջ սեղանին առջեւ, ձեռքերը տարածեց եւ ըսաւ. «Տէ՛ր Աստուած Իսրայէլի, երկինք ու երկիր բաւական չ՛են զքեզ պարունակելու, ո՛ւր մնաց այս տաճարը զոր ես քու անուանդ համար կառուցի. լսէ՛ ծառայիդ աղօթքը եւ խնդրուածքը. լսէ՛ մեզ ամեն ժամանակ՝ թէ գիշեր եւ թէ ցերեկ։ Լսէ՛ Իսրայէլի ժողովրդեան աղօթքը, ողորմած եղիր դէպ ի նա նեղութեան ժամանակ, որպէս զի միշտ երկիւղած լինի եւ բնակի այն երկիրը զոր դու մեր պապերուն տուիր։ Եթէ այլազգի մը հեռու երկրէ գայ այս տաճարին մէջ աղօթելու, լսէ՛ նաեւ անոր Տէր Աստուած, որպէս զի երկրիս վրայի բոլոր մարդիկը ճանչնան զքեզ եւ երկնչին քեզմէ Իսրայէլի ժողովրդին նման։ Եթէ քու ժողովուրդդ քեզի դէմ մեղանչէ, որովհետեւ ո՞վ է որ չ՛մեղանչէր, և ուղիղ սրտովքեզ դառնայ, անոր խնդրուածներն ալ լսէ՛»։ Աղօթ-

քը վերջացնելէն յետոյ՝ Սողոմոն սեղանին առջեւ կանգնեցաւ եւ օրհնեց բոլոր Իսրայէլի ժողովուրդը. Թագաւորը համօրէն ժողովուրդին հետ միասին շնորհակալութեան զոհ մատոյց Աստուծոյ։ Սողոմոն եօթը օր եւ եօթը գիշեր տօն կատարեց, իսկ ութերորդ օրը արձակեց ժողովուրդը։ Ամենքը կ՚օրհնէին Թագաւորը եւ տուն դարձան ուրախ սրտով՝ փառաբանելով զԱստուած, որ Իսրայէլի ժողովուրդին այդպիսի մեծ բարութիւն մը գործեց։

—

«Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո, եւ զտեղի յարկի փառաց քոց»։ Սաղ. ԻԵ. 8.

Աստուած, ես սիրեցի քու տանդ գեղեցկութիւնը, եւ քու փառացդ բնակութեան տեղը։

«Տո՛ւր ցիս, որդեակ, զսիրտ քո եւ աչք քո ճանապարհաց իմոց սպասեսցեն»։ Առակ. Սող. ԻԳ. 26.

Սիրտդ ինծի տո՛ւր, որդեա՛կ, թող աչքերդ իմ ճանապարհիս սպասեն։

65.

Սողոմոնի փառքն, անկումը եւ մահը

Ա.

Սողոմոն իրեն համար եղեւնափայտէ տուն մը շինեց, որոյ երկայնութիւնը հարիւր եւ լայնու-

թիւնը յիսուն եւ բարձրութիւնը երեսուն կանգուն էր։ Այս տանը շինութիւնը երեսուն տարի տեւեց. շուրջանակի սրահներ շինեց բոլորն ալ եղեւնափայտէ։ Ամուսնացաւ Փարաւոնի աղջըկան հետ և անոր համար ալ քարէ եւ եղեւնափայտէ հոյակապ տուն մը կառուցանել տուաւ։ Սրահ մը եւս շինեց, ուր կը դատէր ժողովուրդը. շինել տուաւ իրեն համար փղոսկրեայ գահ՝ ազնիւ ոսկւով պատած։ Թագաւորին խմելու բոլոր բաժակները, ամանները ոսկեղէն էին, արծաթը յարգի չէր։ Յետոյ նաւեր պատրաստել տուաւ. Քիրամ ալ ընտիր նաւաստիներ ղրկեց, որոնք ծովային արհեստին տեղեակ էին։ Ասոնք Սողոմոնի ծառայից հետ կը նաւէին եւ ոսկի, արծաթ, փղոսկր, կապիկ եւ սիրամարգ կը բերէին։ Բաց աստի՝ Թագաւորին համար ամեն կողմէն ոսկեայ եւ արծաթեայ ամաններ, հանդերձներ, զէնքեր, նժոյգներ և ջորիներ ընծայ կը բերէին։ Այսպէս Սողոմոն իւր հարստութեամբ եւ իմաստութեամբ աշխարհիս առաջին Թագաւորը եղաւ, այնպէս որ ամենքը կը ցանկային զինքը տեսնել եւ անոր իմաստութիւնը լսել։

Սաբայ Թագուհին՝ որ Արաբիա կը բնակէր, մեծ բազմութեամբ եւ ուղտերը բեռնաւորած խնկով, ոսկւով եւ ազնիւ քարերով՝ Սողոմոնի տեսութեան եկաւ։ Թագուհին առաջարկեց այն բոլոր խնդիրները որոնք իւր մտքին մէջ ունէր եւ բոլորին ալ մեկնութիւնը ստացաւ. ամեն ինչ լուսաբանուեցաւ իրեն համար։ Երբ Թագուհին լսեց նաեւ Սողոմոնի իմաստութիւնը եւ տեսաւ

կառուցած տունը, ծառայները եւ ճոխութիւնը, այլ եւս չ'կրցաւ համբերել եւ ըսաւ. «Ինչ որ ես իմ երկրիս մէջ լսեր էի՝ քու եւ քու իմաստութեանդ մասին, բոլորն ալ ճշմարիտ են։ Ասոնց ես չէի ուզեր հաւատալ, անոր համար ալ եկայ աչքովս տեսնելու. այժմ կը գիտեմ որ տեսածիս կէսն ալ չեն պատմած, բաղդաւոր են քու ծառայներդ որոնք միշտ դիմացդ կանգնած՝ իմաստութիւնդ կը լսեն»։ Թագուհին՝ ընծայ տուաւ Սողոմոնին հարիւր տասը տաղանդ ոսկի, խունկ եւ պատուական քարեր։ Սողոմոն ալ տուաւ Թագուհւոյն այն բաները զոր կը ցանկար եւ տակաւին ուրիշ շատ ընծայներ։ Յետոյ Թագուհին դարձաւ իր երկիրը։

Բ.

Սողոմոն ունէր շատ օտարազգի կնիկներ, որոնց թիւը եօթը հարիւրի կը հասնէր։ Ծերութեան ժամանակ՝ կանայք Սողոմոնի սիրտը դէպ ի օտար աստուածներ առաջնորդեցին, այնչափ որ իր սիրտը ամբողջապէս ճշմարիտ Աստուծոյն չ'էր նուիրած։ Սողոմոն Աստուծոյ ճամբուն չէր հետեւեր եւ օտարազգի կնիկներուն համար Երուսաղէմի մէջ տաճարներ շինել տուաւ, ուր իրենց կուռքերուն զոհ կը մատուցանէին եւ խունկ կը ծխէին։ Այս գործերը վշտացուցին զԱստուած որ իմացուց Սողոմոնի ըսելով. «Որովհետեւ դու իմ ուխտս եւ պատուիրաններս չպահեցիր, ուստի ես ալ քու թագաւորութիւնդ կը խլեմ քեզմէ, բայց ոչ կենդանութեանդ ժամանակ, այլ քու

որդւոյդ օրովը, անոր ալ կը թողում քու թագաւորութենէդ մաս մը միայն՝ հօրդ Դաւթի սիրոյն համար»։

Սողոմոնի ծառայներէն մէկը Յերոբովամ անունով որ քաջ եւ պատերազմող մարդ մ'էր, ապստամբեցաւ թագաւորին դէմ։ Սողոմոն հրամայեց որ սպաննեն, բայց նա Եգիպտոս փախաւ։ Սողոմոն քառասուն տարի թագաւորեց Իսրայէլի ժողովրդեան վրայ եւ մեռաւ ու թաղուեցաւ Դաւթի քաղաքը։ Որդին Ռոբովամ թագաւորեց հօրը տեղը։

—

«Աշխարհս անցանէ՝ և ցանկութիւն. իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնայ յաւիտեան»։ Ա. Թ. Յովհ. բ. 17.

Աշխարհս իր ցանկութեամբ անցաւոր է, իսկ ով որ Աստուծոյ կամօք կը շարժի, յաւիտեան կը մնայ։

Ե.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՒ ՎԵՐՋԸ

66.

Յերոբովամ եւ Ռոբովամ

Ա.

Ռոբովամ Սիւքէմ գնաց, որովհետեւ ամբողջ Իսրայէլ հոն հաւաքուած էր զինքը թագաւոր

օծելու համար։ Իսկ ոմանք մարդ ղրկեր էին Ցերոբովամը կանչելու։ Ցերոբովամ եւ բովանդակ Իսրայէլ ըսին Ռոբովամին. «Հայրդ մեր լուծը շատ ծանրացուց. մենք այն պայմանաւ քեզ կը հպատակինք՝ եթէ մեր լուծը թեթեւցնես»։ Ռոբովամ խորհուրդ ըրաւ ժողովրդեան ծերերուն հետ, որոնք արդէն իր հօրը խորհրդականներն էին եւ ըսաւ. «Ի՞նչ խորհուրդ կուտաք»։ Անոնք պատասխանեցին. «Եթէ դու այսօր այս ժողովրդեան մտիկ ընես և անոր հետ սիրով խօսիս, բարի խոստումներ ընես, քանի որ կենդանի ես՝ քեզ հաւատարմութեամբ կը ծառայէ»։ Ռոբովամ մերժեց ծերոց խորհուրդը եւ հասակակից ընկերներուն հետ խորհուրդ կազմեց, անոնք ալ այսպէս խորհուրդ տուին. «Դու ժողովրդեան պատասխանէ, որ իմ հայրս ձեզ խարազանով կը պատժէր, իսկ ես մորակով եւ կարիճով պիտի պատժեմ»։

Ռոբովամ պատասխանեց Ցերոբովամին և բոլոր ժողովրդեան այնպէս՝ ինչպէս որ իր երիտասարդ ընկերները խորհուրդ տուեր էին։ Երբ ժողովուրդը տեսաւ որ թագաւորը իրեն չուզեր մտիկ ընել՝ ըսաւ. «Մենք ի՛նչ գործ ունինք Դաւթի տան հետ. թող նա սրհայէլի մէջ իր վրանները երթայ»։ Դարձաւ ժողովուրդը եւ Ցերոբովամը թագաւոր օծեց։ Այսպէս ժողովուրդը բաժնուեցաւ Ռոբովամէն. այլ եւս ոչ ոք չէր հպատակեր Դաւթի տան թագաւորին՝ բաց ի Բենիամինի ցեղէն։

Բ.

Ցերոբովամ ամրացուց Սիւքէմը և իրեն մայրաքաղաք ընելով, կ՚ըսէր. «Եթէ իմ ժողովուրդս Երուսաղէմ երթայ զոհելու Աստուծոյ տաճարին մէջ, անոր սիրտը կը հակի դէպ ի Յուդայի տանը թագաւորին Ռոբովամի և ինձմէ կը հեռանայ։» Թագաւորը խորհուրդ կազմեց, երկու հատ ոսկիէ հորթեր շինել տուաւ ու ըսաւ ժողովրդեան. «Բաւական է որքան Երուսաղէմ գնացիք, ահա՛ ձեր աստուածները, որոնք զձեզ Եգիպտոսէ ազատեցին»։ Հորթերէն մէկը Բեթէլ, իսկ միւսը Դան հաստատեց, և ժողովուրդը կը դիմէր թէ միոյն և թէ միւսին։ Թագաւորը բլրի մը վրայ մեհեան մ՚ալ շինեց և քուրմեր նշանակեց պաշտօն մատուցանելու, բայց ոչ Ղեւիի ցեղէն։ Տօն կատարել տուաւ ի Բեթէլ, ինչպէս սովոր էին Յուդայի երկիրը. ժողովուրդը պահք կը պահէր ու խունկ կը ծխէր հորթին առջեւ։ Աստուած մարգարէին բերնով իր կամքը յայտնեց ըսելով. «Քու տունդ դժբաղդութեան պիտի մատնեմ և թագաւորութիւնդ ի սպառ պիտի ջնջեմ»։

Յուդայի տունն ալ սկսաւ Աստուծոյ դէմ չարութիւններ գործել. բարձրաւանդակաց վրայ աստուածներ և անտառի մէջ կուռքեր կառուցին. բարձր բլրոց վրայ և կանանչ ծառոց ներքեւ՝ հեթանոսաց բոլոր չարութիւնները կը գործէին։ Եգիպտոսի թագաւորը՝ Երուսաղէմի վրայ եկաւ և Աստուծոյ տաճարին գանձերը տարաւ.

նոյնպէս և յափշտակեց Ռոբովամ թագաւորին տան հարստութիւնները ու այն ամենը՝ ինչ որ գին ունէր։ Ռոբովամ և Յերոբովամ իրենց ամբողջ կենաց մէջ զբաղած էին ներքին պատերազմներով։

—

«Արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք»։ Առակք. ԺԴ. 34։

67.

ԵՂԻԱ

Ա.

Իսրայէլի թագաւորաց միոյն անունն էր Աքաաբ՝ որ ամուսնացաւ Սիդոն քաղաքի թագաւորին աղջկան Յեզաբէլի հետ՝ և անոնց Բահաղ կուռքին երկրպագութիւն կ'ընէր։ Սամարիայի մէջ կռատուն մ'ալ շինեց. իր վատ գործերով իրմէ առաջ եղած Իսրայէլի բոլոր թագաւորներէն աւելի բարկացուց զԱստուած։ Յեզաբէլ խեղդել տուաւ բոլոր մարգարէները։ Այն ժամանակ Եղիա մարգարէն եկաւ Աքաաբի մօտ և ըսաւ. «Այս տարի ոչ անձրեւ և ոչ ցօղ պիտի իջնէ երկինքէն։»

Բ.

Աստուած ըսաւ Եղիայի. «Գնա՛ Քերիթ հեղեղատը, հոն ջուր կը խմես. ագռաւներուն հրամայեր եմ որ զքեզ կերակրեն»։ Եղիա մտիկ ըրաւ Աստուծոյ խօսքին և գնաց։ Ագռաւները հաց ու միս կը բերէին, իսկ ջուրը հեղեղատէն կը խմէր։ Քանի մը օրէն հեղեղատին ջուրը ցամքեցաւ, որովհետեւ անձրեւ չէր գար։ Աստուած ըսաւ անոր. «Ե՛լ գնա Սարեպտա, այն տեղ այրի կնոջ մը հրամայեր եմ որ զքեզ կերակրէ»։ Եղիա ելաւ և երբ քաղքին դուռը հասաւ, տեսաւ այրի կին մը որ փայտ կը ժողվէր։ Եղիա ըսաւ. «Խնդրեմ ինձ համար քիչ մը ջուր բեր խմելու, նոյնպէս պատառ մի հաց»։ Կինը պատասխանեց. «Աստուծոյ անունը վկայ լինի, որ քիչ մը ալիւրէ ու քիչ մ'ալ իւղէ զատ բան մը չ'ունիմ. ահա այս փայտերը կը տանիմ որ հաց թխեմ, որպէս զի ես և իմ միակ որդիս ուտենք որ չ'մեռնինք»։ Եղիա ըսաւ. «Գնա՛, մի՛ վախնար, պատրաստէ քեզ և ինձ համար կերակուր, որովհետեւ Աստուած այսպէս կ'ըսէ. Քու տաշտեդ ալիւրը և ամանէդ իւղը չպիտի պակսի մինչեւ այն օրը երբ Աստուած անձրեւ տայ»։ Կինը գնաց և այնպէս ալ ըրաւ։ Եղիա կերաւ, նմանապէս կինը և որդին։ Տիրոջ բանին համաձայն՝ տաշտէն ալիւրը և ամանէն իւղը երբեք չպակսեցաւ։

Գ.

Սովի երրորդ տարին Աստուած ըսաւ Եղիային. «Գնա՛ Աքաաբի և ըսէ որ անձրեւ պիտի թափեմ երկրիս վրայ»։ Եղիա գնաց։ Երբ Աքաաբ Եղիան տեսաւ, ըսաւ. «Ուրեմն դո՞ւ ես Իսրայէլի խանգարիչը»։ Եղիա ըսաւ. «Ես չեմ Իսրայէլի խանգարողը, այլ դուն և քու տունդ, որովհետեւ դուք Աստուծոյ պատուիրանները մոռցեր էք և Բահաղին կը լսէք։ Մարդ ղրկէ և ժողովուրդը Կարմելոս լերան վրայ ժողվել տուր, նոյնպէս Բահաղի չորս հարիւր յիսուն մարգարէները»։ Այդպէս ալ ըրաւ Աքաաբ։ Այն ժամանակ Եղիա ժողովրդեան առջեւ ելաւ և ըսաւ. «Մինչեւ ե՞րբ պիտի կաղաք երկու կողմի վրայ. եթէ Աստուած Եհովան է, գնացէք անոր ետեւէն, իսկ եթէ Բահաղն է՝ սորա լսեցէ՛ք»։ Ժողովուրդը ոչինչ պատասխանեց. Եղիա շարունակեց. «Միայն Եհովայի մարգարէներէն ես մնացեր եմ, իսկ Բահաղէն չորս հարիւր յիսուն հոգի կան։ Արդ՝ մեզի թող երկու եզ տան. մէկը անոնք առնուն, կտորեն, դնեն փայտերու վրայ առանց կրակի, իսկ միւսն ալ ես առնում և նոյնպէս ընեմ։ Յետոյ դուք ձեր Աստուծոյ անունը տուէք, իսկ ես Եհովայինը։ Այն Աստուածը, որ կրակով պատասխան տայ, թող նա լինի ճշմարիտ Աստուածը»։ Բոլոր ժողովուրդը պատասխանեց. «Շատ իրաւացի խօսք է։»

Բահաղի քուրմերը եզ մը առին և այնպէս ը-

րին ինչպէս որ Եղիա ըսած էր, ու սկսան առաւօտէն մինչեւ կէս օր Բահաղի անունը տալ և ըսել. «Ո՛վ Բահաղ, պատասխան տուր»։ Բայց բնաւ պատասխան չկար։ Եղիա կը ծաղրէր զանոնք և կ՚ըսէր. «Բարձր ձայնով կանչեցէք, գուցէ զբաղած է կամ ճանապարհորդութիւն կ՚ընէ և շատ կարելի է քնացած է»։ Սկսան աւելի եւս բարձրաձայն աղաղակել, մարմիննին սրով յօշոտել, սակայն ոչ մէկ պատասխան չէին առնուր։ Եղիա ըսաւ բովանդակ ժողովրդեան. «Եկէք իմ քովս»։ Սեղան պատրաստեց, չորս կողմը փոս փորեց, սեղանին վրայ փայտեր շարեց, եզը ջարդեց և դրաւ փայտերուն վրայ։ Երեք անգամ ողջակէզի փայտին վրայ ջուր թափել տուաւ, այնպէս որ փոսը ծովի պէս ջրով լեցաւ։ Այնուհետեւ եկաւ Եղիա և ըսաւ. «Ո՜վ Աբրահամու, Իսահակայ և Իսրայէլի Աստուած, ցոյց տուր այսօր որ դու ես Իսրայէլի Աստուածը, իսկ ես քու ծառադ. լսէ՛ Աստուած, լսէ՛ ինձ, թո՛ղ այս ժողովուրդը իմանայ, թէ դու ես Տէր Աստուածը և քեզի դառնայ»։ Անմիջապէս կրակ ընկաւ երկնքէն և այրեց ողջակէզը։ Բոլոր ժողովուրդը երեսի վրայ ինկաւ և ըսաւ. «Եհովան է ճշմարիտ Աստուածը, Եհովան է ճշմարիտ Աստուածը»։ Եղիա պատասխանեց. «Բահաղի մարգարէները բռնեցէք որ չփախչին»։ Բռնեցին և Կիսոն հեղեղատի մօտ սպաննեցին։ Եղիա ըսաւ Աքաաբին. «Լծէ կառքդ և վար իջիր՝ որ անձրեւը քեզ չթրջէ»։ Անմիջապէս քամի մը ելաւ, եր-

կինքը ծածկուեցաւ սեւ ամպով և յորդ անձրեւ տեղաց։

Դ.

Աքաաբ պատմեց Յեզաբէլի ինչ որ ըրաւ Եղիա։ Յեզաբէլ դեսպաններ ղրկեց Եղիայի որ ըսեն. «Աստուածները թող զիս պատժեն, եթէ ես քեզ սպաննել չտամ, ինչպէս որ դու Բահաղի քուրմերը սպաննել տուիր»։ Փախաւ Եղիա Յուդայի անապատը, նստաւ ծառի մը տակ և ըսաւ. «Բաւական է, Տէր Աստուած, ա՛ռ իմ հոգիս. ես իմ հայրերէս լաւ չեմ». ու պառկելով այնտեղ քնացաւ։ Յետոյ ելաւ, քառասուն օր ճամբայ քալեց, մինչեւ Աստուծոյ Քորեբ լեռը հասաւ և այնտեղ այրի մը մէջ կ'ապրէր։ Աստուած ըսաւ. «Ի՞նչ կ'ընես այստեղ Եղիա»։ Նա պատասխանեց. «Ես քու անուանդ նախանձախնդիր եղայ, որովհետեւ Իսրայէլի որդիքը մոռցեր էին ուխտդ, կործաներ էին քու անուամբդ շինուած սեղանները, մարգարէներդ սրով ջարդեր էին, ես միայն ազատեր եմ. այժմ իմ կենացս ալ դարանակալ եղեր են»։ Աստուած ըսաւ. «Բարձրացի՛ր, ե՛լ լեռը։» Եւ ահա Աստուած անցաւ անոր քովէն. մեծ փոթորիկ ծագեցաւ, լեռներ և ապառաժներ քիչ մնաց խորտակէին. բայց Աստուած հովմին մէջ չէր։ Հովմէն յետոյ երկրաշարժ եղաւ, Աստուած՝ երկրաշարժին մէջը չէր։ Երկրաշարժէն վերջը կրակ եղաւ, բայց Աստուած կրակին մէջն ալ չէր. իսկ կրակէն յետոյ՝ մեղմ և բարակ ձայն մը լսուե-

ցաւ։ Այն ժամանակ Եղիա ծածկեց երեսը և Աստուած ըսաւ անոր. «Ետ դարձիր անապատին մէջէն և Յէուն Իսրայէլի վրայ թագաւոր օծէ, իսկ Եղիսէն քու տեղդ մարգարէ նշանակէ։ Իսրայէլի մէջ դեռ եօթը հազար հոգի ունիմ, որոնք Բահաղի առջեւ դեռ ծունր դրած չեն։»

Եղիա գնաց եւ Եղիսէն գտաւ վարուցան ըրած ժամանակ. իւր վերարկուն անոր վրայ ծածկեց։ Եղիսէ թողուց եզները, համբուրեց հայրն ու մայրը, և գնաց Եղիայի ետեւէն ու կը ծառայէր անոր։

—

«Երանի՜ հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր»։ Մատ. Ե. 5.

«Զի զոր սիրէ, Տէր, խրատէ»։ Ն. ա. Եբր. ԺԲ. 6.

«Առ յԱստուծոյ ամենայն ինչ զօրաւոր»։ Մատ. ԺԹ. 26.

Աստուծոյ համար ամեն բան կարելի է։

68.

Աքաաբ կը մեղանչէ Նաբովթի դէմ եւ Եղիա կը մեռնի

Ա.

Յեզրայէլացի Նաբովթը՝ Աքաաբի պալատին մօտ այգի մ'ունէր։ Անգամ մը Աքաաբ ըսաւ Նաբովթին. «Քու այգիդ ինձ տո՛ւր, ես կ'ու-

զեմ զայն պարտէզ չինել, որովհետեւ իմ պալատիս մօտ է. տար փոխարէն ես ալ քեզի կամ ուրիշ աւելի լաւ այգի մը կուտամ և կամ արժէքը կը վճարեմ»։ Նաբովթ պատասխանեց. «Աստուած չ՚ընէ որ իմ հայրենի ժառանգութիւնս քեզի տամ»։ Աքաաբ բարկացած՝ տուն վերադարձաւ, անկողին մտաւ և բան չ՚էր ուտեր։ Իր կինը Յեզաբէլ հարցուց տխրութեան պատճառը և ինքն ալ պատմեց ինչ որ տեղի ունեցեր էր։ Յեզաբէլ ըսաւ. «Այդպէ՞ս դու Իսրայէլի վրայ կը թագաւորես. ե՛լ և կեր։ Յեզրայէլացի Նաբովթի այգին քուկդ է»։ Կինը անմիջապէս Աքաաբի անուամբ և կնքով նամակ գըրեց նոյն քաղաքի մեծամեծներուն և ծերերուն ու կը պատուիրէր անոնց ըսելով. «Երկու անօրէն մարդու հրամայեցէք որ վկայութիւն տան՝ թէ Նաբովթ՝ Աստուծոյ և թագաւորին հայհոյեց, յետոյ զայն քաղաքէն դուրս տարէք և քարկոծեցէք»։ Քաղաքին մեծամեծները և ծերերը նոյնը ըրին։ Երբ Յեզաբէլ՝ Նաբովթի քարկոծուիլը լըսեց, ըսաւ Աքաաբին. «Ե՛լ ժառանգէ Յեզրայէլացի Նաբովթի այգին, նա այլ եւս կենդանի չէ»։ Աքաաբ իջաւ այգին և ժառանգեց զայն։

Աստուած հրամայեց Եղիային որ երթայ և Աքաաբին ըսէ. «Որովհետեւ դու Նաբովթը ըսպաննել տուիր և այգին ժառանգեցիր, տար փոխարէն՝ այնտեղ ուր շուներ Նաբովթի արիւնը լիզեցին, քու արիւնդ ալ պիտի լիզեն և Յեզաբէլի մարմինն ալ քաղաքին պարիսպներուն վրայ պիտի ուտեն»։

Այս դիպուածէն երեք տարի յետոյ՝ Աքաաբ պատերազմ ունեցաւ Ասորւոց հետ։ Մարդ մը լարեց աղեղը, զարկաւ թագաւորին, նետը զրահէն անցաւ և արիւնը սկսաւ հոսիլ. կառքը արիւնով լեցուեցաւ, թագաւորը երեկոյին մեռաւ եւ մարմինը Սամարիա բերին։ Երբ կառքը աւազանի մը մօտ հասաւ և մարմինը կը լուային, միւս կողմանէ շուները արիւնը կը լիզէին։ Տարիէ մը յետոյ Յէու Իսրայէլի վրայ թագաւորեց և բանակովը Յեզրայէլ քաղաքը տեղափոխուեցաւ։ Յեզաբէլ զարդարուած պատուհանէն դուրս կը նայէր։ Յէու ծառաներուն ըսաւ. «Վար ձգեցէք զայն»։ Երկու մարդ թագուհին վար ձգեցին, որուն արեամբը պատը ներկուեցաւ. ձիերը կոխոտեցին և շուները կերան մարմինը։ Յէու ջնջել տուաւ Աքաաբի տան բոլոր ժառանգները։ Այսպէս Աստուծոյ խօսքը կատարուեցաւ։

Բ.

Եղիա զգաց իր մահուան օրերը և ըսաւ Եղիսէին. «Մնացիր այստեղ, Աստուած զիս Յորդանան կը ղրկէ»։ Եղիսէ ըսաւ. «Վկայ ըլլայ Աստուած կենդանի՝ որ քենէ չեմ բաժնուիր». երկուքն ալ միատեղ գնացին Յորդանան։ Եղիա ըսաւ Եղիսէին. «Մահուանէս առաջ խնդրէ՛ ինձմէ ինչ որ կ՚ուզես»։ Եղիսէ պատասխանեց. «Թող քու հոգիդ կրկնապատիկ իմ վրաս իջնայ»։ Երբ անոնք միասին կ՚երթային, հրեղէն ձիերով լծուած հրեղէն կառք մը իջաւ յերկնից. Եղիա

մէջը նստաւ և մրրիկը զայն երկինք բարձրացուց։ Եղիսէ կը նայէր ետեւէն և կ՚աղաղակէր. «Հա՛յր, հա՛յր, կառքդ Իսրայէլի և հեծեալք նորա» եւ այլ եւս չտեսաւ։

—

«Որ զրպարտէ զտնանկն, բարկացուցանէ զԱրարիչն նորա»: Գիրք Առակաց ԺԴ. 31.

Աղքատը նեղողը՝ անոր Արարիչը կ՚անարգէ:

«Մի՛ խաբիք, Աստուած ոչ արհամարհի. զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեսցէ»: Թ. Գաղ. Զ. 7.

Մի՛ խաբուիք, Աստուած թոյլ չտար որ զինքը արհամարհէք, որովհետեւ մարդ իւր սերմանածը միայն պիտի հնձէ:

69.

Իսրայէլի եւ Յուդայի Թագաւորութեան կործանումը

Ա.

Իսրայէլի որդիքը ստէպ կը մեղանչէին Աստուծոյ դէմ և հեթանոսական կեանք կը վարէին։ Ամեն քաղաքներու մէջ կռատուններ շիներ էին, Բահաղին երկրպագութիւն կ՚ընէին, կը հաւատային վհուկներուն և կախարդներուն, ու անոնց հետ ամեն տեսակ չարութիւն կը գործէին։ Աստուած մարգարէին բերնով կը յայտնէր անոնց ըսելով. «Թողէ՛ք ձեր չարութիւնները,

հեռացէ՛ք անոնցմէ և հետեւեցէ՛ք իմ պատուիրաններուս»։ Բայց անոնք երբեք ուշ չէին դարձըներ այս խօսքերուն, կ՚արհամարհէին պատուիրանները և կը մոռնային այն դաշինքը զոր Աստուած անոնց պապերուն հետ դրեր էր։ Այն ժամանակ Աստուած ալ աչքէ ձգեց զանոնք, ինչպէս որ մարգարէին բերնով յայտներ էր։

Իսրայէլի վերջին Թագաւորը եղաւ Ովսէէ. այս ալ Աստուծոյ ճամբէն չ՚գնաց։ Ասորեստանի Սաղմանասար Թագաւորը պատերազմի ելաւ, Ովսէէ յաղթուեցաւ՝ նորա հպատակ եղաւ և հարկ կը վճարէր. բայց որովհետեւ մէկ կողմանէ Եգիպտոսի Թագաւորին հետ ալ դաշնադրութիւն ըրեր էր եւ միւս կողմանէ տարեկան հարկը կանոնաւորապէս չ՚էր ուղարկեր Ասորեստան, ուստի Սաղմանասար Իսրայէլի Թագաւորութեան վրայ եկաւ և Սամարիան շարունակ երեք տարի պաշարեց, առաւ քաղաքը և Իսրայէլացիները գերի տարաւ Ասորեստան։ Իւր երկրէն ալ բազմաթիւ հեթանոսներ բերել տուաւ և Սամարիայի քաղաքները բնակեցուց։ Միայն Իսրայէլացիք մնացեր էին՝ որոնք Աստուծոյ կը հաւատային։ Հեթանոսները խառնուեցան Իսրայէլացւոց հետ և ասոնցմէ յառաջ եկաւ Սամարացի կոչուած ժողովուրդը՝ որոնք կ՚աղօթէին Աստուծոյ, բայց մի և նոյն ժամանակ կը պաշտէին եւ օտար աստուածներ։

Բ.

Երբոր Սաղմանասար Իսրայէլի Թագաւորութեան վերջ տուաւ՝ զայն կործանելով, Յուդայի

տանը վրայ կը թագաւորէր Եզեկիա, որ Աստուծոյ ճանապարհէն կ՚ընթանար և ինչ որ Աստուծոյ հաճելի էր զայն կը գործէր։ Կործանեց կուռքերու սեղանները և բացաւ Աստուծոյ տաճարին դռները, զորոնք իր հայրը փակել տուեր էր. պատուիրեց Աստուծոյ տաճարը մաքրել և սրբել։ Իսրայէլի և Յուդայի տէրութեանց մէջ դեսպաններ ուղարկեց, և կը հրաւիրէր զամենքը Երուսաղէմ՝ Պասէքի տօնը տօնելու զոր շատոնց չէին կատարեր, և դեսպաններու բերանով յայտնեց. «Ո՛վ Իսրայէլացիք, դարձէք դէպ ի ձեր Աստուածը. Նա ողորմած է, բարի է, իր երեսը ձեզմէ չ՚դարձներ՝ եթէ դուք իրեն անկեղծաբար դիմէք»։ Մեծ բազմութիւն հաւաքուեցաւ Երուսաղէմ, Իսրայէլի թագաւորութենէն ալ մարդիկ եկեր էին։ Հոս ժողովուրդը կործանեց Բահաղի սեղանը և Կեդրոնի ձորակը գլորեց ու եօթըն օր շարունակ Պասէքի տօնը կատարեցին։ Սողոմոնի օրէն մինչեւ այն օրը Երուսաղէմի մէջ այսպիսի ուրախութիւն չ՚էր տեսնուած։ Այսպէս Եզեկիա Աստուծոյ ճամբովը կ՚երթար և Աստուած ալ միշտ կը պաշտպանէր զինքը։ Ասորեստանի նոր թագաւորը Սենեքերիմ՝ յանկարծ Յուդայի թագաւորութեան վրայ յարձակեցաւ, առաւ շատ քաղաքներ և պաշարեց զԵրուսաղէմ։ Դեսպանի միջոցով քաղաքին պարիսպներուն վրայ գտնուող մարդոց յայտնեց. «Ասորեստանի մեծ թագաւորին խօսքին լսեցէ՛ք, Եզեկիային մի՛ հաւատաք որ կ՚ըսէ թէ Աստուած զմեզ կ՚ազատէ. եթէ անոր Աստուածը ազատող ըլլար, ինչո՞ւ ձեր երկիրը չ՚ազատեց Ասորեստանի թագաւորին ձեռքէն»։ Երբ Եզեկիա այս բանը լսեց, պատռեց հանդերձները, գնաց Աստուծոյ տաճարը և մարդ ղրկեց Եսայի մարգարէին ըսելու. «Հեթանոսաց թագաւորը կը նախատէ կենդանի Աստուածը, աղօթէ մեզ համար»։ Եսայի պատասխան ղրկեց ըսելով. «Մի՛ վախնար, որովհետեւ Աստուած այսպէս կ՚ըսէ Ասորեստանի հեթանոս թագաւորին համար. Նա քաղաք չ՚մտնար, այլ կը դառնայ այն ճամբէն ուսկից եկեր էր»։ Նոյն գիշերը Աստուծոյ հրեշտակը Ասորեստանցւոց բանակէն հարիւր ութսուն և հինգ հազար մարդ կոտորեց։ Սենեքերիմ դարձաւ ի Նինուէ։

Եզեկիայի որդին Մանասէ շեղեցաւ վերստին Աստուծոյ ճանապարհէն, սկսաւ կուռքերու երկրպագութիւն ընել և Աստուծոյ տաճարին մէջ Բահաղի համար սեղաններ շինեց. կը պահէր կախարդներ եւ հմայողներ, որոնք ժողովուրդը կը գայթակղեցնէին և զԱստուած աւելի կը բարկացնէին քան թէ հեթանոսները։ Մանասէ շատ անմեղներու արիւնն ալ թափեց։ Մարգարէին բերնով Աստուած ըսաւ անոր. «Ես այնպիսի չարիք պիտի բերեմ Երուսաղէմի և Յուդայի տան վըրայ, որ լողաց ականջները սարսռի»։

Յուդայի տան թագաւորները՝ մին քան զմիւսը վատ եղան. Յովակիմ, որ Յուդայի թագաւորաց մէկն էր, չար ճանապարհով գնաց։ Այն ժամանակ Բաբելոնի Նաբուգոդոնոսոր թագաւորը եկաւ պաշարեց Երուսաղէմը և նորա թագաւորը անձնատուր եղաւ։ Նաբուգոդոնոսոր ա-

ռաւ թէ տաճարին և թէ պալատին գանձերը, բոլոր իշխանները, հիւսները եւ դարբինները գերի տարաւ, նմանապէս թագաւորն ալ իր ընտանեօք Բաբելոն տարաւ. Մնացին միայն աղքատները, որոնց վրայ Յովակիմի տեղ Սեդեկիան թագաւոր դրաւ։

Սեդեկիա ալ Աստուծոյ ճամբովը չ'գնաց, ապըստամբեցաւ Նաբուգոդոնոսորի դէմ։ Բաբելոնի թագաւորը երկրորդ անգամ Երուսաղէմի վրայ եկաւ իր բոլոր զօրութեամբ, քաղաքին չուրջը պարիսպ շինեց ու պաշարեց մէկ ու կէս տարի. սովը սաստկացաւ քաղքին մէջ։ Սեդեկիա և քովինները գիշերանց փախան քաղաքէն. բայց թշնամիները բռնեցին զինքը և Նաբուգոդոնոսորի առջեւ տարին, որ այսպէս դատաստան կարեց. Սեդեկիայի որդիքը նորա աչքին առջեւը մորթել տուաւ, զինքը կուրացուց՝ շղթաներով կապեց և Բաբելոն տարաւ։ Նոյն գիշերը յորում Սեդեկիա Բաբելոն ղրկուեցաւ, թշնամիները մըտան Երուսաղէմ, կոտորեցին բնակիչները, կողոպտեցին ամեն ինչ, այրեցին Աստուծոյ տաճարը, թագաւորին պալատը և քաղաքին պարիսպներն ալ կործանեցին ու գետնի հաւասար դարձուցին։ Մնացած ժողովուրդը և բոլոր գանձերը՝ Նաբուգոդոնոսոր Բաբելոն տանել հրամայեց, և այսպէս Յուդայի տունը կործանեցաւ։

—

«Արդարութիւն զազգ բարձրացուցանէ, նուազեցուցանեն զազգս մեղք։» Առակք. Սող. ԺԴ. 34.

« Սէր յաւիտենական սիրեցի զքեզ, վասն այնորիկ ձգեցի զքեզ ի գթութիւն »։ Երեմիա. ԼԱ. 3.

Յաւիտենական սիրով սիրեցի զքեզ՝ ասոր համար ալ զքեզ ինձ մօտ բերի։

70.

Բաբելոնի գերութիւնը եւ վախճանը

Ա.

Նաբուգոդոնոսոր թագաւորը հրամայեց որ Իսրայէլացիներէն այնպիսի երախաներ ընտրեն որոնք արատ չ'ունենան, գեղեցկադէմ ըլլան եւ ընդունակ՝ թագաւորին ծառայելու և սորին քաղդէացւոց գիրն ու լեզուն։ Ասոնց մէջն էր Դանիէլ իր երեք ընկերներով։ Թագաւորը հրամայեց որ իր սեղանէն կերակրեն զանոնք եւ խմած գինիէն խմցնեն։ Բայց Դանիէլ և երեք ընկերները որոշեցին թագաւորական սեղանի կերակուրէն չ'ուտել, վասն զի Մովսէսի օրէնքին հակառակ էր. ուստի խնդրեցին ներքինապետէն թոյլ տալ իրենց՝ միայն կանանչեղէն ուտել և ջուր խմել։ Ներքինապետը տասը օր ժամանակ տուաւ զանոնք փորձելու և տեսաւ որ աւելի գեղեցկացան քան թէ թագաւորին սեղանէն ուտողները։ Աստուած Իսրայէլի մանկանց՝ հանճար եւ իմաստութիւն, իսկ Դանիէլին՝ երազ մեկնելու շնորհ պարգեւեց։ Թագաւորը ժամանակէ մը յետոյ հարց ու փորձ ըրաւ, խօսեցուց և գիտեց որ անոնք տասն անգամ աւելի հանճարեղ, ի-

մասուն են ամեն բանի մէջ, քան թէ իր բովանդակ թագաւորութեան մէջ եղող աստեղագէտները և մոգերը։ Թագաւորը Դանիէլին եւ իր երեք ընկերաց Բաբելաստանի մէջ մեծ պաշտօններ յանձնեց։

Այնուհետեւ Նաբուգոդոնոսոր ոսկիէ արձան մը շինել տուաւ, կանչեց իր մեծամեծները եւ Բաբելոնի ժողովուրդը ու ըսաւ. «Երբ փողի ձայնը կը լսէք, պէտք է որ ծունր դնէք և երկրպագութիւն ընէք իմ ոսկիէ արձանիս առջեւ. իսկ ո՛վ որ հրամանիս չհնազանդի՝ կրակով բորբոքած հնոցին մէջ պիտի ձգուի»։ Փողը հնչելուն պէս ամենքն ալ գետնի վրայ ընկան և արձանին երկրպագութիւն ըրին։ Քաղդէացւոցմէ ոմանք թագաւորին գանգատեցան՝ Դանիէլի և իր երեք ընկերացը համար ըսելով. «Ասոնք կ'անպատուեն հրամանդ և կանգնած ոսկի արձանիդ երկրպագութիւն չ'են ըներ»։ Նաբուգոդոնոսոր սաստիկ բարկացաւ, կանչել տուաւ երեքն ալ եւ ըսաւ. «Եթէ դուք իմ արձանիս երկրպագութիւն չ'ընէք՝ անմիջապէս զձեզ ձգել կուտամ բորբոքած հնոցին մէջ. տեսնեմ թէ ո՞ր աստուածն է որ զձեզ իմ ձեռքէս պիտի ազատէ»։ Պատասխանեցին և ըսին. «Մեր Աստուածը զմեզ կ'ազատէ և եթէ չ'կարենայ ազատել՝ գիտցիր որ դարձեալ մենք քու արձանիդ երկրպագութիւն չ'ենք ըներ»։

Նաբուգոդոնոսոր աւելի եւս բարկացաւ, հրամայեց հնոցին կրակը սաստկացնել, և երեքն ալ պարաններով կապել տալով բորբոքած հնո-

ցին մէջ ձգել տուաւ։ Թագաւորը նայեցաւ վըրանին, զարհուրեցաւ, հարցուց խորհրդականին և ըսաւ. «Չէ՞ որ մենք երեք մարդ կապուած ձգեցինք հնոցին մէջ և այժմ ես չորս կը տեսնեմ, որոնք ազատութեամբ և անվտանգ կը շրջին բոցերուն մէջ. իսկ չորրորդին կերպարանքը աստուածներուն որդւոց կերպարանքին նման է»։ Թագաւորը հնոցին մօտեցաւ և ըսաւ. «Ո՛վ ծառայք Աստուծոյ. դուրս եկէք հնոցէն»։ Անմիջապէս դուրս ելան և կրակը անոնց ո՛չ մէկ մազն այրած և ոչ ալ զգեստներնին խանձած էր։ Նաբուգոդոնոսոր ըսաւ. «Օրհնեալ է այն Աստուածը, որ ուղարկեց իր հրեշտակը և ազատեց իր վրայ յոյս դնող ծառայները։ Այսուհետեւ իմ հրամանս է, ո՛վ որ այս մարդոց Աստուածը անարգէ, կտոր կտոր ըլլայ»։ Թագաւորը Բաբելոնի աշխարհին մէջ՝ երեքին ալ մեծ իշխանութիւն տուաւ։

Բ.

Օր մը Նաբուգոդոնոսոր երազ տեսաւ, երբ արթնցաւ՝ շատ վախցաւ։ Կանչել տուաւ բոլոր մոգերը, հմայողները և կախարդները որ երազը մեկնեն, որոնք ըսին թագաւորին. «Պատմէ մեզ երազդ որ մեկնենք»։ Թագաւորը պատասխանեց. «Երազը մոռցեր եմ, եթէ դուք չէք գտներ և մեկներ, ամենքդ մահու պատիժ կ'առնաք»։ Պատասխան տուին թէ «Երկրիս վրայ մարդ չկայ, որ թագաւորին պահանջածը գիտ-

նայ. այդ անկարելի բան է»։ Նաբուգոդոնոսոր շատ բարկացաւ և հրամայեց որ Բաբելոնի իմաստունները կոտորեն։ Երբ Դանիէլ այս վճիռը իմացաւ, խնդրեց որ իրեն ժամանակ տան. տուն գնաց և ընկերացը հետ կ'աղօթէր Աստուծոյ։ Երազին գաղտնիքը տեսիլքին մէջ յայտնուեցաւ Դանիէլին։ Դանիէլ կ'օրհնէր և կը փառաբանէր Աստուծոյ անունը։ Գնաց Թագաւորին քով և ըսաւ. «Այն գաղտնիքը զոր Թագաւորը կը պահանջէ իմաստուններէն, միայն երկնքի Աստուածը կարող է յայտնել և նա կը յայտնէ թէ ինչ պիտի պատահի ապագային մէջ։ Ո՛վ Թագաւոր, դու երազիդ մէջ տեսեր ես մեծ արձան մը. անոր գլուխը զուտ ոսկի էր, կուրծքը և բազուկները արծաթէ, մէջքը ու իրանունքը պղնձէ, սրունքները երկաթէ, ոտից մէկ մասը երկաթէ եւ միւս մասը կաւէ։ Այս արձանէն քար մը զատուեցաւ առանց ձեռք դպչելու, դիպաւ արձանին ոտից և կոտրեց։ Այն ժամանակ փշրուեցան երկաթը, կաւը, պղինձը, արծաթը, ոսկին եւ անհետացան. իսկ այն քարը մեծացաւ լեռան չափ և լցուց բոլոր երկիրը։ Երազդ այս է, իսկ այժմ ալ անոր մեկնութիւնը. — Դու Թագաւորաց Թագաւորն ես, դու ես այն ոսկիէ գլուխը. քենէ յետոյ ուրիշ Թագաւորութիւն մը պիտի գայ որ քու Թագաւորութենէդ ստորնագոյն պիտի ըլլայ. յետոյ երրորդ Թագաւորութիւն մը որ պղնձէ է. չորրորդը՝ երկաթի նման խիստ պիտի ըլլայ և ամեն բան պիտի փշրէ, ջարդէ. սա ալ մասամբ զօրեղ և մասամբ թոյլ պիտի ըլլայ։

Այն ժամանակ Աստուած, յերկնից նոր Թագաւորութիւն մը պիտի յարուցանէ որ փշրէ, վերջացնէ այս բոլոր Թագաւորութիւնները, եւ այն Թագաւորութիւնը յաւիտեան վերջ չպիտի ունենայ։» Նաբուգոդոնոսոր երեսի վրայ ընկաւ և ըսաւ. «Յիրաւի որ ձեր Աստուածն է՝ Աստուածոց Աստուածը, Թագաւորաց տէրը և գաղտնեաց յայտնողը»։ Թագաւորը Դանիէլին աստիճանը բարձրացուց և շատ պարգեւներ տուաւ, ու իշխան կարգեց ամբողջ Բաբելոնի գաւառին և քաղաքին բոլոր իմաստուններուն վրայ։

Գ.

Նաբուգոդոնոսորէ վերջը՝ երբ Բաղդասար Բաբելոնի վրայ կը Թագաւորէր, Պարսից Կիւրոս Թագաւորը իւր բոլոր զօրութեամբը եկաւ պաշարեց քաղաքը և կ'ուզէր առնուլ։ Այդ միջոցին Բաղդասար Թագաւորը մեծ խնջոյք ունէր, ուր հրաւիրուած էին Թագաւորութեան բոլոր մեծամեծները։ Ճաշի ժամանակ հրամայեց՝ որ Նաբուգոդոնոսորի օրով Երուսաղէմէն աւար բերուած ոսկեայ սրբազան անօթները բերեն և անոնցմով կերուխում ընեն։ Երբ բերին՝ սկսան խմել թէ մեծամեծները և թէ կանայքը։ Գինին կը խմէին և կը փառաբանէին ոսկեայ, արծաթի, պղնձի, երկաթեայ, փայտեայ և քարէ չաստուածները։ Նոյն ժամուն յանկարծ երեւցան մարդկային ձեռքի մատներ՝ որք արքունի դահլճին պատին վրայ կը գրէին։ Թագաւորը երբ ձեռքը նշմարեց, գոյնը փոխուեցաւ, ոտները սկսան դողդղալ. անմիջապէս կանչել տուաւ մոգերը։

Մօգերը եկան, բայց անոնցմէ ոչ մէկը կարողացաւ կարդալ եւ մեկնել։ Այս բանէն Թագաւորը աւելի վախցաւ եւ սարսափը պատեց մեծամեծները։ Թագուհին յիշեցուց Թագաւորին՝ Դանիէլի իմաստութիւնը։ Դանիէլ կանչուելով ըսաւ Թագաւորին. «Որովհետեւ դու մեծամտեցար և արհամարհեցիր երկնից Աստուածը, ատոր համար նա այդ ձեռքը և այդ գիրերը ուղարկեց։ Գըրուածքը այս է. մանէ, թեկէղ, փարէս, այսինքն չափեցի, կշռեցի և բաժնեցի։ Քու Թագաւորութեանդ օրերը չափուած են. դքեզ կշռեցին եւ թեթեւ գտան. քու Թագաւորութիւնդ կը բաժնուի և Պարսիկներուն կը տրուի։ Նոյն գիշերը Բաղդասար սպաննուեցաւ, Պարսից Կիւրոս Թագաւորը առաւ քաղաքը եւ Բաբելացւոց Թագաւորութեան տիրեց։

Դ.

Կիւրոսի Թագաւորութեան առաջին տարին Աստուած յուզեց Թագաւորին սիրտը, այնպէս որ նա հրաման հանեց ամբողջ Թագաւորութեան մէջ՝ ըսելով. «Երկնքի Աստուածը՝ Եհովան ինձ տուեր է բոլոր Թագաւորութիւնները. ինքն հրամայեց որ Երուսաղէմի մէջ իրեն համար տաճար մը շինեմ։ Այժմ ո՛վ որ ինքզինքը անոր ժողովուրդէն կը համարի, թող Երուսաղէմ երթայ և Աստուծոյ տաճարը կառուցանէ»։ Այն ժամանակ ոտք ելան Յուդայի և Բենիամինի տան տոհմապետները, քահանայները և Ղեւտացիները, առ-

հասարակ այն անձինք որոց հոգին զարթոյց Աստուած. իսկ անոնք որոնք չկարողացան դառնալ, տուին գնացողաց՝ արծաթեայ եւ ոսկեայ անօթներ եւ ուրիշ ստացուածներ։ Կիւրոս Թագաւորըն ալ յանձնեց Աստուծոյ տաճարին անօթները, որոնք Նաբուգոդոնոսոր Երուսաղէմէն բերեր էր։ Հայրենիք դարձողաց թիւը քառասուներկու հազարէն աւելի էր, ի բաց առեալ անոնց ծառայները եւ աղախինները։ Ասոնց առաջնորդներն էին Դաւթի տնէն Զօրաբաբէլ, Յեսու եւ Քահանայապետը։ Երուսաղէմ հասնելուն պէս՝ սեղան կազմեցին և զոհ մատուցին Աստուծոյ։ Երկրորդ տարին սկսան արդէն տաճարը կառուցանել։ Հիմը ձգած ժամանակ՝ քահանայք զգեստաւորուած էին եւ փողեր ունէին։ Ղեւտացիները ծնծղաներով կ՚օրհնէին և կը փառաբանէին զԱստուած Դաւթի երգերով։ Ամբողջ ժողովուրդը կ՚երգէր, և ամէնքը միասին կը գովէին եւ կ՚օրհնաբանէին զՏէր՝ որ բարի է եւ իւր ողորմութիւնը յաւիտեան է Իսրայէլի վրայ։ Իսկ ծերոց շատերը որոնք հին տաճարը տեսեր էին՝ դառնապէս կուլային։

Երբ Սամարացիք իմացան որ գերութենէ դարձող Հրէայք սկսեր են Աստուծոյ համար տաճար շինել, եկան Զօրաբաբէլի եւ ժողովրդեան տոհմապետներուն եւ ըսին. «Մենք ալ կ՚ուզենք Աստուծոյ տաճարին շինութեան մասնակից ըլլալ»։ Իսկ անոնք պատասխան տուին. «Չվայլեր ձեզ եւ մեզ միասին՝ մեր Աստուծոյ տաճարը կառուցանել, մենք կ՚ուզենք միայնակ շինել»։ Այդ օրէն սկսեալ Սամարացիք կ՚աշխատէին խանգ-

րել շինութիւնը եւ ժողովուրդը պաղեցնել, բայց Աստուած իր ժողովրդեան հետն էր։ Աւարտեցին տաճարը եւ մեծ հանդէսով և ուրախութեամբ օծեցին։ Այնուհետեւ Պասեքի տօնն ալ կատարեցին, վասն զի Աստուած անոնց սիրտը ուրախացուցեր էր։

Քանի մը տարի յետոյ Եզրաս, որ ընդունակ եւ գիտնական մարդ մ'էր, դարձաւ Երուսաղէմ. ասոր հետ եկան շատ մը քահանայներ եւ Ղեւտացիներ ու մեծ բազմութիւն մը ժողովրդեան։ Եզրաս վերականգնեց աստուածպաշտութեան կարգը Մովսէսի գրուածներուն համաձայն, եւ հաւաքեց այն բոլոր գրուածքները՝ որոնք Մովսէսէ սկսեալ յայտնի էին։ Ժողովուրդէն ոմանք հեթանոս կանայք ունէին։ Եզրաս Աստուծոյ անուամբ պատուիրեց անոնց որ բաժնուին իրենց կանանցմէ եւ բաժնուեցան։

Պարսից Թագաւորին տակառապետը Նէեմի՝ Յուդայի տանը քանի մը մարդոցմէ լսեց որ Երուսաղէմի պարիսպները կործանած են։ Գնաց իր Թագաւորին քով եւ ըսաւ. «Եթէ քեզ հաճելի է, թո՛յլ տուր, արձակէ՛ ծառադ որ երթամ եւ հարցս քաղաքը շինեմ»։ Թագաւորը թոյլ տուաւ անոր. Նէեմի վերադարձաւ հայրենիք եւ խօսեցաւ ժողովրդեան տոհմապետաց հետ, ըսկըսաւ քաղաքին պարիսպները եւ դռները շինել։ Երբ զայս իմացան Սամարացիք, հաւաքուեցան, խումբ կազմեցին եւ սկսան պատերազմիլ Հրէից հետ։ Նէեմի ըսաւ. «Մեր Աստուածը՝ մեր տեղը կը պատերազմի», եւ պահապաններ նշանա-

կեց թշնամեաց դէմ որ գիշեր և ցորեկ հսկեն։ Հրէայներէն կէսը զինուորուած՝ զէն ի ձեռին, սուրերով, նիզակներով, աղեղով և նետով կը պատերազմէին. իսկ միւս կէսը պարիսպները կը կառուցանէին։ Ամեն աշխատաւոր սուրը մէջքն էր կապած։ Այսպէս մէկ ձեռքով կաշխատէին, միւսով զէնք կը շարժէին. այս ձեւով աւարտեցին քաղաքին պարիսպները։ Յետոյ Նէեմի բոլոր ժողովուրդը Յուդայի քաղաքներէն Երուսաղէմ հաւաքեց։ Եզրաս դուրս բերաւ Մովսէսի Օրինաց գիրքը, ելաւ ժողովրդեան առաջ և կը կարդար առաւօտէն մինչեւ երեկոյ։ Ժողովուրդը կ'արտասուէր օրինաց խօսքերը լսած ատեն։ Եզրաս ըսաւ. «Եկէք Աստուծոյ հետ հաստատ դաշինք մը կնքենք»։ Խոստովանեցան իրենց յանցանքը և երդուընցան որ Աստուծոյ օրինաց համաձայն վարուին և իր պատուիրանքները պահեն յաւիտեան։

—

« Որ համբերեացն իսպառ, նա կեցցէ »։ Մատթ. ԻԴ. 13.

Ով որ մինչեւ վերջը համբերէ՝ նա կը փրկուի։

« Ո՛չ սպառնալեօք իմովք շարժել զլերինս և փոփոխել զբլուրս։ Ոչ ողորմութիւն իմ պակասեսցի ի քէն և ոչ ուխտ խաղաղութեան քո անցցէ »։ Եսայի. ԾԴ. 10.

Լեռները կը շարժին և բլուրները կը սասանին. բայց իմ ողորմութիւնս քեզմէ չպակսիր և խաղաղութեանս ուխտը չսասանիր։

ՎԵՐՋ

448
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0026908
0026908
950

Կ. Պոլիս Էսքի Զապթիէ ճատտէսի, թիւ 61 Նշան Կ. Պէրպէրեանի տպագրատունը կը գտնուին Մ. Մ. Մամուրեան էֆէնտիի հետեւեալ դասական և ուրիշ զանազան գրեանք։

Նաև Ղալաթիա, Սեղբոս խան, թիւ 5, «Բիւզանդեան գրատուն»ը՝ որ բաց է ամեն օր։

	Ղրշ.	Փրյ
Արաքսիա (վէպ) Տիկին Տիւսար փաշայի	15	
Բարոյախօսութիւն զկանանց, Էռնէսթ Լըկուվէ	15	
Սեւ Հնդկաստան, Ժիւլ Վէրն	6	
Ֆէրնանտ Ա. Տիւմա	10	
Քերականութիւն Մայրենի լեզուի, Ն. Տ. Ղեւոնդ. Մասն Ա.	2	
Քերականութիւն Մայրենի լեզուի, Ն. Տ. Ղեւոնդ. մասն Բ.	3	
Ս. Պատ. Հին Ուխտի. Սահակեանց	4	
» Նոր » »	3	
» Դասագիրք կրօնի Ուսուցչաց համար }	27	
» » » Բանալի		
Աշխ. Պատ. Մ. Մամուրեան	5	
Ա. Ընթերցարան Մ. Մամուրեանի	2	
Բ. » » »	2	20
Առողջաբանութիւն աղջկանց....	5	
Բանալի շարադրութեան	3	
Գիտելիք պարտիք	5	
Ընդհ. ազգաց պատմութիւն Ա.	5	
» » » Բ.	12	
Իրաւաբանութիւն »	5	
Առեւտրական Թուաբանութիւն	8	
Ա. և Բ. Հատոր Օսմ. Պատմութիւն	8	
Նոր քերական պատկերազարդ		30
Ուսումն Քրիստոնէական Հաւատոյ Խանճեան	1	20
Առտնին Տնտեսութիւն	8	
Պարտէզ Հոգեւոր պատկերազարդ	5	

ԳԻՆ 4 ԴԱՀԵԿԱՆ